2065

91441
P-14

1907

24 JAN 2006

10 NOV 2011

Հրատարակ. կ. Ալեքսանդրոպոլ Հայ Հրատարակչ. Գրատպարան կամ Ալեքսանդրապոլ գրատպարան.
Բ/Ֆ/Ա

9(44)
Ռ-14 ստ.

1004
47677

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

ՄԵԾ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ.

Կազմեց Յովս. Թադէոսեանց.

ТИФЛИСЪ
Электропечатня „ГЕРМЕСЪ“ С. П. Едигарова
Մատար. փող. № 5. 1907

(13)

17 APR 2013

Գագուի Հայոց
Հոիփսիմեան Դպրոց
Էջմ.-Ծխակ. (օրիորդաց)

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

1789 թ. ֆրանսիական յեղափոխութիւնը ներկայացնում է մարդկութեան պատմական կեանքի մէջ ամենամեծ անցքերից մէկը, հարուստ իր խոշոր ու բեղմնաւոր հետևանքներով։ Եւրոպական մեծ ու փոքր ազգերի XIX դարի ամբողջ պատմութիւնը կրում է նրա անջնջելի կնիքը։ Այդ պատմութիւնը կը մնայ միշտ terra incognita (անծանօթ աշխարհ) ամեն մէկի համար, ով չը գիտէ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։ Այդ յեղափոխութիւնն է, որ ստեղծել է ժամանակակից դեմոկրատիան ու կապիտալիզմը. այդ յեղափոխութիւնն է, որ քաղաքական ասպարէզ հանեց արդի բուրժուազիան, յետ մղելով մարդկային կեանքի թատերաբեմից ֆէօդալական արիստօկրատիան, որ կաշկանդել էր մարդու ստեղծագործող միտքը միջնադարեան ճնշող կապանքներով. այս յեղափոխութիւնն էր, որ նորոգեց, թարմացրեց ու նոր ոգի ներշնչեց մարդկութեանը, տալով նրան ազատութեան, եղբայրութեան ու հաւասարութեան ջինջ ու վսեմ իդէալը։

Ծանօթացնել հայ ընթերցող հասարակութիւնը ընդհանուր գծերով այդ համաշխարհային երևոյթի գլխաւոր ելևէջների հետ՝ ահա ներկայ գրքոյկի հրատարակութեան համեստ նպատակը։ Այս գրքոյկը պիտի ընդունել իբրև ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան հակիրճ ամփոփումն և ոչ նրա իսկական պատմութիւնը։ Այնուամենայնիւ, թւում է, որ այդ ձևով ևս ներկայ աշխատանքը անօգուտ չի անցնի, մանաւանդ, եթէ ի նկատի առնելու լինինք, որ հայ գրականութեան մէջ չկան յատուկ

աշխատութիւններ—ինքնուրոյն թէ թարգմանական պատմական այդ խոշոր անցքի մասին։

Այս գրքոյկը մի կոմպիլացիա է, որը կազմելու ժամանակ օգտուել ենք հետեւեալ աշխատութիւններով.

1. Токвиль—Старый порядокъ и революція.
2. В. Блосъ—Исторія франц. революціи.
3. Минье—Исторія франц. революціи.
4. Л. Гейсеръ—Исторія франц. революціи.
5. О. Берви—Борьба за свободу во Франціи (подъ редакц. проф. Иванюкова).
6. Жанъ Жоресъ—Исторія франц. революціи. Вып. I.
7. Законодательные акты Франціи, изд. книгоизд. „Молотъ".
8. В. Герье—Лекціи по франц. революціи.
9. Какъ французы добыли себѣ свободу. Изд. „Дон. Р."

Ֆ. Թ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Յեղափոխութիւնը ճնշած ու կեղեքած ժողովուրդների վերջին ապաստանն է։

Տոկվիլ։

Երբ կառավարութիւնը խախտում է ժողովրդի իրաւունքները՝ ապստամբելը դառնում է մի սրբազան իրաւունք ու անժխտելի պարտականութիւն թէ ամբողջ ժողովրդի և թէ նրա իւրաքանչիւր մասի համար առանձնապէս։

«Մարդու եւ քաղաքացու իրաւունքների դեկլարացիան» յօդ. 35.

Պատմութեան մէջ կան այնպիսի դժբախտ էպոխաներ, երբ բարեկարգումները առաջ չեն գալիս կանոնաւոր զարգացմամբ, երբ նոր ժամանակի ու պատմական հնութեան մնացորդների պահանջների միջև կայ այնպիսի հակասութիւն, որ կարելի է վերացնել միայն բռնութեամբ։ Այդպիսի բռնութիւն կատարուեց հին աշխարհում գերմանացիների միջոցով, իսկ 18-դ դարում ֆրանսիական մեծ յեղափոխութեամբ։

Դրաճովսկի։

Ֆրանսիան յեղափոխութիւնից առաջ գտնուում էր այժմեանից բոլորովին տարբեր քաղաքական—սոցիալական պայմանների մէջ, սակայն մի երևոյթ յատուկ էր հին Ֆրանսիային այնպէս, ինչպէս նա յատուկ է նոր Ֆրանսիային և առհասարակ ամեն մի երկրին։ Դա՝ դասակարգերի բաժանումն է, որ կազմում է իւրաքանչիւր հասարակական կեանքի հիմնաքարը։

«Պատմութիւնը, ասում է հռչակաւոր գիտնական Կարլ Մարքսը, հասարակական դասակարգերի կռուի պատմութիւնն է»։

Եւ արդարև. պատմական բոլոր շրջաններում, բոլոր երկիրների ու ժողովուրդների մէջ միշտ իրար դէմ յանդիման կանգնած են երկու դասակարգ. մէկը՝ աշխատաւոր, միւսը՝ աշխա-

տաւորի ձեռքի պտուղները վայելող. մէկը՝ ապահով, միւսը՝ չքաւոր. մէկը՝ հարստահարող ու կեղեքող, միւսը՝ հարստահարւող ու կեղեքւող։ Մի կողմից միլիոնաւոր մարդիկ, դատապարտւած մշտական աշխատանքի, հազիւ են կարողանում պահպանել իրանց գոյութիւնը, միւս կողմից՝ մի բուռն շահագործողներ, տրւած անգործութեան, վայելում են կեանքի ամեն բարիքները .. Մինչդեռ ժողովրդական մասսաները գալարւում են ծայրայեղ կարիքի ճիրաններում, հարստահարողների մի փոքրիկ խումբ լողում է անսահման զեղխութեան ու շռայլութեան մէջ... Դա է դասակարգային հասարակութեան կեանքի անարդար ու դաժան օրէնքը։ Դրա շնորհիւ է, որ հակառակ դասակարգերը մշտապէս մղում են անհաշտ կռիւ, իսկ այդ կռիւը միշտ էլ վերջանում է գոյութիւն ունեցող հասարակական կարգերի բռնի յեղաշրջումով։ Հէնց այդպիսի մի յեղաշրջում տեղի ունեցաւ Ֆրանսիայում 1789 թ., երբ կործանւեց արտօնեալ դասակարգերի իշխանութիւնը, իսկ դրա հետ միասին նաև տիրող սոցիալական ու քաղաքական կարգերը՝ ֆէօդալիզմն ու միապետութիւնը։

Ներկայ գրքոյկի նպատակն է ցոյց տալ, թէ ինչպէս կատարւեց այդ մեծ յեղափոխութիւնը. ինչ դրութեան մէջ էր գտնւում Ֆրանսիան մինչև 1789 թ. ինչ դասակարգեր կային և ինչպիսի յարաբերութիւնների մէջ էին նրանք. ինչպէ՞ս սկսւեց յեղափոխութիւնը, ինչ ընթացք նա ստացաւ, ինչպէս վերջացաւ և, վերջապէս, ինչ հետևանքներ նա ունեցաւ։

I.

ՖՐԱՆՍԻԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ.

Ֆրանսիական հասարակութիւնը յեղափոխութիւնից առաջ բաղկացած էր երեք մեծ դասակարգերից՝ հոգևորականութիւնից, ազնւականութիւնից ու բուրժուազիայից կամ ինչպէս ժամանակակից Ֆրանսիացիներն էին ասում՝ «երրորդ դասից» (Le tiers état)։ Վերջինս, որ ամենախոշոր դասակարգն էր, կազմում էր ժողովրդի իրաւազուրկ մասսան, սկսած հարուստ կապիտալիստից մինչև աղքատ գիւղացին. այս դասակարգին էին պատկանում նաև

փաստաբանները, բժիշկները, արհեստաւորներն ու բանւորները։ Բոլոր երեք դասակարգերի համեմատական քանակութիւնը խիստ տարբեր էր։ Ֆրանսիայի 26 միլիոն ազգաբնակութեան մէջ առաջին երկու դասակարգը, որ վայելում էր ամեն տեսակ արտօնութիւններ, կազմում էր մի չնչին փոքրամասնութիւն, այն է՝ ընդամենը՝ 270 հազար բնակիչներ, որոնցից 140 հազարը ազնւականներն էին, իսկ 130 հազարը՝ հոգևորականներ *), այսինքն՝ 100 բնակչին գալիս էր մի հոգի արտօնւած դասակարգից...

Այժմ տեսնենք, թէ ինչ արտօնութիւններ էին դրանք վայելում Ֆրանսիայում 1789 թ. առաջ։ Մենք, իհարկէ, չենք կանգ առնի հազարաւոր մանրամասնութիւնների վրայ, որովհետև մեզ համար նշանակութիւն ունի հին Ֆրանսիայի սոցիալ-քաղաքական կեանքի միայն ընդհանուր պատկերը։

Ինչ ասել կուզի, որ հարկերը ամբողջովին ծանրացած էին երրորդ դասակարգի վրայ։ Հոգևորականութիւնը բոլորովին ազատ էր այդ պետական ընդհանուր պարտականութիւնից. նա վճարում էր տէրութեան համեմատած իր անգին կարողութեան հետ, մի չնչին գումար, այսպէս կոչւած «յօժար տուրք»։ Ազնւականութիւնն էլ ամենածանր հարկերը չէր տալիս, իսկ միւսներից սովորաբար հարպիկութեամբ խուսափում էր։ Մի խօսքով հարկերի բաշխումը չափազանց անհամաչափ էր. հարկատուութեան մէջ չկար հաւասարութիւն։

Միևնոյն ժամանակ ազնւականութիւնն ու հոգևորականութիւնը թալանում էին արքունի գանձարանը։ Թագաւորը յաճախ վճարում էր հարկերից ստացած փողերով իր սիրելիների, ֆաւորիտների՝ պալատական իշխանների պարտքերը։ Պետական ծառայութեան, զօրքի, արքունիքի, եկեղեցական վարչութեան մէջ եղած բոլոր ամենալաւ ու արդիւնաւոր պաշտօնները, որոնք չէին պահանջում համարեա ոչ մի աշխատանք, բացառապէս ստանում էին ազնւականներն ու բարձր հոգևորականները։

Զինուորները, օրինակ, ամբողջ ամիսներ սպասում էին իրանց ռոճիկների ստանալուն, իսկ սպաները վարում էին զեղխ ու շռայլ կեանք։

---

*) 130 հազար հոգևորականներից 60,000-ը ծխական քահանաներ էին, 23,000-ը՝ աբեղաներ, 37,000-ը՝ կոյսեր և միայն 10,000-ը բարձր հոգևորականներ...

Ծանր էին մանաւանդ ազնուականների այն արտօնութիւններն ու մենաշնորհումները, որոնց ծանր լծի տակ հեծում էր Ֆրանսիայի հասարակութեան ամենաստուար մասը՝ գիւղացիութիւնը։ Ազնուականների, որպէս աւատական իշխանների, այդ արտօնութիւնները ոչ միայն անտեսապէս քայքայում էին գիւղացուն, այլ և անարգում, ստորացնում նրա մարդկային արժանաւորութիւնը։ Ֆրանսիացի շինականի սիրտը տարիների ընթացքում լցուել էր վրէժխնդրութեան, սոսկալի ատելութեան զգացմունքով դէպի կալւածատէրը։

Ճիշտ է գիւղացիական մասսան արդէն ազատուել էր ճորտական ստրկութիւնից, բայց և այնպէս 1789 թ. դեռ մօտ մի միլիոն ճորտեր կային։

Ճորտութիւնից դուրս գիւղացիութիւնը տանջւում էր ազնուականների բազմաթիւ «իրաւունքներից»։ Այսպէս օրինակ, ամբողջ Ֆրանսիայում ազնուականներին էր պատկանում որսորդութեան իրաւունքը։ Նրանք իրանց հաճոյքի համար պահում էին որսի կենդանիներ ու թռչուններ. սրանք փչացնում էին գիւղացու արտերը, իսկ գիւղացին չէր կարող պաշտպանել իր քրտինքով վարած աշխատանքի պտուղները, որովհետև օրէնքով նրան մահւան պատիժ էր սպառնում, եթէ նա համարձակւէր մի նապաստակ անգամ սպանել...

Գիւղացին, բացի պետական հարկերից, վճարում էր կալւածատիրոջ մի շարք տուրքեր, մէկը միւսից ծանր, մէկը միւսից վիրաւորական... Այսպէս, գիւղացին իրաւունք չունէր իր ցորենը աղալու իր ջրաղացում, այլ անպատճառ պիտի տանէր կալւածատիրոջ ջրաղացը, որտեղ, ի հարկէ, պիտի վճարէր որոշ տուրք. նա պարտաւոր էր հաց թխել կալւածատիրոջ թոնիրում. նա իրաւունք չունէր աղաւնանոցներ ու աղաւնիներ պահելու։ Գիւղացին չէր կարող խաղողաքաղից յետոյ նոր գինի ծախել աւելի առաջ, քան կալւածատէրը. նա պարտաւոր էր սպասել մի ամբողջ ամիս։ Ամեն անգամ, երբ գիւղացին հող էր առնում կամ ծախում, ստիպւած էր վճարելու կալւածատիրոջ մի որոշ տուրք (drois des lods et ventes)։ Ճանապարհները ամբողջ Ֆրանսիայում շինւում էին գիւղացիների ձրի աշխատանքով (corvée). դա բաւական չէր. գիւղացիներն էլ բացառապէս պիտի վճարէին առանձին տուրք այդ ճանապարհներով օգտւելիս։

Ազնուականների այս և շատ ուրիշ մենաշնորհումների հետ միասին կապւած էին և այնպիսի միջնադարեան արտօնութիւններ, ինչպիսիք էին «առաջին հաւբոյրի» ու «առաջին գիշերւայ» կամ գորտերի կռկռոցից պաշտպանւելու իրաւունքները... Գիւղացիները իրանց կռկռոցով չը խանգարէին պարոնի գիշերւայ քունը... Նոյն արտօնութիւնները վայելում էին և հոգևորականները. գտնւած լճակի ափը ու փայտերով խփել ջրին, որպէսզի գորտերը իրանց կռկռոցով չը խանգարէին պարոնի գիշերւայ քունը...

Բացի այդ հոգևորականութիւնն ստանում էր գիւղացիներից «տասնորդը», որ յաճախ կազմում էր հողից ստացած արդիւնքի 1/5-դ և նոյն իսկ 1/3-դ մասը*)։

Ահա թէ ինչպէս է նկարագրում հռչակաւոր պատմաբան Տօկվիլը Ֆրանսիացի գիւղացու կացութիւնը 18-դ դարի վերջում։

«Գիւղացին մի բաղձանք ունի՝ հող ձեռք բերել,—և նա միջոցներ չէ խնայում դրա համար. նա ծախում է սև օրւան համար խնայած գրօշները, միայն թէ հող ստանայ։ Բայց հող առնելիս նա պարտաւոր է ամենից առաջ վճարել մի որոշ տուրք իր հարևան հողատէրերին, որոնք, ինչպէս և ինքը, ժամանակից չեն հասարակական գործերի վարելուն և քաղաքականապէս անզօր են։ Վերջապէս, գիւղացին հողը գնել է։ Հացահատիկի հետ միասին նա իր հոգին է դնում հողի մէջ։ Հողի այդ փոքրիկ կտորը, որ կազմում է նրա սեպհականութիւնը ամբողջ լայնածաւալ աշխարհի մէջ, լցնում է նրա սիրտը հպարտութեան ու անկախութեան զգացմունքով։ Բայց ահա նոյն հողատէր հարևանները գալիս ստիպում են նրան թողնել իր դաշտը ու գնալ ուրիշ տեղ աշխատելու առանց որև է վարձատրութեան։ Նա կամենում է պաշտպանել իր արտը վայրենի կենդանիների ու թռչունների աւերումից՝ բայց նրան այդ արգելում են։ Նա անցնում է գետի վրայով՝ նրանից պահանջում են ճանապարհի տուրք։ Շուկայ է դուրս գալիս գիւղացին, նրանք այստեղ էլ են նրա թեից բռնում ու ստիպում իրաւունք առնել՝ ծախելու իր ապրանքը։ Իսկ երբ նա տուն է վերադառնում և կամենում է իր սեպհական կարիքների համար գործ ածել մնացած ցորենը, այն ցորենը, որ բուսել է իր

*) «Տասնորդ»-ից հոգևորականութիւնը ստանում էր տարեկան 23 միլիոն ֆրանկ։

աչքի առջև, իր սեպհական արտում և իր ձեռքի աշխատանքով, —նա պարտաւոր է տանել աղալու նոյն հողատէրերի ջրաղացում և ապա թխել նրանց թոնիրում։ Մի խօսքով, ինչ բանի էլ նա չը ձեռնարկի, նրա ճանապարհին միշտ կանգնած են այդ ճանձրացնող մարդիկը, որոնք սեպհականում են նրա ուրախութիւնը, խանգարում՝ աշխատանքը, ուտում՝ պաշարը... Հազիւ է կարողանում խեղճ գիւղացին ազատուել նրանց ձեռքից, երբ վրայ են հասնում ուրիշները։ Գալիս են սեպհականներն ու առնում նրա հունձի մի խոշոր մասը... Երևակայեցէք այդ մարդու դրութիւնը, նրա կրքերը, նրա բնաւորութիւնն ու կրքերը և, եթէ կարող էք, որոշեցէք նրա սրտում կուտակուած նախանձի ու ատելութեան չափը»։

Այսպէս ազնուականութիւնը, որ միջին դարերում իր ֆէոդալական իրաւունքների հետ կրում էր և որոշ պարտականութիւններ, մասնակցելով դատաւորութեան և գիւղի կառավարութեան գործի մէջ, 18-դ դարի վերջում կորցրել էր իր քաղաքական իշխանութիւնը և վայելում էր միմիայն արտօնութիւններ։ Նա դառել էր մի քարացած կաստա, որ անջատուած էր ժողովրդից, սակայն ապրում էր նրա հաշուով։

Թողնելով իրանց միջնադարեան ամրոցները, հարուստ կալուածատէրերը վաղուց քաշուել էին մայրաքաղաքը ու արքունիքը՝ Պարիզ ու Վերսալ, ուր մատնուած ամենազեղխ ու անբարոյական կեանքին, շռայլում էին գիւղացուց ստացած փողերը։ «Ո՞վ չէ ապրել Ֆրանսիայում 1789 թ. առաջ, ասում էր եպիսկոպոս Թալեյրանը, նա չը գիտէ, ինչ ասել է կեանքի ուրախութիւնը»։

Հոգևորականութիւնը ոչ պակաս չափով արժանացել էր ժողովրդի ատելութեանը։ Եպիսկոպոսները, վանահայրերը և այլ բարձրաստիճան հոգևորականները կենտրոնացրել էին իրանց ձեռքում ահագին հարստութիւն *) և իբրև կալուածատէրեր, ազնուականների նման կեղեքում ու շահագործում էին ժողովրդական մասսան։

Արտօնուածների մէջ առաջին տեղն էր բռնում Ֆրանսիայի թագաւորը՝ «թագաւոր-արեգակը»։ Ամենքը ուղղել էին իրանց հայեացքը դէպի նա և նրանից էին ակնկալում ամեն ինչ։ Իր և

*) Եկեղեցական կայքերի ընդհանուր արժողութիւնը կազմում էր 3 միլիարդ ֆրանկ. մի գումար, որ պէտք է մի քանի անգամ մեծացնել, որպէս զի կարելի լինի ստանալ նրա ներկայ արժողութիւնը։ Այդ հողերից, որոնք կազմում էին ամբողջ Ֆրանսիայի հողերի մի 1/5-դ մասը, նա ստանում էր տարեկան 100 միլիոն ֆրանկ եկամուտ։

Բազմի Հայոց
Հրիփսիմեան Դպրոց

ինքնակալ տէր, յենուած իր անսահման իշխանութեան վրայ, նա իր ձեռքումն էր պահում ամբողջ պետութեան ճակատագիրը։ «Պետութիւնը՝—ես եմ,—ասում էր գոռոզաբար Լիւդովիկոս XIV-դը։ Եւ արդարև, վաղուց արդէն ոչնչացրած էր միջնադարեան ֆէոդալների իշխանութիւնը և արդէն 1614 թ. սկսած չէին հաւաքւում ժողովրդական ներկայացուցիչները՝ Etats généraux *), այլ ինքն՝ Ֆրանսիայի բոլոր դասերի (сословіе) ներկայացուցիչները, որոնք, թէև չնչին չափով, բայց և այնպէս չափաւորում էին թագաւորի գերիշխանութիւնը։ Մի քանի տեղ գաւառներում դեռ ևս հաւաքւում էին «գաւառական ժողովները», սակայն նրանց վերապահած էր միայն հարկերի բաշխման իրաւունքը։

Ամբողջ իշխանութիւնը գտնւում էր թագաւորի ձեռքին, որ և կառավարում էր երկիրը իր պաշտօնեաներով։ Ազնուականութիւնը, պահպանելով իր միջին դարերից ժառանգած սոցիալական արտօնութիւնները, կորցրել էր իր քաղաքական նշանակութիւնն ու ազդեցութիւնը։ Նա, իբրև հասարակական մի դասակարգ, զրկուած էր պետական կառավարութեան ու օրէնսդրութեան մասնակցութիւնից։ Թագաւորն էր, իբրև Ֆրանսիայի առաջին ազնուականը, երկրի միահեծան տէրն ու կառավարիչը։

Կառավարչական պաշտօնեաները ցանցով պատել էին երկիրը։ Նրանք վարում էին տեղական բոլոր հասարակական գործերը։ առանց ժողովրդի մասնակցութեան և նրա հսկողութիւնից դուրս։ ամբողջ ադմինիստրացիան ենթակայ էր միայն Պարիզից եկած հրահանգներին։ Իշխանութեան այդ կենտրոնացումը այնքան խիստ էր, որ հասարակութիւնը՝ նոյն իսկ իր մասնաւոր կարիքների գոհացումը ակնկալում էր կառավարութիւնից։

«Գիւղացին, ասում է Տոկվիլը, խնդրում էր կառավարութիւնից վարձատրութիւն իր կորցրած տաւարի համար. հարուստ հողատէրը՝ աջակցել իրան ծախելու իր հողը աւելի շահաւէտ կերպով. արդիւնաբերողները՝ ազատել անախորժ մրցակիցներից. գործարանատէրերը, յայտնելով իրանց գործերի անյաջող դրութեան մասին, խնդրում էին փոխառութիւն կամ նպաստ. ազնուականները ևս չետ չէին մնում միւս բոլոր դասակարգերից.

*) Ժողովրդական այդ ներկայացուցչութիւնը Ֆրանսիայում երբէք չէ ունեցել մշտական քաղաքական հիմնարկութեան նշանակութիւն, նա հրաւիրւում էր միայն այն ժամանակ, երբ պետութեան դրամական միջոցները սպառւում էին և կարիք էր զգացւում ժողովրդի նիւթական աջակցութեան։

սրանք սովորաբար խնդրում էին ազատել իրանց 5%-ից տուրքից (le vingtiéme), որ նրանք վճարում էին կառավարութեան։

«Զարմանալի չէ, հետևաբար, որ ժողովուրդը զանազան դըժբախտութիւնների ժամանակ էլ մեղքը ձգում էր կառավարութեան վրայ. նրան մեղադրում էին նոյն իսկ երբ տարաբաղդ եղանակը սովորականից խիստ էր լինում»...

Իշխանութեան կենտրոնացման անխուսափելի հետևանքներից մէկն էլ այն էր, որ գործերը սատիկ ձգձգում էին, տեղիք տալով երկարատև գրագրութեան. մի երևոյթ, որ մեզ, ներկայումս Ռուսաստանում ապրողներիս, քաջ ծանօթ է։ «Գիւղական համանդնքը, պատմում է նոյն Տօկվիլը, իր գիւղի զանգակատունը կամ քահանայի տունը նորոգելու համար տուած խնդրի պատասխանն ստանում էր սովորաբար մի ամբողջ տարի անցնելուց յետոյ, իսկ յաճախ նոյն իսկ երկու կամ երեք տարուց յետոյ»..

...«Ամբողջ Ֆրանսիայում չկար մի քաղաք, մի գիւղ, մի աւան, մի ագարակ, մի հիւանդանոց, մի գործարան, մի վանք, մի ուսումնարան, որ ունենար իր ազատ ու անկախ կամքը իր ժառանգաւոր գործերի մէջ, կամ կառավարէր իր ցանկութեան համեմատ իր սեպհական գոյքը։ Մի խօսքով այն ժամանակ, ինչպէս և այժմ, ադմինիստրացիան իր խնամատարութեան տակ էր պահում բոլոր ֆրանսիացիներին»։

Ադմինիստրացիայի այդ անկօնտրոլ իշխանութիւնը տարածւում էր նաև արքունի գանձարանի վրայ, ուր մտնում էին ժողովրդի դառն քրտինքով վաստակած կոպէկները։ Թագաւորը նայում էր արքունի գանձարանի վրայ, որպէս իր սեպհականութեան, ու ծախսում էր առանց հաշիւ տալու ժողովրդին։ Եւ որովհետև ադմինիստրացիան մի կողմից էր կլանում ժողովրդական փողերը, իսկ Թագաւորը իր պալատականների հետ միասին միւս կողմից էին անհաշիւ կերպով վատնում, ուստի և պետական գանձարանը միշտ դատարկ էր։

Բաւական է միայն յիշել, որ պետական գանձարանի հաշուով ապրում էին Թագաւորի պալատում 15,000 ազնուականներ, որոնց ապրուստի համար ծախսւում էր տարեկան 40 միլլիոն լիվր... Յայտնի է, որ զինուորական ծառայութեան մէջ սպաների պաշտօնները ստանում էին միայն ազնուականները. դա նրանց բազմաթիւ արտօնութիւններից մէկն էր. կառավարութիւնը սպանելի ապրուստի համար յատկացնում էր տարեկան 46 միլլիոն լիվր, մինչդեռ Ֆրանսիայի ամբողջ զօրքի վրայ ծախսում էր տարեկան միայն 44 միլլիոն։ Վերջապէս, որպէսզի արքունի գանձարանի յափշտակման պատկերը լրացրած լինինք, յիշատակենք և այն, որ կառավարութիւնը 15 տարուայ ընթացքում (1774 թ.—1789 թ.) բաժանել էր ազնուականներին պետական գանձարանից իբրև նըպաստ կամ նուէր 228 միլլիոն լիվր!...

Այս ահագին ծախսերը հոգալու համար կառավարութիւնը ստիպւած էր փոխառութիւն փոխառութեան յետևից անելու... 1787 թ. պետական փոխառութիւնները կազմում էին արդէն մի շատ խոշոր գումար՝ 1 միլլիարդ 646 միլլիոն ֆրանկ. իսկ պետական բիւջէն տարեկան տալիս էր 198 միլլիոն լիվր դէֆիցիտ... Պարզ էր, որ պետութիւնը հետզհետէ մօտենում էր կատարեալ սնանկութեան։

—

Մենք տեսանք, թէ ինչպիսի արտօնեալ պայմաններում էին ապրում բարձր դասակարգերը հին Ֆրանսիայում, տեսանք, ինչ աստիճանի էր հասնում բիւրօկրատիայի միահեծան իշխանութիւնը, ծանօթացանք, թէ որպիսի ողբալի վիճակի մէջ էին գտնւում պետական ֆինանսները, որ կազմում են իւրաքանչիւր տերութեան կենսական նեարդը։ Այժմ անցնենք երրորդ դասին, տեսնենք, թէ ինչ պայմաններում էր նա ապրում, ինչպէս էր նրա դրութիւնը յեղափոխութեան նախօրեակին։

Վերը ասածներից արդէն պարզ է, որ հին Ֆրանսիայի ներքին հասարակական խաւերը գտնւում էին ամենաթշուառ վիճակի մէջ։ Մենք տեսանք արդէն, թէ ինչ իրաւունքներով էին օժտւած ազնուականութիւնն ու հոգեւորականութիւնը գիւղացու աշխատանքի ու գոյքի վերաբերմամբ. մենք տեսանք, թէ որչափ անսիրտ կերպով նրանք թալանում, կեղեքում ու ծծում էին նրա բոլոր կենսական ոյժերը։ Բայց դրանից դուրս գիւղացիութիւնը հեծում էր և կառավարութեան ծանր լծի տակ։ Ամենից առաջ նա ծանրաբեռնւած էր չափազանց մեծ հարկերով։ Հարկերից ծանրագոյնը «տայլն» էր (taille)։ Թէ որպիսի խոշոր չարիք էր հանդիսանում այդ հարկը գիւղացիութեան համար, երևում է նրա հետևեալ կարճ, բայց գեղեցիկ բնորոշումից, որ 1772 թ. տուել էր մինիստրներից մէկը։ «Տայլի բաշխումը, գրում է այդ մինիստրը, կախւած է ամբողջովին կառավարութեան ազատ կամքից (իմա

նրա բմահաճոյքից)։ Նրա յաջող հաւաքելը երաշխաւորուած է գիւղացիների փոխադարձ պատասխանատուութեամբ (круговая порука)։ Նա ընկնում է անհատի վրայ և ոչ թէ հողի։ Նրա չափը միշտ փոփոխուում է, նայած թէ որպիսի փոփոխութիւններ են տեղի ունենում իւրաքանչիւր տարի հարկատուների գոյքի մէջ» *)։—«Տայլից» պակաս չէին քայքայում գիւղացու բարօրութիւնը նաև մի շարք պարտադիր ու ձրի աշխատանքներ, որ կատարում էր նա պետութեան համար։ Այսպէս, օրինակ, տերութիւնը կամենում էր զօրանոց շինել, գիւղացիները պարտաւոր էին իրանց գործը թողնել ու գնալ այնտեղ աշխատելու. հարկաւոր էր տաժանակիր աշխատանքների դատապարտուած յանցաւորներին տեղափոխել բանտերը կամ մուրացկաններին՝ բարեգործական ապաստարանները —դիմում էին գիւղացիներին. հարկաւոր էր զօրքի տեղափոխութիւնների ժամանակ կրել զինուորական իրերը՝ կրկին դիմում էին գիւղացուն, և նա իրաւունք չունէր չը տալու իր եղները կամ սայլը... Եւ այսպէս անվերջ. գիւղացու տնտեսական դրութիւնը օրըստօրէ վատթարանում էր և նա ընկնում էր ծայրայեղ չքաւորութեան մէջ,—բայց ինչ փոյթ կառավարութեան համար, որի սկզբունքն էր՝ «Après moi—le deluge» *) և որի կարծիքով միայն աղքատութիւնը կարող է ստիպել գիւղացուն աշխատել, հակառակ դէպքում, նա ծուլութեան դերի կը դառնայ...

Հարկերի մէջ մանաւանդ ծանր էին նրանք, որոնք կապալով տրւում էին խոշոր կապիտալիստներին. դրանք էին՝ աղի, ծխախոտի, ոգելից ըմպելիքների հարկերը ու մաքսային տուրքերը։ Ինչ ասել կուզի, որ կապալառուները կրկնակի չափով էին հաւաքում ժողովրդից, խլելով նրա վերջին կոպէկները։ Եւ ժողովրդի ատելութիւնը դէպի այդ հարկերը սահման չունէր. այսպէս, օրինակ, աղի հարկը այնքան էր զայրացնում ու գրգռում գիւղացիներին, որ նրանք յուսահատ աղաղակում էին՝ «Լեցցէ թագաւորը առանց աղի մօնոպոլիայի»...

Շնորհիւ այսչափ անխիղճ հարստահարութեան, գիւղական հողերի անագին տարածութիւններ մնում էին անմշակ, խոպանացած, ուստի և զարմանալի չէր, որ արագ աճում էր միայն աղ-

*) Токвиль—«Ст. порядокъ» եր. 144.
**) Այսինքն՝ «ինձանից յետոյ՝ թէկուզ ջրհեղեղ»։ Այս խօսքերը վերագրում են Լիւդովիկոս XV-ին։

քատների, շրջմոլիկների, գողերի ու աւազակների բանակը։ Ինքը գիւղացիութիւնը ապրում էր առանձնացած բոլոր միւս դասակարգերից, զուրկ մտաւոր կրթութիւնից, անզօր մաքառելու իր հարստահարողների դէմ... Նա անլուր կերպով տնքում էր պետական ծանր լծի տակ, բայց և միաժամանակ, իշխող դասակարգերի համար աննկատելի կերպով, լցւում էր նրա սիրտը անսահման ատելութեամբ դէպի տիրող կարգերը, նախանձով ու փրկարար վրէժխնդրութեան զգացմունքով դէպի իրան կեղեքողները...

Գիւղացիութիւնից ոչ պակաս վատթար վիճակի մէջ էին գտնւում նաև քաղաքների բնակիչները և ամենից առաջ բանւորները։

Սակայն բանւորութիւնը, որպէս մի ինքնուրոյն դասակարգ, իր դասակարգային շահերի գիտակցութեամբ, գոյութիւն չունէր այդ ժամանակ։ Ժամանակակից պրոլետարիատը դեռ նոր էր ծնունդ առնում։ Չկային դեռ ևս շոգիի ուժով բանող գործարաններ, ֆաբրիկներ։ Այդ ժամանակւայ բանւորութիւնը կազմում էին արհեստաւորները, մանուֆակտուրային գործարանների բանւորներն ու հանքերում աշխատող մշակները։

Անբաւականութեան ընդհանուր պատճառներից զատ բանւորութիւնը մի առանձին ատելութեամբ էր վերաբերւում դէպի համքարութիւնը (цеховой строй)։ Համքարների ձեռքին էր կենտրոնացած քաղաքների ամբողջ աշխատանքը. համքարութիւնից դուրս ոչ մի արհեստաւոր իրաւունք չունէր զբաղւելու իր արհեստով։ Եւ որովհետև իւրաքանչիւր արհեստաւոր ժառանգաբար էր ստանում արհեստով զբաղւելու իրաւունքը, ուստի և համքարները հանդիսանում էին մի-մի խիստ կղզիացած կօրպօրացիաներ, ուր ազատ արհեստաւորը մուտք չունէր... Վարպետի կոչում ստանալը դիւրին չէր. մատչելի էր միայն նրանց, որոնք ունևոր էին կամ թէ ազդեցիկ հովանաւորներ ունէին։ Համքարները վայելում էին կառավարութիւնից ստացած մի շարք արտօնութիւններ, որոնք խիստ նեղում էին արհեստաւորներին ու ազատ աշխատող վարպետներին։ Միայն Պարիզում կային 800,000 արհեստաւորներ, որոնք համքարութիւնից դուրս էին և գաղտնի աշխատում էին մայրաքաղաքի արուարձաններում՝ St. Marseau և St Antoine։ Նրանք յետագայում, յեղափոխութեան օրե-

ըերում, կուսողների առաջին շարքերումն էին, որովհետև նրանց կեանքի ու մահուան հարցն էր լուծւում...

Սակայն երրորդ դասակարգը բաղկացած չէր միայն «հասարակ ռամիկներից»՝ գիւղացիներից, ժանր արհեստաւորներից, բանւորներից. նրա վերին խաւը կազմում էր այն մասը, որ յետագայում հանդէս եկաւ իբրև մի ջոկ դասակարգ իր առանձին դասակարգային շահերով ու գիտակցութեամբ և ապա բռնեց առաջնակարգ տեղ հասարակութեան մէջ. դա՝ բուրժուազիան էր։

Մինչդեռ ազնուականները՝ տրւած զեղխ կեանքին, շռայլում էին իրանց անագին կարողութիւնը, բուրժուաները՝ վաճառականները, արդիւնաբերողները, բանկիրները հարստանում էին, իրանց ձեռքը ձգելով առևտուրն ու արդիւնաբերութիւնը, որ հետզհետէ արագ քայլերով զարգանում էր։ 1787 թ. արդէն ապրանքների ներմուծումը հասել էր մի խոշոր գումարի՝ 310 միլլիոն լիվրի, իսկ արտահանութիւնը՝ 524 միլլիոն լիվրի։

«Չը կար հաժարեա թէ մի գաւառ, որ չունենար արդիւնաբերութեան այս կամ այն ճիւղը»—ասում է Ժօրէսը *)։ Լանգեդոկում կենտրոնացած էին մանուֆակտուրայի գործարանները. Նորմանդիայում արդիւնաբերում էին բրդէ գործւածքներ, Լիոնը յայտնի էր իր մետաքսի ֆաբրիկներով. Էլզաս-Լոթարինգիան՝ մետաղի գործարաններով, Արտուան ու Անդենը՝ քարածխի հանքերով» և այլն, և այլն.

Կապիտալն արդէն մեծ դեր էր կատարում հասարակական կեանքի մէջ. նա մի կողմից արագ ոչնչացնում էր ֆէօդալական կարգերը, խորտակում երկրի տնտեսական զարգացումը կաշկանդող կապանքներն ու դասային տարբերութիւնները, իսկ միւս կողմից՝ հող պատրաստում բոլորովին նոր սոցիալ-քաղաքական կեանքի համար, ստեղծում նոր սոցիալական տարրեր, որոնք, սակայն, շարունակում էին մնալ քաղաքականապէս իրաւազուրկ։

Յեղափոխութեան նախօրեակին Ֆրանսիայի հասարակական կեանքը առհասարակ լի էր մեծ հակասութիւններով. կեանքի իրական ներքին բովանդակութիւնը չէր համապատասխանում արտաքին ձևերին. հէնց դրա մէջն է կայանում բոլոր հասարակական

*) Жанъ-Жоресъ—Ист. фр. революціи, вып. I. եր. 73.

յեղաշրջումների գլխաւոր պատճառը, դրանումն էր և Ֆրանսիական մեծ յեղափոխութեան պատճառը։

Ֆրանսիայի ազնուականութիւնը, որ կորցրել էր իր քաղաքական նշանակութիւնը, որ չէր հանդիսանում այլ ևս իբրև մի հասարակական ոյժ, որ ազատ էր ամենածանր պարտականութիւններից թէ դէպի կառավարութիւնը և թէ դէպի ժողովուրդը,—շարունակում էր վայելել տնտեսական մեծ արտօնութիւններ ու քաղաքական իրաւունքներ. ընդհակառակը, չնայած որ երրորդ դասակարգը՝ կապիտալիստ թէ արհեստաւոր, գիւղացի թէ բանւոր, իր ուսերի վրայ էր տանում պետական զոյութեան բոլոր ծանրութիւնները, զուրկ էր քաղաքական ամենատարրական իրաւունքներից...

Բայց բաւական չէր, որ բուրժուազիան իրաւազուրկ էր, նա և պատւազուրկ էր։ Ազնուականը, որ ամեն քայլափոխում դիմում էր բուրժուայի աջակցութեան, օգտւում նրա մատուցած ծառայութիւններով, այնուամենայնիւ երբէք առիթը բաց չէր թողնում արտայայտելու նրան իր արհամարանքը։ Արիստոկրատների աչքում բուրժուան ամենաստոր կարգի մարդ էր, զբաղւած առօրեայ մանր հաշիւներով։ Ազնուականը քաշւում էր բուրժուայից, խուսափում, օրինակ, ամուսնական կապեր անգամ հաստատելու նրա հետ։ Նրա վերաբերմունքը դէպի բուրժուան մասամբ նմանում էր այն զգացմունքին, որ տածում էր տիկ. դիւ-Շատլէն դէպի իր ծառաները. այդ տիկինը չէր քաշւում իր ծառաների ներկայութեամբ շորերը հանելու, համարելով, որ դեռ ապացուցւած չէ, թէ ծառաները ևս մարդիկ են...

Բուրժուազիան էլ իր կողմից արտայայտում էր բացարձակ ատելութիւն դէպի ազնուականութիւնը։ Նա անդադար յարձակւում էր բարձր դասակարգերի արտօնութիւնների վրայ, մեղադրում էր նրանց պետական կառավարութեան մէջ տիրող անկարգութիւնների համար, բողոքում էր նրանց դէմ, որ այնքան թեթևամիտ ու յանցաւոր կերպով վատնում էին արքունի գանձարանի միջոցները։ Բուրժուազիան պահանջում էր վերացնել խոպառ համարքարութիւնը ու ներքին մաքսերը, որ խոշոր արգելք էին հանդիսանում առևտրի ու արդիւնաբերութեան զարգացման համար. անդադար մատնանիշ էր անում հաղորդակցութեան ճանապարհների վատթար դրութեան վրայ, բողոքում արդարադատութեան

ընկած վիճակի դէմ ու պահանջում մտցնել մի շարք արմատական բարեփոխութիւններ, և այլն, և այլն։

Այսպէս, բուրժուազիան հարստահարած ու իրաւազուրկ, բայց լի կենսական նորաբողբոջ ոյժերով, ձգտում էր արմատական կերպով վերանորոգելու սոցիալ-քաղաքական կարգերը։

Սակայն միայն բուրժուազիան չէր, որ դժգոհ էր տիրող կարգերից։ Յեղափոխութիւնից առաջ համարեա բոլոր դասակարգերը անբաւական էին, թէև բոլորովին տարբեր պատճառներով ու տարբեր չափով։

Աղնուականութիւնը, չնայած որ վայելում էր բազմաթիւ տնտեսական արտօնութիւններ, այնուամենայնիւ միշտ զգում էր փողի մեծ կարիք, ուստի և հոգևորականների խոշոր հարստութիւնը միշտ շարժում էր նրա նախանձը։ Աղնուականութեան ստորին խաւերը, որոնք ստիպված էին ապրել գաւառներում, իրանց գիւղական ամրոցներում, նախանձով էին նայում Պարիզում շռայլող արիստոկրատիայի վրայ։

Հոգևորականութեան ստորին խաւերը՝ բազմաթիւ գիւղական քահանաները, ատելով ատում էին եպիսկոպոսներին ու արքաներին. վերջապէս ամենքը, սկսած գիւղացուց մինչև բարձր արտօնեալ դասակարգերը, դժգոհ էին կառավարութիւնից. աղնուականներն ու հոգևորականները, մասնաւորապէս, ընդհարւում էին կառավարութեան հետ, երբ վերջինս նոր հարկեր էր նշանակում։

—

Բացի բուն կապիտալիստներից մեծ նշանակութիւն ունէր նաև բուրժուական ինտիլիդենցիան՝ փաստաբանները, բժիշկները, գրական գործիչները և այլ, այսպէս ասած, ազատ արուեստի ներկայացուցիչները՝ ուսուցիչները, նկարիչները, երաժշտագէտներն և այլն։

Սրանց շրջանը հետզհետէ լայնանում էր ու, շնորհիւ իրանց կրթութեան, ձեռք բերում մեծ ազդեցութիւն հասարակական կեանքի ընթացքի վրայ։

Դրանց մէջ չափազանց առանձնայատուկ դիրք էին բռնել գրական գործիչները։

18-դ դարի երկրորդ կիսին ֆրանսիական գրականութիւնը մի առանձին կենդանութիւն էր ստացել ու մեծ ազդեցութիւն ձեռք բերել անխտիր բոլոր դասակարգերի վրայ։

Գրական գործիչները դարձել էին օրուայ հերոսներ. նուաճելով մարդկանց միտքն ու զգացմունքները, նրանք հարկադրում էին ամենքին մտածել իրանց գաղափարներով, խօսել իրանց լեզուով...

Չը վարելով քաղաքական որ և է պաշտօն, նրանք, այնուամենայնիւ, ամբողջովին զբաղուած էին քաղաքական հարցերով. միշտ խօսում ու գրում էին պետական օրէնսդրութեան, իշխանութեան ձևերի, քաղաքացիների իրաւունքների մասին։ Նրանք ամենամանրակրկիտ կերպով վերլուծում էին տիրող քաղաքական ու սոցիալական կարգերը, պետական կազմը, բարձր իշխանութեան բռնած դիրքը, ժողովրդի իրաւազուրկ դրութիւնը. նրանք պարզում էին հասարակութեան առաջ այն խախուտ ու անարդար հիմքերը, որոնց վրայ էին դրած ժամանակակից քաղաքական օրէնքները և ապա ցոյց էին տալիս, այն արդար սկզբունքները, որոնց վրայ պիտի հիմնուած լինի պետական օրէնսդրութիւնը. մի խօսքով ոչինչ չէր սպրտում նրանց սուր հայեացքից, նրանց դիտողութիւնից. իւրաքանչիւր հասարակական երևոյթ ենթակայ էր նրանց միշտ քննող, միշտ վերլուծող մտքին... Նրանք աննդհատ խօսում էին, թէ ինչպէս են ծագում մարդկային հասարակութիւնները, ինչումն է կայանում կառավարչական իշխանութեան էութիւնը, որոնք են մարդկութեան ընդհանուր իրաւունքները, որպիսի օրէնքներն են առաջնորդում մարդկանց դէպի ազատութիւն ու երջանկութիւն...

Նրանք մի կողմից անխնայ մտրակում էին հին միջնադարեան կարգերը, բողոքում ֆէօդալական արտօնութիւնների դէմ, որոնց բերած չարիքը օրըստօրէ աւելի զգալի էր դառնում, միւս կողմից պատկերացնում էին հասարակութեան առաջ բախտաւոր ու ազատ կեանքի հեռանկարներ... Նրանց ազատ բանաստեղծական միտքը, համարձակ թռիչքներ կատարելով, նկարագրում էր նոր աշխարհներ, ուր չկային ժամանակակից հարստահարութիւնները, անվերջ ճնշումները, մարդկանց միտքն ու հոգին կաշկանդող ֆէօդալական հազար ու մի կապանքները. ուր ժողովուրդը ինքն էր հանդիսանում իր բախտի տնօրինողը, ուր մարդիկ հաւասար չափով վայելում էին կեանքի բարիքները, ուր հասարակութեան իրաւունքները անդամ օժտուած էր հաւասար իրաւունքներով ու ունէր հաւասար պարտականութիւններ. ուր, մի խօսքով, տիրում էր ազատութիւն, հաւասարութիւն ու եղբայրութիւն։

Այս գաղափարները թափանցում էին ժողովրդի խորքերը,

ոգեւորում ու վառում նրա այրած սիրտը ապագայ լաւագոյն յոյսերով։ Ժողովուրդը տենդային հետաքրքրութեամբ էր վերաբերւում դէպի ամեն մի նոր խօսք, դէպի իւրաքանչիւր նոր գիրք։ Նա արագ իւրացնում էր քաղաքական-սոցիալական բարդ գաղափարները։ Ժողովրդի սիրտը լցւում էր անհուն բերկրութեամբ, տեսնելով, թէ ինչպէս արձագանք են գտել գրականութեան մէջ նրա դարաւոր վշտերը, զրկանքները, տանջանքները... Եւ նա պաշտում ու երկրպագում էր այդ գրողներին. սրանք մի մի մարգարէներ էին, որոնք աւետում էին ժողովուրդ երջանիկ կեանք ու բախտաւոր ապագայ...

Այդ ժամանակի բոլոր գրական գործիչների մէջ ամենամեծ հռչակը վայելում էին Վոլտէրը (1694—1778), Մոնտէսկիոն (1689—1755) և Ժան Ժակ Ռուսսոն (1712—1718)։

Վոլտէրը յայտնի էր իր երկիմաստական տաղանդով։ Նա իր սուր գրչով անընդհատ հարուածում էր հին աւատական կարգերն ու սովորութիւնները, ծաղրում էր ազնուականների մեծամտութիւնը, նրանց թեթեւամիտ ու անբարոյական բարքերը, մտրակում հոգեւորականութեան զեղխութիւնները, սանձարձակ բարքերը։ Նրա գրական գործունէութեան գլխաւոր նպատակն էր՝ կործանել հին հեղինակութիւնները, հին «աստուածները», միևնոյն է թէ կեանքի որ ասպարէզներումն էին նրանք իշխում՝ քաղաքացիական թէ կրօնական—եկեղեցական։ Նրա թունոտ սարկազմին անխտիր ենթակայ էին պետութիւնն ու եկեղեցին, թագաւորն ու մեծ իշխանները, ազնուականն ու բարձրաստիճան հոգեւորականը։

Մոնտէսկիոն ներկայացնում է Վոլտէրի հակառակ տիպը. սա բնաւորութեամբ աւելի լուրջ էր, աւելի ծանր։ Մինչդեռ Վոլտէրը բանաստեղծին յատուկ տաքարիւն բնաւորութեամբ յարձակւում էր հասարակութեան վրայ, մտրակելով ամենքին, հարուածելով ու ծաղրելով ամեն ինչ, ոտնատակ տալով կաթոլիկ եկեղեցու հեղինակութիւնը, արիստոկրատիայի փքուն իշխանութիւնը, չխնայելով նոյն իսկ թագաւորի անձնաւորութիւնը,— Մոնտէսկիոն ամենայն սառնասրտութեամբ, գիտնականին յատուկ ծանրակշռութեամբ մանրադնին քննութեան էր առնում տիրող հասարակական կարգերը, պարզում, թէ որպիսի քաղաքական

կազմ կարող է հանել ժողովրդին իր ընկճած, հարստահարուած դրութիւնից, ազատել պետութիւնը անկումից։

Մոնտէսկիոի գլխաւոր աշխատանքն է «Օրէնքների ոգին», որ լոյս տեսաւ 1748 թ.։ Այս հեղինակութիւնը մինչև այսօր էլ մի խոշոր տեղ է բռնում քաղաքական ուսմունքների պատմութեան մէջ։ Գրքի ամենաէական մասը կազմում է հեղինակի հայեացքը միապետական կազմի մասին և ապա անգլիական սահմանադրութեան ընորոշումը։ Հեղինակը հանդիսանում է ջերմ պաշտպան անգլիական սահմանադրութեան և նրա իրականացման մէջ է տեսնում Ֆրանսիայի փրկութիւնը։

Բոլորովին այլ տիպ է ներկայացնում Ժան Ժակ Ռուսսոն։ Եթէ Վոլտէրն ու Մոնտէսկիոն հանդիսանում էին քննադատող մտքի ներկայացուցիչներ, Ռուսսոն՝ սրտի ու զգացմունքների վարպետ էր։ Լինելով ինքը խիստ զգայուն սրտի տէր մարդ, նա գիտէր և շարժել ժողովրդական մասսաների զգացմունքները։ Լինելով ինքը բուն ժողովրդի զաւակ (նա ժամագործի որդի էր), հանդիսանում էր իսկական ժողովրդական գրող։ Նա գիտէր ժողովրդի ցաւերը իւր անձնական փորձով... Կարիքը, անապահով դրութիւնը *), շատ անգամ էին նրան յուսահատութեան հասցրել... Նրա սիրտը մի հրաբուղխ էր, որից ժայթքում էին կրակոտ խօսքեր, բոցավառ գաղափարներ, և ապա տարածւելով ամբոխի մէջ, հրդեհում էին նրա սրտում կուտակուած դժգոհութեան, բողոքի, վրէժի զգացմունքները...

Ռուսսոն ժամանակակից հասարակական կեանքի գլխաւոր չարիքը, տեսնում էր տնտեսական անհաւասարութեան մէջ։ «Ամեն մի անհաւասարութեան արմատը, ասում է Ռուսսոն, կազմում է սեպհականութիւնը, իսկ քաղաքացիական կազմը՝ օրէնքով սրբագործուած անհաւասարութիւն է։ Նա, ով առաջին անգամ հողի կտորը ցանկով պատեց ու յայտարարեց՝ «սա իմ սեպհականութիւնն է», և եղան այնպիսի յիմարներ, որոնք հաւատացին նրան,—նա էլ հանդիսացաւ քաղաքացիական կազմի իսկական հիմնադիրը։ Որքան պատերազմներից ու աւերումներից, որքան արիւնհեղութիւններից ու դժբաղդութիւններից ազատուած կը լինէր մարդկութիւնը,

*) Յայտնի է, որ Ռուսսոն իր ապրուստը հայթայթում էր նոտաներ արտագրելով, երաժշտութեամբ...

եթէ որ մէկը քանդէր այդ ցանկապատը և ասէր միւսներին. «Մի հաւատացէք այդ ստախօսին! դուք կորած էք, եթէ մոռանալու լինիք, որ հողից ստացած արդիւնքը պատկանում է ամենքին և չէ կարող ոչ ոքի սեպհականութիւն լինել»։

Ռուսսօի այս համարձակ ու խիզախ մտքերը հեղեղում էին Ֆրանսիան ծայրէ ի ծայր, ելեքտրականացնում ժողովուրդը...

Ռուսսօի գրական աշխատանքներից ամենագլխաւորն է «Հասարակական դաշնագիրը», որ լոյս տեսաւ 1762 թ.։

«Մարդ ծնւած է ազատ, իսկ ամենուրեք նա կաշկանդւած է կապանքներով»,—ասում է հեղինակը գրքի սկզբում։

Ի՞նչպէս է պատահել, որ մարդիկ, լինելով բնական դրութեան մէջ ազատ ու հաւասար, այսօր, կրթւած հասարակութեան մէջ, դարձել են միմեանց ստրուկ։ Այս հարցին Ռուսսօն չէ պատասխանում. նա իր գրքում աշխատում է պարզել մի ուրիշ հարց՝ ի՞նչպէս կարող են մարդիկ ազատւել այդ կապանքներից, և նորից լինել ազատ ու հաւասար։ Դա հնարաւոր է միայն մի դէպքում՝ եթէ մարդիկ յօժար կամքով հրաժարւեն իրանց մասնաւոր, անձնական իրաւունքներից յօգուտ հասարակական ամբողջութեան. երբ նրանք, դաշն կապելով, կը կազմեն մի հասարակական մարմին, օժտւած մի կամքով, մի իշխանութեամբ։ Այդ հաւաքական մարմինը ժողովուրդն է, նա ինքն է պետութիւնը, նրան է պատկանում գերագոյն իշխանութիւնը, և այդ իշխանութիւնը՝ անեղծանելի է, անբաժանելի ու անսխալական։ Ժողովրդի ընդհանուր կամքն է իշխողը. նա է ամեն մի օրէնքի հաստատողը. կառավարութիւնը օրէնքների միայն գործադրողն է։

Ժողովուրդը, որ տանջւում էր տիրող քաղաքական ու սոցիալական անհաւասար պայմանների մէջ, շատ շուտով գրաւեց գրականութեան այդ նոր հոսանքով։

«Չը կար մի հարկատու, ասում է Տօկվիլը, որ դժգոհ չը լինէր «տայլի» անհաւասար բաշխումից. դրանց ամենքի գլուխը պատոյտ էր գալիս, երբ լսում ու կարդում էին, որ մարդիկ հաւասար պիտի լինին։ Չկար մի մանր սեպհականատէր, որի ցանքսերը փչացրած չը լինէին նրա հարևան-ազնուականի նապաստակները,—և դրանք մի առանձին բաւականութեամբ էին լսում, թէ բոլոր արտօնութիւնները անխտիր դատապարտւած են բանականութիւնից։ Այսպէս բոլոր քաղաքական տենչանքները

ստացան փիլիսոփայական գունաւորում. քաղաքական կեանքը դարձաւ գրականութեան մէջ կատաղի վիճաբանութեան նիւթ, իսկ գրական գործիչները, հանդիսանալով հասարակական կարծիքի ղեկավարներ, գրաւեցին այնպիսի տեղ, որ սովորաբար բռնում են ազատ երկիրներում քաղաքական կուսակցութիւնների պարագլուխները»։

Ժողովրդի մտաւոր յեղաշրջումը կատարեալ էր։

Ինչպէս էին վերաբերւում բարձր դասակարգերը դէպի մտքերի այս յեղաշրջումը. ըմբռնում էր, արդեօք, արիստոկրատիան այդ երևոյթի նշանակութիւնը, զգում ե՞ր նա, թէ դէպի ուր էր տանում մտքի այդ ահռելի հոսանքը։ Քաւ լեցի. արիստոկրատիան պատմական հեռատեսութեամբ օժտւած չէր. նա զուրկ էր պատմական ընազդից...

«Նրա դասային իրաւունքներին թշնամի և նոյն իսկ նրա սեպհական գոյութեան սպառնացող ամենաուժեղ գաղափարները,—նկատում է Տօկվիլը,—թւում էին նրան սոսկ մտքի հանճարեղ խաղ և նա սիրում էր այդ խաղով զբաղւել ժամանակ անցկացնելու համար... Վայելելով ամենայն անդորրութեամբ իր արտօնութիւնները, նա միամիտ կերպով խօսում էր բոլոր եղած սովորութիւնների անմտութեան մասին»...

Այսպէս ազնուականութիւնը ինքնին ուժգին կերպով նպաստում էր իր սեպհական կործանման...

Իսկ ի՞նչ էր անում կառավարութիւնը։ Թէև ամեն ինչ գուշակում էր յեղափոխութեան մօտալուտ բռնկումը, բայց կառավարութիւնը ոչինչ չէր տեսնում, կամ աւելի ճիշտը՝ ոչ մի լուրջ բանի չէր կարողանում ձեռնամուխ լինել... Կառավարութեան նաւը երերւում էր առանց ղեկի յեղափոխութեան ուրագանի այդ նաւը երերւում էր առանց ղեկի յեղափոխութեան ուրագանի նախօրեակին...

Մինիստրները իրար յետևից փոխւում էին, բայց ոչ ոք չէր կարողանում հնար գտնել դուրս գալու ծանր վիճակից։

Լիւդովիկոս XVI-ը իր գահակալութեան օրից սկսած՝ 1774 թ. մինչև 1789 թ. փոխեց եօթ մինիստր, սակայն նրանցից և ոչ մէկը չը կարողացաւ բաւարարութիւն տալ ժողովրդի հասունացած պահանջներին կամ նոյն իսկ մի փոքր մեղմացնել հասարակական բոլոր դասակարգերի անբաւականութիւնը...

Նրանցից ամենից լաւը, ամենից ընդունակը հռչակաւոր Տիւրգօն էր, որ կամեցաւ մի շարք առաջադէմ վերանորոգութիւն-

ներ մտցնել, ինչպէս օրինակ, ոչնչացնել համքարութիւնը ու ներքին մաքսերը, վերջ դնել առևտրական ժնշոպոլիաներին, ենթարկել բարձր դասակարգերին բուրժուազիայի հետ հաւասար հարկատուութեան,—բայց արտօնուած դասակարգերն այնպիսի մեծ ազմուկ բարձրացրին, որ Տիւրգօն էլ ստիպւած եղաւ 1776 թ. հեռանալ պաշտօնից։

Կառավարութիւնը, զրկելով Տիւրգօի նման հմուտ ու ընդունակ վարչական ղեկավարից, ընկաւ խիստ ծանր վիճակի մէջ։ Թէև նա չը հրաժարւեց նոր բարենորոգչական փորձերից նաև Տիւրգօի հետնորդների ժամանակ (Նէկկէր, Կալոնն, Բրիեննն), սակայն ամեն անգամ էլ անյաջողութեան էին յանգում ու միայն զրգռում հասարակութեան բոլոր խաւերը. կառավարութիւնը մշտական տատանումների ու վարանումների մէջ չէր կարողանում ընտրել մի հաստատուն ճանապարհ, ուստի և մի ծայրայեղութիւնից ընկնում էր միւսը... Մի օր նա, բարենորոգչական տենդով բռնւած, սպառնում էր բարձր դասակարգերին զրկելու իրենց բոլոր արտօնութիւններից ու հաստատելու հաւասար ու ազատ հասարակական—քաղաքական կարգեր, միւս օր նա, ժողովրդի ասելով բարենորոգումների անհրաժեշտութիւնը, զիջում էր բարձր դասակարգերի պահանջներին և սկսում էր խօսել ժողովրդի հետ Լիւդովիկոս XIV-ի խիստ ու հրամայական լեզուով...

Բայց փողի անագին կարիքը, որ օրըստօրէ աւելի ու աւելի էր նեղում Լիւդովիկոս XVI-ին, ստիպեց նրա կառավարութեան աւելի կտրուկ ու վճռական քայլեր անելու դժուարին կացութիւնից դուրս գալու համար։

Գիւղացիութիւնը արդէն մինչև վերջին ծայրը ծանրաբեռնւած էր հարկերով ու տուրքերով. բացի այդ վերջին ժամանակները իրար յաջորդող անբերրի տարիները վերջնականապէս քայքայել էին նրա տնտեսական ոյժերը։ Կապիտալիստները հրաժարւում էին կառավարութեան փոխարինարար փող տալուց, որովհետև ոչ մի վստահութիւն չունէին, որ իրանց տւած պարտքը յետ կը ստանան։ Ազնւականութիւնն ու հոգևորականութիւնն էլ արտադրիչ չէին զոհաբերութիւններ անելու յօգուտ կառավարութեան և մերժելով մերժում էին իրենց վրայ վերցնել պետական հարկերի մի մասը...

Կառավարութիւնը կրիտիքական դրութեան մէջ էր. հնում էր փրկութեան միայն մի միջոց՝ հրաւիրել ժողովրդի բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին, որոնք 1614 թ. սկսած չէին կանչւած։

Այսպէս էլ վարւեց Լիւդովիկոս XVI-ի կառավարութիւնը, զիջելով կեանքի հրամայողական պահանջին։

1788 թ. օգոստոսի 1-ին յայտարարւեց, որ ժողովրդի բոլոր դասակարգերի ներկայացուցիչները պիտի ժողովւեն Վերսալ 1789 թ. մայիսի մէկին...

Այսպէս սկսւեց ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։

II.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ.

Ժողովրդական ներկայացուցիչների ընտրութիւնների յայտարարութեան հետ միասին կառավարութիւնը թոյլատրել էր ժողովրդին յայտնելու նաև իր կարիքներն ու պահանջները։ Ժողովրդի այդ հրահանգները կամ ինչպէս Ֆրանսիայում էին անւանում՝ «cahiers de doléances» *) պարզ դաղափար են տալիս, թէ ինչ պայմաններում էին ապրում 18-դ դարի վերջում ֆրանսիական ժողովրդի բոլոր խաւերը։ Մենք արդէն ընդհանուր առմամբ ծանօթացանք այդ պայմանների հետ, ուստի այստեղ բաւական է նկատել, որ միայն երրորդ դասակարգն էր, որ պահանջում էր արմատական բարեփոխութիւններ մտցնել տիրող քաղաքական-սոցիալական կազմի մէջ։ Օրէնքները պիտի հրատարակեն, ասած էր այդ հրահանգների մէջ, ժողովրդի ներկայացուցիչները և ոչ թէ միապետական կառավարութիւնը. հարկերի բաշխումը պիտի լինի հաւասար. իւրաքանչիւր դասակարգ պիտի վճարի իր կարողութեան համեմատ. անհրաժեշտ է մտցնել երդւեալ դատաւորների ատեան. հաստատել խօսքի, մամուլի և ժողովների ազատութիւն. ոչնչացնել համքարութիւնը, ներքին մաքսերը, «տասանորդ»-ը և առհասարակ ազնւականների ու հոգևորականների բոլոր արտօնութիւնները։

1789 թ. մայիսի 5-ին մեծ շքով ու հանդիսաւորութեամբ

*) «Կայէ դը դոլեանս» նշանակում է դանդատների տետրակներ։

բացեց ժողովրդական ներկայացուցիչների ժողովը *), և անմիջապէս հարց ծագեց, թէ ինչպէս պիտի կատարուի խորհրդակցութիւնը։ Առաջին երկու դասակարգերը պահանջում էին հետևել հին սովորութեան՝ հաւաքուել առանձին-առանձին և ձայնատուութիւնն էլ կատարել ջոկ-ջոկ և ոչ թէ ներկայացուցիչների քանակութեան համեմատ, այսինքն, որ ամեն մի դասակարգ, իբրև մի ամբողջութիւն, ունենայ մի ձայն։ Այդ, ի հարկէ, համապատասխանում էր ազնուականների ու հոգևորականների նեղ դասակարգային շահերին, նրանք այդ դէպքում կունենային երկու ձայն, այսինքն՝ սկզբից արդէն ապահովուած ժեծամասնութիւն, չնայած որ երրորդ դասակարգը ունէր նոյնքան ներկայացուցիչներ, որքան միւս երկու դասակարգերը միասին վերցրած։

Ժողովրդական ներկայացուցիչները հէնց առաջին քայլում արդէն տեսան, որ բարձր դասակարգերը մտադիր են պահպանելու իրենց դասային առանձնայատկութիւններն ու ժենաշնորհումները։ Մի հանգամանք, որի հետ չէր կարող երբէք հաշուել երրորդ դասակարգը. նրա կռիւը հէնց այդ դասային առանձնայատկութիւնների և դրա հետ կապուած արտօնութիւնների դէմ էր. նա պահանջում էր իսպառ վերացնել հասարակական զանազան խաւերի մէջ գոյութիւն ունեցող բոլոր անջրպետները. նա ձգտում էր ստեղծել այնպիսի սոցիալ-քաղաքական կազմ, ուր դասակարգային տարբերութիւնները հիմնուած լինէին սեփականատիրական հողի վրայ, բայց որտեղ տիրէր կատարեալ հաւասարութիւն օրէնքի առաջ։

Ամբողջ հինգ շաբաթ բանակցութեան մէջ էին այդ առթիւ երեք դասակարգերը, բայց ոչ մէկն էլ չէր ուզում զիջել։ Երրորդ դասակարգը, տեսնելով, որ ժամանակ է արդէն կազմակերպել ու գործի ծեռնամուխ լինել, թէ չէ հակառակ դէպքում անգործութեան մէջ մնալով կարող է կորցնել ժողովրդի վստահութիւնը,—յունիսի 17-ին յայտարարեց իրան ազգային ժողով։ Այսպիսով երրորդ դասակարգը ցոյց տուեց, որ նա իրան է համարում ժողովրդի իսկական ներկայացուցիչ և չէ ընդունում դասային

*) Ընտրուած էին 270 պատգամաւորներ ազնուականութիւնից, 291 հոգի հոգևորականութիւնից, 557 հոգի երրորդ դասակարգից, ընդամենը՝ 1118 պատգամաւորներ։

բաժանումները։ Եւ արդարև. դրանով նա միանգամից վերջ տուեց դասային խտրութիւններին ու հիմք դրեց քաղաքացիական հաւասարութեան։

Դրա հետ միասին ժողովը կայացրեց մի շարք ուրիշ նոյնչափ համարձակ որոշումներ, որոնք յետագայում ունեցան մեծ նշանակութիւն։

Ամենից առաջ ազգային ժողովը յայտարարեց, որ բոլոր հարկերն ու տուրքերը պիտի ժողովուին նախկին ձևով, մինչև որ ժողովը ինքը կը նշանակէ նոր հարկեր ու տուրքեր։

2) Թէև ազգային ժողովը համարում է կառավարութեան կողմից արուած բոլոր պետական փոխառութիւնները ապօրինի, քանի որ նրանք արուել են առանց ժողովրդի կամքը հարցնելու, այնուամենայնիւ նա երաշխաւորում է բոլոր պետական պարտքերի ապահովութիւնը, մինչև որ պետական իշխանութեան դեկը նրա ձեռքին կը լինի։

3) Ի նկատի առնելով, որ ժողովուրդը զգում է հացի մեծ պակասութիւն, ազգային ժողովը իր առաջին պարտականութիւններից մէկն է համարում քննել սովի պատճառները ու ձեռք առնել անմիջապէս կտրուկ միջոցներ պաշտպանելու ժողովուրդը սովից, և այդ նպատակով ընտրում է մի յատուկ յանձնաժողով։

Այս որոշումները մեծ տպաւորութիւն գործեցին թէ ժողովրդի և թէ կառավարչական շրջանների վրայ։ Եթէ առաջին որոշումներով ազգային ժողովը կապեց իր գոյութեան հետ Ֆրանսիայի ամբողջ պետական կրեդիտը և այդպիսով իր գոյութեան սպառնացող բռնի միջոցների առաջն առաւ, ապա իր վերջին որոշումով նա գրաւեց ժողովրդական լայն մասսաների անկեղծ համակրանքն ու պաշտպանութիւնը։ Եւ արդարև. ժողովուրդը, տեսնելով իր ներկայացուցիչների հաստատակամութիւնը, նրանց համարձակ ու քաջարի քայլերը, լցուեց բերկրութեամբ ու լաւ ապագայի վառ յոյսերով։

Կառավարութիւնը, որ պաշտպանում էր ազնուականներին ու հոգևորականներին, տեսնելով երրորդ դասակարգի յամառութիւնը, որոշեց դիմել բռպրեսիւ միջոցների։

Յունիսի 20-ին նշանակուած էր ազգային ժողովի նիստը. լուր կար, որ այդ օրը հոգևորականութեան մեծ մասը միանալու է երրորդ դասակարգի հետ։

Սակայն պատգամաւորները, առաւօտեան գալով նիստի, տեսան ժողովի դահլիճի դռները փակ և բոլոր մուտքերը զինուորներով բռնուած...

Պատգամաւորները, զրգռուած կառավարութեան գործ դրած բռնութիւնից, որոշեցին անմիջապէս հաւաքուել մի ուրիշ տեղ։ Ամբոխի անագին բազմութեան ուղեկցութեամբ բոլոր 600 պատգամաւորները գնացին քաղաքային տներից մէկը, ուր կար ընդարձակ դահլիճ, յատկացրուած գնդակ խաղալուն (Jeu de Paume)։ Այստեղ յուզուած պատգամաւորները խիստ բողոքեցին կառավարութեան բռնած դիրքի դէմ և ապա ընդհանուր ոգևորութեան մէջ հանդիսաւոր կերպով երդում տուին չը զիջել կառավարութեան պահանջներին։ «Երդւում ենք, ասում էին ժողովրդի ներկայացուցիչները միաբերան (մէկի բացառութեամբ), չը ցրուել ու հաւաքուել ամէն օր ու ամէն տեղ, ուր հնարաւոր կը լինի, մինչև որ Ֆրանսիայի սահմանադրութիւնը վերջնականապէս կը մշակուի ու հաստատուն հիմունքների վրայ դրուած կը լինի»։

«Երդւում ենք»,—գոչեց փողոցում խռնուած ամբոխը, և հազարաւոր ձայներ երկինք բարձրացան, աղաղակելով «Կեցցէ՛ Ազգային ժողովը»...

Յունիսի 20-ի այս յաւերժայիշատակ նիստը արդէն յեղափոխութեան սկիզբն էր. պարզ էր, որ բուրժուազիան պատրաստ էր իր կեանքի գնով պաշտպանելու ժողովրդի ազատագրութեան գործը։ Այս նիստը կենդանի ապացոյց էր, որ այլևս ոչ մի կերպով հաշտութիւն չէ կարող կայանալ հին ու նոր կարգերի միջև։

«Արիւնոտ կռիւ կամ մահ, այսպէս անողոք կերպով էր դրուած հարցը»,—ասում է Ֆրանսիացի կին-գրող Ժորժ Զանդը։

Երրորդ դասակարգի ներկայացուցիչները ըստինքեան անկարող էին դիմադրել կառավարութեան, եթէ որ նրանց նեցուկ չը հանդիսանար ամբողջ ժողովուրդը, մանաւանդ դիւղացիներն ու Պարիզի բանուորները։—Բարձր դասա կարգերը շատ շուտով ըմբռնեցին այդ հանգամանքի իրական նշանակութիւնը, ուստի և հետզհետէ տեղի տուին։

Ազգային ժողովի յաջորդ նիստին միացան երրորդ դասակարգին 149 հոգևորականներ։

Թէև սա արդէն երրորդ պարտութիւնն էր, որ կրում էր կառավարութիւնը, այնուամենայնիւ Լիւդովիկոս XVI-ը, ենթարկուելով մի խումբ պալատականների խորհուրդներին, որոշեց անձամբ ներկայանալ պատգամաւորներին ու ստիպել անխախտ պահպանել դասակարգերի բաժանումը։

Այդ նիստը կայացաւ յունիսի 23-ին։ Ներկայ էին բոլոր դասակարգերը. ժողովը կրում էր շատ հանդիսաւոր բնաւորութիւն։ Երբ Լիւդովիկոս XVI-ը ներս մտաւ, նրան ընդունեցին մեռելային լռութեամբ, իսկ նրա ճառը, որ նա արտասանեց իր փափուկ ու թոյլ բնաւորութեան անհամապատասխան հրամայողական տօնով, առաւել ևս գրգռեց և մեծ յուզմունք առաջ բերեց։ Թագաւորը սկզբում յայտնեց իր անբաւականութիւնը, որ պատգամաւորները երկու ամսայ ընթացքում չը կարողացան համաձայնութեան գալ խորհրդակցութեան ձևի վերաբերմամբ, ապա կանգ առաւ մի շարք բարենորոգումների վրայ, որոնք անհրաժեշտ էին իրագործել, ու վերջացրեց իր խօսքը, պատուիրելով, որ իւրաքանչիւր դասակարգ առանձին ժողովի։

«Ես հրամայում եմ ձեզ, յարգելի պարոններ, անմիջապէս ցրուել, իսկ վաղը առաւօտեան հաւաքուել առանձին-առանձին ու ձեռնամուխ լինել ձեր պարապմունքներին»։

Երբ Լիւդովիկոս XVI-ը հեռացաւ, նրան հետևեցին բոլոր մինիստրները, եպիսկոպոսները, մի քանի ծխական քահանաներ և ազնուականների մեծ մասը. մնացեալ պատգամաւորները տեղից աղնուականների մեծ մասը. մնացեալ պատգամաւորները տեղից չը շարժուեցին. մի քանի րոպէ ամենքը յուզուած լուռ նստել էին, երբ հռչակաւոր Միրաբոն, ընդհատելով ծանր լռութիւնը, իր ոլորընդոստ ձայնով դարձաւ պատգամաւորներին.

«Պարոնայք. խոստովանում եմ, որ այն ամենը, ինչ որ մենք այստեղ լսեցինք, կարող էր փրկել մեր հայրենիքը, եթէ որ բրուայ

երգումը. նա արգելում է ձեզ ցրուել, նախ քան դուք հաստատուն հիմքերի վրայ չէք դնի սահմանադրութիւնը»։

Այդ միջոցին ներս է մտնում ցերեմոնիմէյստերը (գլխաւոր կարգադրիչը արքունիքում) և յիշեցնում է ժողովին թագաւորի հրամանը։

«Գնացէք և ասացէք ձեր պարոնին,—բացականչում է Միրաբոն,—որ մենք հաւաքուած ենք այստեղ ժողովրդի կամքով և մեզ այստեղից կարող են հեռացնել միայն սուինները»։

«Դուք, պարոնայք, այսօր նոյնն էք, ինչ որ էիք երէկ,—աւելացրեց պատգամաւոր Սիէյսը, դիմենք մեր գործին»։

Եւ ժողովը լի վճռողականութեամբ վերսկսեց իր աշխատանքը։

Իսկ երբ ցերեմոնիմէյստերը, պալատը վերադառնալով, յայտնեց ազգային ժողովի որոշման մասին, թագաւորը իր սովորական անհոգութեամբ պատասխանեց. «Եթէ չեն ուզում ցրուել, թող մնան»...

Ազգային ժողովի յաջորդ նիստերի ժամանակ կամաց կամաց գալիս էին բարձր դասակարգերի ներկայացուցիչները. վերջապէս Լիւդովիկոս XVI-ը, ընկճուած կրած պարտութիւնից, ինքը հրամայեց մնացած փոքրաթիւ հոգևորականներին ու ազնուականներին միանալ ազգային ժողովին։

Ազգային ժողովի առաջին ընդհանուր նիստը կայացաւ յունիսի 27-ին։

III.

ՊԱՐԻԶԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ, ԲԱՍՏԻԼԻԱՅԻ ԳՐԱՒՈՒՄԸ ԵՒ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի ԳԻՇԵՐԸ.

Ժողովրդի տարած յաղթութիւնից յետոյ կարելի էր սպասել, որ Լիւդովիկոս XVI-ը և պալատական շրջանները, համոզուած լինելով, որ անհնարին է պատմութեան անիւը հետ դարձնել, կը հաշտուին իրականութեան հետ և կը խաղաղուին. բայց իզուր։ Արքունիքը սկսեց նոր ինտրիգներ նիւթել ու մեծ պատրաստութիւններ տեսնել պետական նոր հարուածի (coup d'état) համար։ Պալատականները ներշնչեցին Լիւդովիկոս XVI-ին այն միտքը, որ պէտք է կամ տեղափոխել ազգային ժողովը դաւառ, կամ թէ

բոլորովին ցրել։ Բայց մինչ այդ անհրաժեշտ էին համարում կենտրոնացնել զօրքը Վերսալում, որպէսզի զսպած պահեն թէ պատգամաւորներին և թէ Պարիզի ու Վերսալի ազգաբնակութիւնը։

Եւ արդարև, ամենակարճ ժամանակամիջոցում Վերսալը ընդունեց պատերազմական բանակի կերպարանք. զօրքերը, այն էլ օտար վարձկան զօրքերը, անընդհատ գալիս էին և լցուում Վերսալում։ Ազգային ժողովի նիստերի դահլիճը շրջապատուած էր զօրքով։ Պարզ էր, որ կառավարութեան դիտաւորութիւնները բարի բան չէին գուշակում։ Ժողովուրդը, որ ամբողջովին նուիրուած էր ազգային ժողովին և չէր դադարում ամեն կերպ իր հաւատարմութիւնը արտայայտելուց պատգամաւորներին, հետզհետէ յուզուում, անհանգստանում էր, տեսնելով կառավարութեան բոլոր չարագուշակ պատրաստութիւնները։

«Այն վտանգը, ասում է Մինիէն, որ սպառնում էր ժողովրդական ներկայացուցիչներին, որ սպառնում էր Պարիզի ընակչութեանը, և ապա հացի մեծ պակասութիւնը՝—այդ ամենը տաջութեանը, և ապա հացի մեծ պակասութիւնը՝—այդ ամենը տանում էր դէպի ապստամբութիւն. ամենքը ոգևորութեամբ անցան յեղափոխութեան կողմը. կապիտալիստները՝ ստիպուած մնանկութեան վախից, կրթուած մարդիկ և առհասարակ ամբողջ երրորդ դասակարգը՝ դրդուած հայրենասիրութեան զգացմունքից*), իսկ ճնշուած ու հարստահարուած ժողովուրդը նրա համար, որ ծարաւի էր փոփոխութիւնների, որ մեղադրում էր իր տանջանքների մէջ արքունիքը ու արտօնուած դասակարգերը»։

Ֆրանսիայի մայրաքաղաքը այդ օրերում հիմնովին կերպարանափոխուել էր։ Ամբոխը ամբողջ օրեր խմբուած փողոցներում ու հրապարակներում քննադատում իր շուրջը կատարուող երևոյթները, խօսում էր հայրենիքին սպառնացող վտանգի մասին, յորդորում էր տեղի չը տալ կառավարութեան բռնութիւններին ու պաշտպանել ժողովրդի իրաւունքները։ Գլխաւոր ժողովատեղին Պալէ Ռոյալն էր. այստեղ էին կուտակուած սրճարանները, հիւրանոցները, խանութները, թղթախաղի տները. այստեղի ընտանիները, դարձակ այգում անընդհատ տեղի էին ունենում բազմաբոլորովին ցրել։ Բայց մինչ այդ անհրաժեշտ էին համարում կենտրոնացնել զօրքը Վերսալում, որպէսզի զսպած պահեն թէ պատգամաւորներին և թէ Պարիզի ու Վերսալի ազգաբնակութիւնը։

Եւ արդարև, ամենակարճ ժամանակամիջոցում Վերսալը ընդունեց պատերազմական բանակի կերպարանք. զօրքերը, այն էլ օտար վարձկան զօրքերը, անընդհատ գալիս էին և լցուում Վերսալում։ Ազգային ժողովի նիստերի դահլիճը շրջապատուած էր զօրքով։ Պարզ էր, որ կառավարութեան դիտաւորութիւնները բարի բան չէին գուշակում։ Ժողովուրդը, որ ամբողջովին նուիրուած էր ազգային ժողովին և չէր դադարում ամեն կերպ իր հաւատարմութիւնը արտայայտելուց պատգամաւորներին, հետզհետէ յուզուում, անհանգստանում էր, տեսնելով կառավարութեան բոլոր չարագուշակ պատրաստութիւնները։

«Այն վտանգը, ասում է Մինիէն, որ սպառնում էր ժողովրդական ներկայացուցիչներին, որ սպառնում էր Պարիզի ընակչութեանը, և ապա հացի մեծ պակասութիւնը՝—այդ ամենը տանում էր դէպի ապստամբութիւն. ամենքը ոգևորութեամբ անցան յեղափոխութեան կողմը. կապիտալիստները՝ ստիպուած մնանկութեան վախից, կրթուած մարդիկ և առհասարակ ամբողջ երրորդ դասակարգը՝ դրդուած հայրենասիրութեան զգացմունքից*), իսկ ճնշուած ու հարստահարուած ժողովուրդը նրա համար, որ ծարաւի էր փոփոխութիւնների, որ մեղադրում էր իր տանջանքների մէջ արքունիքը ու արտօնուած դասակարգերը»։

---

*) Աւելի ճիշտ կը լինէր ասել՝ իր քաղաքական ոչնչութեան դառն զգացմունքից ու իր տնտեսական ոյժի գիտակցութիւնից։

մարդ միտինգներ. հռետորների վառվռուն ճառերը բորբոքում, ելէքթրականացնում էին ամբոխը...

«Պարիզում, ասում է Դէյսէրը, կար մօտ 100,000 մարդ, որ զուրկ էր գիշերուայ ապաստարանից. նա հաց չունէր ուտելու, տուն չունէր ապրելու, նրա վերջին ապաստարանը՝ բանտերն էին կամ տաժանակիր աշխատանքները»: Սրանք էին և Պալէ Ռոյալի մշտական յաճախորդները:

Ապստամբութեան աղդանշանը տուեց ինքը կառավարութիւնը յուլիսի 11-ին, հրաժարեցնելով ֆինանսների մինիստր Նէկկէրին, որին հասարակութիւնը մեծ սիրով էր վերաբերուում, շնորհիւ ի միջի այլոց և այն հանդամանքին, որ առաջին անդամ ի գիտութիւն հասարակութեան նա հրատարակեց պետական բիւջէն:

Յունիսի 12-ին Նէկկէրի հրաժարեցման ու աքսորի լուրը հասաւ Պարիզ. ամբողջ քաղաքը մի քանի բոպէի մէջ խռնուեց, յուզուեց, իրարանցման մէջ ընկաւ: Պալէ Ռոյալում ժողովուած էր 10,000 մարդ. ամենքն էլ յուզուած էին և այլայլուած: Յանկարծ ամբիոն է բարձրանում ամբոխի հռետորներից մէկը՝ երիտասարդ արիասիրտ փաստաբան Կամիլ Դէմուլէնը. սրա կրակոտ ճառը խանդավառում է ամբոխին:

«Քաղաքացիներ. պէտք չէ կորցնել մի բոպէ անդամ: Նէկկէրի հրաժարեցումը՝ աղդանշան է մի նոր բարթուղիմէոսեան գիշերի հայրենասէրների համար. այսօր երեկոյեան արդէն շվեյցարացի ու գերմանացի զօրքերը յարձակում պիտի գործեն մեզ վրայ. մեզ մնում է միայն մի միջոց՝ դիմել զէնքի»:

«Զէնք, զէնք»—կանչում է միաձայն յուզուած ամբոխը...

Ապա հռետորը առաջարկում է ընտրել կոկարդներ հակառակորդներից տարբերուելու համար: «Կամենում՞ք կանաչ կոկարդներ, որ յուսոյ նշան է, թէ կարմիրը, որ նշան է արիւնով գնած ազատութեան»: «Կանաչը, կանաչը»—աղաղակում է բազմութիւնը: Դէմուլէնը խսկոյն կտրում է մօտակայ ծառից մի փոքրիկ ճիւղ և կպցնում գլխարկին. ամբոխը հետևում է նրա օրինակին: Այստեղից ժողովուրդը հանդիսաւոր գնացքով անցնում է մայրաքաղաքի փողոցները: Սակայն շուտով զօրքը վրայ է հասնում, տեղի է ունենում ընդհարում, որ առանց արիւն թափելու չէ անցնում:

Ժողովրդի զայրոյթին ու կատաղութեան չափ չկար...

Կոչը «դէպի զէնք» տարածուում է ամբողջ քաղաքում ու նրա արուարձաններում:

Ապստամբութիւնը սկսած էր:

Յուլիսի 13-ին նա ստացաւ որոշ կերպարանք: Ամեն տեղ կազմակերպուեցին կամաւորների խմբեր. ով ինչով կարողանում էր, զինուում էր. ամեն տեղ կռում կոփում էին սրեր, նիզակներ, թալանում մասնաւոր ու պետական զէնքի պահեստներ:

Յաջորդ օրը, յուլիսի 14-ին, լուր տարածուեց, որ կառավարչական զօրքերը յարձակուելու են մայրաքաղաքի վրայ, որ Բաստիլիայի թնդանոթները ուղղուած են քաղաքի վրայ: Այս լուրը կատաղեցրեց ամբոխին. յանկարծ լսուեց՝ «դէպի Բաստիլիա, դէպի Բաստիլիա»... Այս կոչը օրհասական էր. մի ակնթարթում ժողովուրդը համակուեց մի անդրդուելի զգացմունքով աւերել, կործանել այն ատելի ամրոցը, որ միշտ պաշտպան էր հանդիսացել բռնապետներին:

Բաստիլիան մի մեծ ամրոց էր, որ իշխում էր մայրաքաղաքի վրայ. այնտեղից կարելի էր ռմբակոծել քաղաքի մի մասը: Միևնոյն ժամանակ նա բանտի տեղ էր ծառայում քաղաքական «յանցաւորների» համար: Այստեղ կեանքը այնքան դժան էր, որ սովորաբար մարդիկ փոքր ի շատէ երկար բանտարկութիւնից յետոյ ցնորուում էին: 45 տարուայ ընթացքում այդ բանտում մեռել էին 30,000 բանտարկեալներ...

Զարմանալի չէ, որ Բաստիլիան այնքան ատելի էր դարձել Պարիզի աղդաբնակութեան համար. և երբ նա առաջին անդամ սթափուեց ու զգաց իր ոյժը, յարձակուեց Բաստիլիայի վրայ:—

Ամրոցի զօրքը սկզբում դիմադրում էր. նրա անվրէպ զընդակները արագօրէն նօսրացնում էին պաշարողների շարքերը, մանաւանդ որ սրանք չէին կարողանում ճնշել ամրոցի պաշտպանների յետևում պատսպարուածներին. բայց հէնց այս հանգամանքը առաւել ևս կատաղեցնում ու զրդռում էր ամբոխի վրէժխնդրութիւնը:

Յարձակողների շարքերը հետզհետէ խտանում էին. քաղաքից անընդհատ գալիս էին նոր զինուած խմբեր. ժողովրդի հետ վիացել էր և ազգային գվարդիան: Կռիւը քանի գնում աւելի տաքանում ու սաստկանում էր:

Պարիզի քաղաքագլուխ Ֆրէսսէլը գաղտնի իմացէր տուել ամ-

բոցի հրամանատարին (կոմէնդանտին), որ շուտով օգնութիւն կը հասցնի։ «Ես հանգստացնում եմ պարիզցիներին խոստումներով, դրում էր նա կոմէնդանտին, դիմադրեցէք, մինչև երեկոյ կըստանաք օգնութիւն»։

Սակայն երեկոյեան մօտ էր արդէն, իսկ օգնութիւն չը կար...

Կոմէնդանտը մեծ ճիգ էր թափում ոգեւորելու ամրոցի զինուորներին շարունակել դիմադրութիւնը, բայց իզուր. զինուորները որոշեցին անձնատուր լինել ժողովրդին։ Ամրոխը ցնծութեան աղաղակներով ներս խուժեց ամրոցը։ Նա ամենից առաջ մահուան ենթարկեց կոմէնդանտին ու մի քանի չարագործ զինուորների, որոնք դեռ շարունակում էին կրակել ժողովրդի վրայ։

Այսպէս, 1789 թ. յուլիսի 14-ին Բաստիլիան կործանուեց, իսկ մի քանի օրից յետոյ նա հաւասարուեց հողի հետ...

Բաստիլիան մարմնացնում էր իր մէջ հին բռնակալական դաժան կարգերը։ Նրա աւերումը բռնակալութեան դէմ յայտարարուած կուի առաջին զօրեղ հարուածն էր։ Այդ օրը խփեց հին միապետական—աւատական կարգերի վերջին ժամը։ Ահա թէ ինչու ֆրանսիական ժողովուրդը մինչև այսօր էլ տօնում է յուլիսի 14-ը իբրև ազգային ազատագրութեան օր։

Երբ յուլիսի 14-ին երեկոյեան հերցոգ Լիանկուրը հաղորդեց Լիւդովիկոս XVI-ին Բաստիլիայի պաշարման մասին, նա զարմացած բացականչեց.

«Բայց դա արդէն ապստամբութիւն է»։

«Ո՛չ, տէր, պատասխանեց հերցոգը համարձակութեամբ, դա ապստամբութիւն չէ, այլ յեղափոխութիւն է»։

Ամրոցը առնելուց յետոյ, ժողովուրդը մեծ յաղթանակով վերադարձաւ Պարիզ և ուղղակի դիմեց դէպի քաղաքային խորհրդարանը (բատուշան)։ Այստեղ նա ամենից առաջ դատապարտեց Ֆրէսսէլին։ Քաղաքացիներից մէկը առաջ գալով կարդաց նրա վերոյիշեալ գրութիւնը, որ գտել էին կոմէնդանտի շորերի մէջ, ու դիմելով Ֆրէսսէլին ասաց. «Դուք, պ. Ֆրէսսէլ, դաւաճան էք. հայրենիքը ձեզանից հրաժարւում է»։ Հէնց որ նա հրապարակ դուրս եկաւ, գնդակահար ընկաւ գետին։

Չնայած այս ամենին, պալատական շրջաններում պատրաստւում էին իրագործելու իրանց դաւերը ազգային ժողովի դէմ։

Ժողովը, տեղեկանալով արքունիքի բոլոր չարամիտ մտադրութիւնների մասին, ձեռք առաւ եռանդուն միջոցներ գալիք չարիքների առաջն առնելու համար։

Ամենից առաջ ժողովը որոշեց պահանջել կառավարութիւնից հեռացնել զօրքը. ապա երկիւղ քաշելով, չը լինի թէ կառավարական զօրքը գրաւի ժողովի նիստերի դահլիճը, որոշեց շարունակել նիստերը անընդհատ գիշեր ու ցերեկ. պատգամաւորների մի մասը պիտի զբաղւէր ցերեկը, իսկ միւս մասը՝ գիշերը։ Հէնց որ ժողովը լուր առաւ Պարիզի ապստամբութեան մանրամասնութիւնների ու Բաստիլիայի գրաւման մասին, անմիջապէս որոշեց յատուկ պատգամաւորութիւն ուղարկել թագաւորի մօտ ու պահանջել հեռացնել բոլոր զօրքերը Պարիզից ու Վերսալից։ Պատգամաւորների բերած պատասխանը բաւարարութիւն չը տուեց ժողովին, ուստի և որոշեց միւս օր, յուլիսի 15-ին առաւօտեան, նոր պատգամաւորութիւն ուղարկել։ Բայց այդ օրը առաւօտեան ինքը թագաւորը եկաւ ժողով, և այս անգամ առանց շքախմբի, առանց գվարդիայի, և միայն իր երկու եղբայրների ուղեկցութեամբ։

Մի բարձրաստիճան յորդորեց ժողովին ընդունել թագաւորին լռութեամբ։ «Ժողովուրդների լռութիւնը, ասաց նա, խրատական է թագաւորների համար»։ Սակայն, երբ Լիւդովիկոս XVI-ը իր ճառի մէջ յայտնեց, որ ինքը հրամայել է դուրս բերել զօրքերին Պարիզից, երբ նա ասաց, որ ինքը ևս ազգի մի անդամն է, և ապա վերջացրեց իր խօսքը, աւելացնելով դողդողջուն ձայնով՝ «Տեսնում էք, ես ամբողջովին վստահանում եմ ձեզ, իմ ժողովրդի ընտրեալներին»,— դահլիճը դղրդաց պատգամաւորների բուռն ծափահարութիւններով։ Ամբողջ ժողովը ոտի կանգնեց և ճանապարհ դրեց նրան մինչև պալատը։ Այսպէս ազգային ժողովը հաշտուեց թագաւորի հետ։ Լիւդովիկոս XVI-ը հրամայեց յայտնել ժողովին, որ անմիջապէս աքսորվիկոս XVI-ը հրամայեց յայտնել ժողովին, որ անմիջապէս աքսորից կը վերադարձնէ Նէկկէրին և միւս օրը ինքը կը գնայ Պարիզ խաղաղացնելու ժողովրդին։ Ազգային ժողովը անմիջապէս ընտրեց 100 հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն, որ նախորդ օրը պիտի գնար Պարիզ ու յայտնէր մինիստրութեան հրաժարականը ու զօրքերի հեռացնելու մասին։ Պատգամաւորներից մէկն էր Բային, ազգային ժողովի նախկին նախագահը, որ այժմ նշանակուած էր Պարիզի քաղաքագլուխ, և ապա Լաֆայէտը՝ ժողովրդանակուած էր Պարիզի քաղաքագլուխ, և ապա Լաֆայէտը՝ ժողովրդա-

կան միլիցիայի հրամանատարը։ Ազգաբնակութիւնը պատգամաւորներին ընդունեց մեծ ոգևորութեամբ։

Յուլիսի 17-ին էլ թագաւորը ներկայացաւ ժողովրդին։ Պարիզի ազգաբնակութիւնը սկզբում նրան շատ սառն ընդունեց, բայց երբ Լիւդովիկոս XVI-ը արտասուքը աչքերին յայտնեց, որ ժողովրդի սէրը նրա ամենամեծ բաղձանքն է, ամէն կողմից թընդացին ծափահարութիւններ ու աղաղակներ՝ «կեցցէ թագաւորը»։

Այսպէս հաշտութիւն կայացաւ նաև ժողովրդի ու թագաւորի միջև։

Սրանից յետոյ հրաժարուած մինիստրները ու վիժուած դատաւորութեան բոլոր մասնակիցները իրանց բազմաթիւ շքախմբով թողին Ֆրանսիան ու անցան Իտալիա։ Սա հին ֆէօդալական կարգերի պաշտպանների առաջին գաղթականութիւնն էր. սրանից յետոյ քանի զարգանում էր յեղափոխութիւնը, այնքան բազմանում էր գաղթականների թիւը։

1789 թ. Յուլիսի 14-ը, Բաստիլիայի գրաւման այդ պատմական նշանաւոր օրը, ունեցաւ խոշոր հետևանքներ։

Պարիզի ապստամբական շարժմանը արձագանք տուին դաւառները։ Հէնց որ Բաստիլիայի գրաւման ու Պարիզի դէպքերի լուրը տարածուեց Ֆրանսիայում, ժողովուրդը թէ քաղաքներում և թէ գիւղերում անմիջապէս ոտի կանգնեց։ Քաղաքներում ապստամբ ժողովրդի առաջին գործն եղաւ՝ արտաքսել քաղաքային ու պետական պաշտօնեաներին, ընտրել յեղափոխական կոմիտէներ ու զինուել։ Պարիզի օրինակով ամէն տեղ կազմուեցին ժողովրդական միլիցիաներ, որոնք կարգ պիտի պահպանէին, իսկ կարևոր դէպքում նաև դիմադրէին կառավարութեան։

Գիւղը աւելի էր յուզուած։ Հարստահարուած, ճնշուած, արհամարհուած գիւղական մասսան ևս զգաց, որ հասել է իր ազատութեան ժամը, և շարժուեց. նրա սրտում դարերի ընթացքում կուտակուած վրէժխնդրութեան զգացմունքները դուրս պոռթկացին... Ազնուականների ամրոցները, վանքերը ու հոգևորականների տները աւերում, կործանում ու հրդեհում էին, իսկ ամենատելի անձնաւորութիւններին անխնայ կոտորում։ Հրդեհները տևեցին ամբողջ շաբաթներ։ Դոֆինէ գաւառում 14 օրուայ ընթանցքում այրուեց 72 ամրոց. նոյնն էր միւս գաւառներում։

Գիւղացիք դադարեցին հարկեր վճարելուց և իրենց ազատ

հողատէրեր յայտարարեցին։ Ամբողջ Ֆրանսիան աննկարագրելի սարսափների ասպարէզ էր դարձել։ Անհնար էր այս ահեղ շարժման առաջն առնել։ Անհրաժեշտ էր շտապել վերացնել դասային արտօնութիւնները, ոչնչացնել հիմնովին անհաւասարութիւնը, տապալել հին կարգերը ամբողջութեամբ ու հանել ժողովուրդը ստրկութեան ճանկերից։

Եւ այդ կատարուեց մի գիշերուայ ընթացքում։

Օգոստոսի 4-ի երեկոյեան նիստում արիստոկրատներից մէկը՝ Կոմս դը Նոայլը մի փայլուն ճառի մէջ բացատրեց ազգային ժողովին, որ անժամանակ կը լինէր սիններին դիմելը գիւղացիների ապստամբութիւնը զսպելու համար։ Մեր ձեռքի տակ, ասաց կոմսը, միայն մի միջոց կայ վերջ դնելու անկարգութիւններին, դա՝ վերացնել բոլոր այն անարդարութիւնները, որոնք պատճառ են դառել գիւղական ազգաբնակութեան յուզմունքներին։ Այդ նա առաջարկեց ոչնչացնել կալուածատէրերի բոլոր արտօնութիւնները, վերացնել ճորտութիւնը, և իր կողմից յայտարարեց, որ նա հրաժարուում է իր կալուածատիրական բոլոր իրաւունքներից։ Այս առաջարկը առաջ բերեց ժողովում մի աննկարագրելի ոգևորութիւն. բարձր դասակարգերի ներկայացուցիչները վեր էին կենում իրար յետևից և հրաժարուում իրանց բոլոր արտօնութիւններից ու իրաւունքներից։ Տեսարանը չափազանց սրտառուչ էր, և պատգամաւորները խիստ զգացած էին։ Այդ օր մինչև կէս գիշեր ոչնչացրին բոլոր միջնադարեան ֆէօդալական կարգերը, բոլոր արտօնութիւնները՝—ազնուականութեան որսի բացառիկ իրաւունքը, տասնորդի հատուցումը, պաշտօնների առևտուրը, քաղաքների ու գաւառների արտօնութիւնները, ներքին մաքսերը, հաւքարութիւնը, բազմաթիւ հարկերն ու տուրքերը և այլն, և այն։

«Օգոստոսի 4-ի գիշերը, ասում է Մինիէն, տապալեց այն կարգերը, որտեղ ամէն ինչ պատկանում էր մասնաւոր անձանց և ստեղծեց նոր կարգեր, որտեղ ամէն ինչ պիտի պատկանէր ամբողջ ազգին։ Այդ գիշերը փոխեց Ֆրանսիայի կերպարանքը և բողջ ազգին։ Այդ գիշերը փոխեց Ֆրանսիայի մէջ հաւասարութիւն։ Այդ օրաժամը բոլոր Ֆրանսիացիների մէջ հաւասարութիւն։ Այդ օրից սկսած իրաքանչիւր քաղաքացու առաջ բացուեց ազատ ճանապարհ դէպի հասարակական պաշտօններ, դէպի սեփականատիրութիւն, դէպի արդիւնագործութիւն։ Օգոստոսի 4-ի գիշերը նոյն չափ մեծ յեղաշրջում առաջ բերեց, որչափ և յուլիսի 14-ը,

որի հետևանքն էր նա։ Օգոստոսի 4-ի գիշերը, տապալելով հին կարգերը, հնարաւորութիւն տուեց ժողովրդին ստեղծելու նոր հասարակական ու պետական կազմ»։

Օգոստոսի 4-ի գիշերից յետոյ սկսում է յեղափոխութեան պատմութեան մէջ նոր շրջան։ Առաջին քայլը արուած էր՝ տապալուած էին հին կարգերը։ Մնում էր երկրորդ քայլը անելու՝ հին աւերակների տեղում կառուցանել նոր հոյակապ շէնք։ Եւ ազգային ժողովը անցաւ այդ ստեղծագործական աշխատանքին. նա դարձաւ Սահմանադիր ժողով։

IV.

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ

1.

Ժողովրդական ապստամբութիւնից առաջ ազգային ժողովը ձեռնամուխ էր եղել ապագայ սահմանադրութեան հիմնական սկզբունքների մշակման, սակայն ապստամբութիւնը ստիպեց ընդհատել այդ աշխատանքը։ Օգոստոսի 4-ի գիշերից յետոյ նա ամբողջովին նուիրուեց այդ գործին, որ և տևեց մինչև 1791 թ. սեպտեմբերի 30-ը։

Ամենից առաջ սահմանադիր ժողովը մշակեց աշխարհահռչակ «մարդկային և քաղաքացիական իրաւունքների դեկլարացիան» (ծանուցումը), որ պարունակում է իր մէջ 18-դ դարի փիլիսոփայական մտքի բոլոր յառաջադէմ սկզբունքները։

Ամբողջ դեկլարացիան բաղկացած է 17 յօդուածներից. ահա դրանցից մի քանիսը։

Յօդ. 1. Մարդիկ ծնւում ու ապրում են ազատ ու հաւասար։ Հասարակական խաւերի միջև կարող են լինել խտրութիւններ, երբ նրանք օգտաւէտ են հասարակութեան համար։

Յօդ. 2. Իւրաքանչիւր քաղաքական միութեան նպատակն է՝ պահպանել մարդու բնական ու անեղծանելի իրաւունքները. այդ իրաւունքներն են՝ ազատութիւն, սեպհականութիւն, ապահովութիւն և դիմադրութիւն ամեն մի բռնութեան։

Յօդ. 3. Ժողովուրդն է գերագոյն իշխանութեան աղբիւրը. ոչ մի մարմին ոչ մի անհատ չէ կարող ունենալ իշխանութիւն, եթէ սա ուղղակի չէ բղխում ժողովրդից։

Յօդ. 4. Իւրաքանչիւր անհատ ազատ է, երբ նա կարող է անել ամեն բան, ինչ որ չէ վնասում ուրիշին. հետևաբար, ամեն մի անհատ օգտուում է իր բնական իրաւունքներից այն սահմաններում, ինչ սահմաններում կարող է օգտուել նոյն իրաւունքներից հասարակութեան իւրաքանչիւր անդամը. այդ սահմանները որոշուում են միայն օրէնքով։

Յօդ. 5. Օրէնքը կարող է արգելել այն ամենը, ինչ որ վնասակար է հասարակութեան համար։ Այն ամենը, ինչ արգելուած չէ օրէնքով, թոյլատրելի է և չը պէտք է հանդիպի արգելքների։ Ոչ ոքի չը պէտք է ստիպել անել այն, ինչ օրէնքով նախատեսուած չէ։

Յօդ. 6. Օրէնքը՝ ընդհանուրի կամքի արտայայտութիւնն է. բոլոր քաղաքացիները իրաւասու են անձամբ կամ իրանց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու օրէնսդրութեան։ Օրէնքը պիտի լինի ամենքի համար միատեսակ. միևնոյն է, նա պատժողական է, թէ պաշտպանողական։ Բոլոր քաղաքացիները, լինելով հաւասար օրէնքի առաջ, հաւասասպէս կարող են ստանձնել ամեն տեսակ հասարակական պաշտօններ, տեղեր, իրանց ընդունակութիւններին համապատասխան, առանց որ և է ուրիշ տարբերութիւնների, բացի իրանց տաղանդի ու առաքինութիւնների տարբերութիւնից։

Յօդ. 10. Ոչ ոք չը պէտք է նեղուի իր համոզմունքների համար, լինին նրանք նոյն իսկ կրօնական, միայն թէ նրանց արտայայտութիւնը չը խախտէ օրէնքով սահմանուած հասարակական կարգերը։

Յօդ. 11. Մտքերի ու կարծիքների ազատ փոխանակութիւնը մարդու ամենաթանկագին իրաւունքներից մէկն է, ուստի և իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի ազատ խօսելու, գրելու ու տպելու, միայն մի պայմանով՝ որ նա ենթարկուում է պատասխանատուութեան, երբ օրէնքով սահմանուած դէպքերում ի չարն է գործ դնում այդ ազատութիւնը։

Դեկլարացիայի այս բարձր սկզբունքներն արագ տարածուեցին բոլոր քաղաքակիրթ երկիրներում, գրաւեցին ամբողջ մարդկութեան համակրանքն ու դարձան նրա զարմանքի ու նախանձախնդրութեան առարկան։ Մինչև այսօր էլ դեկլարացիան չէ կորցրել իր բարձր հմայքը, թէև նրա մէջ արծարծուած գաղափարները դառել են ժամանակակից բուրժուական հասարակութեանները։

մէջ սովորական բանալ սկզբունքներ, որոնք շատ քաղաքակիրթ երկրներում արդէն իրագործւած են։

Դեկլարացիան հրատարակելուց յետոյ ժողովն անցաւ պետական հիմնական օրէնքների քննութեան։ Եւ այստեղ ամենից առաջ նա պիտի լուծէր երկու կարևոր հարց. նախ՝ տալ, արդեօք, թագաւորին իրաւունք մերժելու ժողովրդական ներկայացուցիչների որոշումները, այսինքն՝ veto-ի իրաւունք, երկրորդ՝ ինչ ձևի պետի լինէր ապագայ ժողովրդական ներկայացուցչութիւնը՝ մի պալատեան, թէ երկպալատեան։

Մինչև այդ օրը ազգային ժողովը գործում էր համերաշխ։ Այժմ, երբ հարցը վերաբերում էր պետական կազմին, ժողովը բաժանւեց կուսակցութիւնների, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր տարբեր հայեացքը, նայած թէ ինչ դասակարգի ներկայացուցիչ էր հանդիսանում։ Բարձր դասակարգերի ներկայացուցիչները, լինելով պաշտպան հին կարգերի ու կողմակից մասնաւոր բարենորոգումների, կազմում էին միապետական կուսակցութիւն։ Բուրժուազիայի վերին խաւերի և գիւղացիութեան ներկայացուցիչները կազմում էին դեմոկրատական-սահմանադրական կուսակցութիւն, որոնց պարագլուխներն էին Միրաբոն և Սիէյսը. բուրժուազիայի ներքին խաւերի ներկայացուցիչները կազմում էին ծայրայեղ ձախակողմեան՝ դեմոկրատական կուսակցութիւն, որոնց գլխավորն էր՝ պատգամաւոր Բարնաւը։ Ամենամեծ կուսակցութիւնը՝ Միրաբոի կուսակցութիւնն էր։

Միապետականները, առհասարակ դէմ լինելով ժողովրդական ներկայացուցչութեան, աշխատում էին թագաւորի իրաւունքների սահմանափակման առաջն առնել, ուստի և պաշտպանում էին նրա veto-ի անպայման իրաւունքը։ Միրաբոի կուսակիցները պահանջում էին մի պալատ և համաձայն էին վերապահել թագաւորին ժողովի որոշումների իրագործումը յետաձգելու իրաւունքը (veto suspensif), դեմոկրատական կուսակցութիւնը պահանջում էր նոյնպէս մի պալատ, բայց բոլորովին հակառակ էր թագաւորին veto-ի իրաւունք տալուն։

Վերջապէս, սեպտեմբերի 12-ին, որոշեց, որ ժողովրդական ներկայացուցչութիւնը պիտի ունենայ մի պալատ, որ նրա ընտրութիւնը պիտի կատարւի երկու տարին մի անգամ և որ թագաւորը իրաւասու է յետաձգել նրա որոշումները չորս տարով։ Այս վերջին որոշումը մեծ դժգոհութիւն առաջ բերեց ժողովրդի մէջ, որովհետև նա պահանջում էր, որ թագաւորը ոչ մի մասնակցութիւն չունենայ օրէնսդրութեան մէջ։

Առհասարակ այդ ժամանակ բուրժուազիան փոքր առ փոքր բաժանւում էր երկու մասի. նրա վերին շերտերը կազմում էին խոշոր ու միջին կապիտալիստները, իսկ ստորին շերտերը՝ մանր արհեստաւորները ու պրոլետարիատը։ Բուրժուազիան, չնայած որ իշխանութիւնը իր ձեռքն էր ձգել շնորհիւ ժողովրդական լայն մասսաների աջակցութեան, ձգտում էր իր դիրքն ամրացնել ու պաշտպանել իր շահերը, ոտացութեան տալով աշխատաւոր մասսայի կարիքները։

Բուրժուազիայի այս տրամադրութիւնը, որ արդիւնք էր նրա երկիւղի պրոլետարական մասսայից, աւելի պարզ արտայայտւեց ընտրողական օրէնքի մէջ։ Այդ օրէնքով Ֆրանսիայի ամբողջ արական ազգաբնակութիւնը բաժանւած էր երկու կարգի՝ ակտիւ և պասսիւ քաղաքացիների։ Ակտիւ կոչւում էին այն քաղաքացիները, որոնք 25 տարեկան էին և վճարում էին երեք օրւայ աշխատավարձից ոչ պակաս հարկ (երեք ֆրանկ). մնացեալ քաղաքացիները կոչւում էին պասսիւ... Ընտրողական իրաւունքը պատկանում էր միայն ակտիւ քաղաքացիներին... Կանայք ևս անչափահասների ու ոճրագործների հետ միասին զրկւած էին ընտրողական իրաւունքից։

Թէև շատ պարզ էր, որ այս որոշումը հակասում էր «դեկլարացիայի» մէջ ընդունւած բարձր սկզբունքին, որ իւրաքանչիւր անհատ՝ աղքատ թէ հարուստ, կին թէ տղամարդ, հաւասար է բաղաքականապէս, այնուամենայնիւ ժողովը, սարսափ կրելով արթնացած աշխատաւոր մասսայից, շտապեց ընտրողական օրէնքի միջոցով օր առաջ զսպել նրա չափազանց արմատական ձգտումներն ու կենտրոնացնել իր ձեռքին ամբողջ քաղաքական իշխանութիւնը։

Աշխատաւոր մասսան լաւ ընմբռնեց բուրժուազիայի ձգտումներն և ուժգին կերպով բողոքեց այդ ընտրողական օրէնքի դէմ, զետեղելով մի յօդւած Մարատի *) խմբագրութեամբ լոյս տեսնող «Ժողովրդի բարեկամ» թերթում։

*) Ժան Պոլ Մարատը գրական գործիչ էր, որ եռանդուն կերպով պաշտպանում էր աշխատաւոր մասսայի շահերը իր «Ժողովրդի բարեկամ» լրագրում։ Նա մեծ հռչակ ստացաւ շնորհիւ իր սուր գրչի ու տաղանդաւոր գրւածների։

«Մենք, ասած էր այդ յօդուածում, այնտեղ էինք, ուր վտանգ կար. ամեն տեղ մենք պատրաստ էինք մեր արիւնը թափելու ձեր պաշտպանութեան համար. ամբողջ երեք ամիս անընդհատ մենք տարել ենք յոգնեցուցուցիչ կռիւ բոլոր տառապանքները. ամբողջ օրերով արևի տակ այրուում էինք, քաղցից ու ծարաւից տառապում, իսկ այդ միջոցին հարուստները թագնուում էին իրանց ներքնատներում և դուրս էին պրծնում միայն այն ժամանակ, երբ արդէն վտանգը անցած էր լինում, որպէսզի գրաւեն իշխանութիւնը ու պատուաւոր հասարակական պաշտօնները։ Ձեզ համար մենք զոհում էինք մեզ, իսկ այժմ 'ի տրիտուր մեր բոլոր զոհաբերութիւնների, չը ստացանք մխիթարութիւն անգամ՝ համարուելու մեր ձեռքով փրկած հայրենիքի քաղաքացիներ։ Ի՞նչն է ձեզ իրաւունք տալիս մեզ այդչափ արհամարհելու։ Չէ՞ որ դուք ինքներդ համաձայն էք, որ աղքատը նոյնպիսի քաղաքացի է, ինչպիսին և հարուստը։ Դուք առարկում էք, որ չքաւորին դիւրին է կաշառել։ Բաւական է, միթէ՞ դա ճիշտ է։ Նայեցէք լոյս աշխարհի բոլոր միապետութիւններին. միթէ՞ հարուստներից չէ բաղկացած կաշառակեր պալատականների ամբողջ բազմութիւնը»*)։

1789 թ. նոյեմբերի 12-ին ժողովը, կամենալով միակերպութիւն մտցնել վարչական սիստեմի մէջ, բաժանեց ամբողջ Ֆրանսիան 83 դեպարտամենտների, դեպարտամենտները՝ շրջանների, շրջանները՝ կանտոնների, կանտոնները՝ համայնքների (կոմմունների)։

Սահմանադիր ժողովի խոշոր ձեռնարկների մէջ մեծ տեղ է բռնում եկեղեցապատկան հողերի գրաւումը։ Հռչակաւոր եպիսկոպոս Թալէյրանը մի ընդարձակ զեկուցում ներկայացրեց ժողովին այդ մասին և առաջարկեց յայտարարել, որ բոլոր եկեղեցապատկան հողերը կազմում են պետութեան սեպհականութիւն։ Ժողովը ընդունեց այս առաջարկը 1789 թ. նոյեմբերի 2-ին, իսկ մի ամիս անց, որոշեց ծախել այդ կալուածներից 400 միլլիոն ֆրանկի չափ, որովհետև պետութիւնը գտնուում էր ծանր ֆինանսական դրութեան մէջ։ Ի նկատի առնելով, որ հոգևորականութիւնը կալուածների գրաւելուց յետոյ մնում էր նիւթապէս անապահով, ժողովը սահմանեց նրան կառավարութիւնից ռոճիկ։

*) В. Блосъ—«Ист. фр. рев.», եր. 85.

Հոգևորականութիւնը՝ սաստիկ դժգոհ այս բոլոր ձեռնարկներից, սկսեց զօրեղ պրօպագանդ մղել ժողովի դէմ, աշխատելով նրան վարկաբեկ անել ու խանգարել հողերի ծախելու դժուարին գործը։

Հոգևորականութեան այս թշնամական տրամադրութիւնը դեռ չէր անցել, երբ ժողովը մի նոր օրէնք հրատարակեց, կրկին ուղղած հոգևորականութեան դէմ։ Այդ օրէնքով եպիսկոպոսների թիւը սահմանափակւում էր դեպարտամենտների թւի համեմատ. եպիսկոպոսները ու ծխական քահանաները պիտի ընտրուէին, ժողովրդից. հոգևորականները պետական պաշտօնեաների պէս պիտի տային քաղաքացիական երդումն սահմանադրութեանը հաւատարիմ մնալու համար։

Այս որոշումները մեծ խլրտում առաջ բերին հոգևորականութեան մէջ. դժգոհ էին նոյն իսկ ծխական քահանաները. այդ օրէնքը վերջնականապէս ձգեց հոգևորականութիւնը յեղափոխութեան թշնամիների գիրկը։ Ազնուականութեան հետ միացած, նա սկսեց անընդհատ որոգայթներ լարել, դաւեր նիւթել ժողովի և առհասարակ նոր կարգերի դէմ։

Միևնոյն ժամանակ ընդհանուր քաղաքական դրութիւնն էլ հետզհետէ աւելի էր ծանրանում։ Մի կողմից սովը, միւս կողմից՝ ժողովրդական մասսաների ծայրայեղ չքաւորութիւնը խիստ զգալի էր դարձել։

Յեղափոխութիւնը ըստինքեան ստեղծել էր ընդհանուր հասարակական-տնտեսական կեանքի մէջ մի չափազանց խառնակ վիճակ։ Բացի այդ զանազան բախտախնդիրներ օգտուում էին վիճակ։ Բացի այդ զանազան բախտախնդիրներ օգտուում էին հանգամանքից, որպէսզի իրանց դրպանները լցնեն. սրանք էժան գներով առնում էին ցորեն, դիզում պահեստներում և ապա թանկ գներով ծախում ժողովրդին...

Իրերի այս ծանրութեան միջոցին ազգային ժողովը ձեռնամուխ չեղաւ և ոչ մի լուրջ միջոցի, որպէս զի տար ժողովրդին հաց կամ աշխատանք...

«Պատմական ամենափառաւոր մոմէնտներին, ասում է պատմաբան Վ. Բլոսը, երբ տեղի են ունենում մեծ ու վճռորոշական կռիւներ, միշտ տուժում է ժողովուրդը։ Նա ոչ միայն իր արիւնն է թափում, այլ և հարկադրուած է լինում համբերութեամբ սպասել, քաղցած մնալ ու կրել ամեն տեսակ տառապանքներ, որովհետև քաղաքական յուզմունքները ստանում են այնքան խիստ

բնաւորութիւն, որ սովորական գործերը, որոնք անհրաժեշտ են հասարակական կարիքներին բաւարարութիւն տալու համար, դադար են առնում։ Երբ այդպիսի մի ալէկոծւած ժամանակ կենսական մթերքների արդիւնաբերութիւնն ու ապրանքների շրջանառութիւնը դառնում են անկանոն ու անբաւարար, ամենից առաջ և ամենից ուժեղ կերպով զգում է դրա ծանր հետեւանքները աշխատաւոր մասսան։ Երբ տեղի էր ունենում յեղափոխութեան կատաղի կռիւը ազատութեան համար, Ֆրանսիայի ժողովուրդը և մանաւանդ Պարիզի ազգաբնակութիւնը ստիպւած էր կրելու ամենասոսկալի տառապանքներ։ Եթէ, մի կողմից, այդ տառապանքները հանդիսանում էին իբրև մի դրդող ոյժ, որ առաջ էր մղում ժողովրդական մասսաները դէպի նորանոր կռիւներ յանուն լաւագոյն կարգերի, միւս կողմից՝ չէ կարելի չը զարմանալ այն հերոսութեան վրայ, որով նա տանում էր բոլոր տառապանքները» *)։

2.

Պարիզի ազգաբնակութիւնը մեծ ուշադրութեամբ ու հետաքրքրութեամբ հետեւում էր սահմանադիր ժողովի աշխատանքներին։ Ժողովում արծարծւող հարցերն անմիջապէս արձագանք էին գտնում ժողովրդական մասսաների մէջ. այստեղ ամեն մի հարց ենթարկւում էր խիստ քննադատութեան ու տաք վիճաբանութիւնների նիւթ դառնում։ Ժողովուրդը պարզ յայտնում էր իր համակրանքը կամ դժգոհութիւնը ժողովի այս կամ այն որոշման առթիւ։ Այսպէս քաղաքական կեանքը, կուսակցական կռիւները սկսեցին զարգանալ, որոշ գոյն ու կերպարանք ստանալ։ Այս ժամանակամիջոցում կազմակերպւեցին մի շարք քաղաքական ակումբներ, որոնց մէջ մեծ հռչակ ստացաւ ծայրայեղ ձախակողմինների՝ այսպէս կոչւած՝ «յեղափոխութեան բարեկամների» ակումբը։ Որովհետև այս ակումբի նիստերը տեղի էին ունենում սբ. Յակոբի վանքում, ուստի և նա ստացաւ «Եակոբինների ակումբ»-ի անունը։ Այս ակումբը ունէր իր բաժանմունքները նաև գաւառներում։ Յեղափոխութեան ամենատաք օրերին եակոբինների ակումբը գրաւեց ժողովրդական մասսաները, ներշնչելով նրանց վառ սէր դէպի ազատութիւն։

*) В. Блосъ—«Ист. фр. рев.», եր. 80

Հետաքրքրւելով սահմանադիր ժողովով, Պարիզի ազգաբնակութիւնը անտես չէր առնում նաև պալատական շրջանները։ Նա միշտ մեծ անվստահութեամբ էր վերաբերւում դէպի կառավարութիւնը։ Արքունիքն էլ, շնորհիւ իր բռնած անմիտ դիրքի դէպի ազգային ժողովը, մշտական նիւթ էր ծառայեցնում ու ամրապնդում ժողովրդի այդ անվստահ տրամադրութիւնը։

Նա դեռ երազում էր վերադարձնելու իր նախկին իշխանութիւնը, ուստի միշտ ձգտում էր նոր միջոցներ գտնելու ազատւելու սահմանադիր ժողովի ազդեցութիւնից։ Միակ միջոցը արքունիքը համարում էր թագաւորի գաղտնի փախուստը Վերսալից... Պալատական շրջանների առաջարկած ծրագրի համաձայն, թագաւորը պիտի փախչէր Մէց քաղաքը և այնտեղից կոչ անէր ազնւականութեան ու զօրքի այն մասին, որ դեռ հաւատարիմ էր մնացել միապետին, յայտարարել սահմանադիր ժողովը ու Պարիզի ազգաբնակութիւնը ապստամբ ու վերականգնել հին կարգերը...

Այս ծրագիրն իրագործելու համար արքունիքը սկսեց պատրաստութիւններ տեսնել և ամենից առաջ կենտրոնացնել զօրքը Վերսալում։ Իսկ որպէսզի զօրքերին աւելի լաւ գրաւեն իրանց կողմը, նրանց հանդիսաւոր ճաշ տւին։

Հէնց որ Պարիզ հասաւ այդ պատրաստութիւնների լուրը ու դրա հետ միասին և այն, որ ճաշկերոյթի ժամանակ ոգեները ոտնակոխ են արել յեղափոխութեան եռագոյն դրօշը,—ժողովուրդն ալէկոծւեց...

Հայի պակասութիւնն էլ, որ այդ ժամանակ խիստ զգալի էր, միւս կողմից էր գրգռում ամբոխը։

Ամենքը իրանց հայեացքները դարձրել էին դէպի Վերսալ...

Հոկտեմբերի 5-ին (1789 թ.) առաւօտեան յուզւած ամբոխը, որի մեծ մասը կանայք էին, հաւաքւել էր քաղաքային տան առաջ։ Կանայք, որ այդ օրը չէին կարողացել հաց առնել, անընդհատ աղաղակում էին՝ «հաց, հաց»... Այդ միջոցին յանկարծ լսւում է մի ուրիշ կոչ՝ «դէպի Վերսալ»... Ամբոխը մի ակնթարթում ելեկտրականանում է և անմիջապէս դիմում է դէպի Վերսալ... Զնայած Լաֆայէտի դիմադրութեան, ամբոխին միանում է և ազգային գվարդիան։

Ժողովուրդը այնուամենայնիւ չափազանց խաղաղ էր տրամադրւած և չունէր դէպի Լիւդովիկոսի անձնաւորութիւնը որևէ

չար դիտաւորութիւն։ Նրա միակ ցանկութիւնն էր տեղափոխել թագաւորին Պարիզ, որպէսզի դիւրութիւն ունենար դիտելու, թէ ինչ է կատարւում պալատական շրջաններում։ Ամբոխը, հասնելով Վերսալ, պատգամաւորութիւն է ուղարկում իր կողմից Լիւդովիկոսի մօտ։ Պալատի անսովոր սարքն ու կարգը խիստ ազդում է կանանց պատգամաւորների վրայ, և նրանց հռետորը, որ մի ջահել գեղեցիկ կին էր, այնքան շփոթւում է, որ հազիւ է կարողանում արտասանել միայն մի խօսք՝ «հաց»... Լիւդովիկոսը գուրգուրում է հռետորին, խոստանում նրանց բոլոր պահանջները կատարել։ Ամբոխը՝ զգացած թագաւորի ցոյց տւած սիրալիր ընդունելութիւնից, հեռանում է...

Միւս օրը, հոկտեմբերի 6-ին, Լիւդովիկոսը տեղափոխւում է Պարիզ։ Մի քանի օր անց ազգային ժողովն էլ փոխադրւում է Վերսալից։ Այսպիսով թէ արքունիքը և թէ ազգային ժողովը ընկնում են Պարիզի ազգաբնակութեան արթուն հսկողութեան տակ։

Եթէ ժողովուրդը արդէն արթնացել, եկել էր իր իրաւունքների գիտակցութեան, պատրաստ էր իր կեանքի գնով պաշտպանելու ձեռք բերած ազատութիւնը, քնած չէին նաև ժողովրդի այն տարրերը, որոնց համար այդ ազատութիւնը՝ բռնութիւն էր... Քաղաքացիական երդումից հրաժարւած հոգեւորականները գըրգռում էին գիւղական հասարակութեան տգէտ խաւերը յեղափոխութեան դէմ. գաղթական—ազնուականները, համախմբւած սահմանագլխում, դրդում էին եւրոպական միապետներին վերջ տալ յեղափոխութեան ու վերականգնել Լիւդովիկոսի իշխանութիւնը։ Զօրքը, թէև հետզհետէ աւելի ու աւելի էր թեքւում դէպի յեղափոխութիւնը, սակայն նրա մի որոշ մասը դեռ հաւատարիմ էր մնացել Լիւդովիկոսին։

Արքունիքը, որ Պարիզ տեղափոխւելուց յետոյ էլ, չը հրաժարւեց զանազան ազդակաւ դիտաւորութիւններից, ուզեց օգտւել այդ հանգամանքներից։ Միակ մարդը, որ ազդեցութիւն ունէր արքունական շրջաններում և կարող էր այդ դաւերի առաջն առնել, դա Միրաբոն էր. սակայն յանկարծակի մահը վերջ տւեց «ժողովրդական տրիբունի» կեանքին (1791 թ. ապր. 2-ին) և պալատականները ազատ շունչ քաշեցին։ Կազմւեց մի նոր ծրագիր Լիւդովիկոսին փախցնելու Պարիզից։ Համաձայն այդ ծրագրի թագաւորը իր ընտանիքի հետ պիտի փախչէր նրան հաւատարիմ մնացած

գեներալ Բուլիէի մօտ, որը իր զօրագնդով գտնւում էր սահմանից ոչ հեռու, իսկ այնտեղից պիտի անցնէր դաղթական ազնուականների մօտ, որոնք խմբւել էին գերմանական Կօբլէնց քաղաքում։ Այստեղ Լիւդովիկոսը, միանալով եւրոպական միապետների հետ, պիտի յարձակւէր Ֆրանսիայի վրայ, ոչնչացնէր յեղափոխութեան հիդրան ու վերականգնէր իր անսահման միապետական իշխանութիւնը...

Լիւդովիկոս XVI-ը, որի ընաւորութեան գլխաւոր յատկանիշն էր անվճռողականութիւնը, սկզբում դիմադրեց այդ ծրագրին, սակայն յետոյ զիջեց իր մերձաւորների յորդորներին։ Փախուստը նշանակւած էր 1791 թ. յունիսի 20-ի կէս գիշերին։ Բոլոր նախապատրաստութիւններն արդէն տեսնւած էին. ձեռք էր բերւած կեղծ անցագիր. ճանապարհին, իշխաններում, գեն. Բուլիէի կարգադրութեամբ, դրւած էին ձիաւոր խմբեր... Փախուստն արդէն յաջողութեամբ պիտի պսակւէր, երբ մի փոքրիկ պատահական դէպք ամեն ինչ կործանեց...

Թագաւորի կառքն արդէն հասել էր Մէն-Մէնէուլ փոքրիկ քաղաքը, երբ Լիւդովիկոսը գլուխը հանեց կառքի պատուհանից, որպէսզի կառապանին շտապեցնի. բայց հէնց այդ րոպէին նրան ճանաչեց քաղաքի փոստատան կառավարիչ Դրուէն։ Սա մի կրակոտ երիտասարդ յեղափոխական էր, որ ուշի ուշով հետևում էր Պարիզի անցքերին։ Հէնց որ նա ճանաչեց թագաւորին, իսկոյն հասկացաւ թէ բանն ինչումն է։ Առանց մի րոպէ անգամ կորցնելու նա ձի նստեց ու կարճ ճանապարհով թագաւորից քիչ առաջ հասաւ Վարէն քաղաքը. այստեղ նա իր ընկերների հետ բռնեց բարիկադներով այն կամուրջը, որի վրայով պիտի անցնէր թագաւորը ու անմիջապէս իմաց տւեց քաղաքագլխին ու ազգային գվարդիային... Մինչև սրանց գալը Դրուէն կանգնեցնում է թագաւորի կառքը ու պահանջում անցագիր. այդ միջոցին հասնում է և քաղաքագլուխը գվարդիայի հետ։ Լիւդովիկոսը, տեսնելով, որ ամեն ինչ արդէն պարզւել է, սկսում է աղերսել քաղաքագլխին թողնել շարունակելու իր ճանապարհը, սակայն իզուր։ Առաւօտեան ժամի 7-ին հրաման է գալիս ազգային ժողովից վերադարձնել Լիւդովիկոսին Պարիզ,—և թագաւորը, շրջապատւած ազգային գվարդիայի 10 հազար զինւորներով, վերադառնում է մայրաքաղաք...

Պարիզի ազգաբնակութիւնը, որ խուռն բազմութեամբ դուրս

էր թափել փողոցները՝ տեսնելու փախստական թագաւորին, գերեզմանային լռութեամբ հանդիպեց նրան...

Լիւդովիկոսի փախուստը խիստ գրգռել էր թէ ժողովրդին և թէ ազգային ժողովը։ Վերջինս, հէնց որ լուր է առնում այդ մասին, իսկոյն արտակարգ նիստ է գումարում, որտեղ որոշում է ձերբակալել թագաւորին ու յայտարարում է իրան օրէնսդրական ու գործադիր իշխանութեան ներկայացուցիչ...

Սակայն առաջին ծանր տպաւորութիւնն անցնելուց յետոյ ժողովը յետ առաւ իր որոշումներն ու վերականգնեց Լիւդովիկոսի բոլոր արքայական իրաւունքները։ Ազգային ժողովի իդէալը՝ սահմանադրական միապետութիւնն էր, և նա ամեն կերպ աշխատում էր իրականացնել այդ իդէալը։

Բայց ժողովուրդը այլ կերպ էր տրամադրուած. նա պահանջում էր դաւաճան միապետին դատի ենթարկելու զրկել գահից... Պարիզի ազգաբնակութիւնը որոշեց նոյնիսկ առանձին խնդրագիր ներկայացնել այդ մասին ազգային ժողովին։ Այդ նպատակով էլ յուլիսի 17-ին (1791 թ.) ժողովուրդը հաւաքեց Մարսեան դաշտը ստորագրելու կազմած խնդրագիրը։ Ժողովուած էր մօտ 12 հազար մարդ։ Հրապարակի մէջտեղում կառուցուած էր «Հայրենիքի սեղանը», որի վրայ դրուած էր խնդրագիրը. ամբոխը հերթով մօտենում էր ու ստորագրում։ Ցանկարծ նկատում են, որ «Հայրենիքի սեղանի» տակ թաղնուած են երկու մարդ... Ժողովուրդը, դրանց լրտեսների տեղ ընդունելով, սաստիկ կատաղում է ու տեղն ու տեղը սպանում դրանց։ Յուզուած ամբոխը թնդեցնում է Մարսեան դաշտը աղաղակներով «Թող կորչին Բուրբոնները»... Ազգային գվարդիան, որ մօտիկ տեղ դիրք բռնած սպասում էր, լսելով ամբոխի աղմուկը, անմիջապէս վրայ է հասնում։ Ժողովուրդը հանդիպում է զօրքին քարերով ու հայհոյանքներով... Ընդհարումը դառնում է անխուսափելի... Լաֆայէտի հրամանով գվարդիան կրակում է և մի վարկեանում Մարսեան դաշտը ծածկւում է դիակներով...

Այսպէս բուրժուազիան ներկեց ժողովրդի արիւնով իր փայփայած սահմանադրական միապետութիւնը, և մի անգամ էլ ապացուցեց, որ, իր ձեռքն առնելով քաղաքական իշխանութիւնը, նա, ինչպէս և միապետական կառավարութիւնը, պատրաստ ունի ժողովրդի համար միայն վառօդ ու գնդակ...

Այդ ժամանակամիջոցում Ֆրանսիայից դուրս, գերմանական

սահմանագլխում ժողովուած ազնուական—գաղթականները, որոնց թիւը առաջին գաղթականութիւնից յետոյ բաւական աւելացել էր, մեծ թափով կազմակերպւում էին։ Նրանք անդուլ կերպով զինւում էին, և արդէն կենտրոնացրել էին մի քանի վաշտ զօրք սահմանի մօտ գտնուած գերմանական քաղաքներում։ Միաժամանակ մեծ ջանք էին թափում դրդելու Եւրոպական պետութիւններին պատերազմ յայտարարելու իրանց սեպհական հայրենիքին... Դաւաճան ազնուականութեան այդ դաւադրական գործունէութիւնը ունեցաւ իր խոշոր հետևանքները։ Այդ օրերին հիմք դրեց այն արիւնահեղ կռիւներին, որոնք տևեցին ամբողջ 25 տարի և անվերջ աղէտների ու չարիքների աղբիւր դարձան երիտասարդ Ֆրանսիայի համար։

Աղէտների շարանն սկսւեց 1791 թ. օգոստոսի 27-ից, երբ Աւստրիայի կայսր Լէօպոլդ II-ը (Լիւդովիկոս XVI-ի ազգականը) և Պրուսսիայի թագաւոր Ֆրիդրիխ Վիլհելմ II-ը իրանց տեսակցութեան ժամանակ Գերմանիայի Պիլնից քաղաքում յայտարարեցին մի հրովարտակ, ուր ասւած էր, որ Ֆրանսիայի յեղափոխութիւնը շօշափում է Եւրոպայի բոլոր պետութիւնների շահերը, հետևաբար և բոլոր պետութիւնները պիտի միանան ու տան Ֆրանսիային համապատասխան կառավարութիւն, այսինքն՝ վերականգնեն միապետութիւնը...

Այս ամենը կատարւում էր Լիւդովիկոս XVI-ի գաղտնի համաձայնութեամբ հէնց այն միջոցին, երբ նա միաժամանակ յայտնում էր իր պատրաստակամութիւնը ընդունել սահմանադրութիւնն ու պաշտպանել այն թշնամիների յարձակումներից...

Սահմանադիր ժողովն էլ միամտօրէն հաւատում էր կառավարութեանը, կարծելով, որ յեղափոխութիւնն արդէն վերջացել է... Բուրժուազիան շտապում էր վերջ տալ իր օրէնսդրական աշխատանքներին, քանի որ նրա գլխաւոր նպատակն արդէն իրագործուած էր,— արդիւնագործութիւնը կաշկանդող ֆէօդալական շղթաները ջախջախուած էին, և առևտրի ու արդիւնաբերութեան ազատ զարգացումն ապահովուած։ Ի՞նչ փոյթ նրա համար, որ ժողովուրդը, մատնուած սովի՝ տառապում էր անծայր աղքատութեան մէջ, առանց գործի, առանց աշխատանքի...

1791 թ. Սեպտեմբերի 30-ին Ազգային Սահմանադիր ժողովը,

իր գործը վերջացրած համարելով, յայտարարեց իրան արձակուած և հրաւիրեց նոր «Օրէնսդիր Ժողով»։

Բայց այլ կերպ էր նայում իրերի դրութեան վրայ ինքը ժողովուրդը։ «Անհրաժեշտ է լրացնել յեղափոխութիւնը», ասում էր Դանտոնը, այդ ժամանակուայ ամենաականաւոր յեղափոխական գործիչներից մէկը։

Եւ յետագայ պատմութիւնը արդարացրեց Դանտոնի այդ գուշակութիւնը... Յեղափոխութիւնը սահմանադիր ժողովով բոլորեց միայն իր առաջին շրջանը։

V.

ՕՐԷՆՍԴԻՐ ԺՈՂՈՎԸ.

(1791 թ. հոկտ. 1—1792 թ. սեպտ. 21).

1.

Օրէնսդիր ժողովը սկսեց իր գործունէութիւնը 1791 թ. հոկտեմբերի 1-ին։ Իր կազմով այս ժողովը խիստ տարբերւում էր սահմանադիր ժողովից։ Այստեղ չկար ոչ մի ներկայացուցիչ նախկին միապետական ու արիստոկրատական-սահմանադրական կուսակցութիւններից։ Ժողովը ամբողջովին բաղկացած էր նոր երիտասարդ ոյժերից, նիւթուած ազատութեան ու նոր կարգերին։ Դեմոկրատական սահմանադրական կուսակցութիւնը, որ սահմանադիր ժողովում իշխում էր և հանդիսանում էր մի յեղափոխական կուսակցութիւն յանուն սահմանադրական միապետութեան, այժմ անցել էր ժողովի աջ կողմը և կազմում էր նրա պահպանողական տարրը։

Կենտրոնում նստած էր չափաւոր-դեմոկրատական կուսակցութիւնը, որ յայտնի է ժիրոնդականների կուսակցութեան անուն տակ, որովհետև նրա ամենաականաւոր անդամներն ու տաղանդաւոր հռետորները Ժիրոնդա դեպարտամենտից էին։ Այս կուսակցութեան պարագլուխներն էին՝ փաստաբան Վէրնիո, Բրիսսո, Խնար, Ժանսոննէ։ Օրէնսդիր ժողովից դուրս այս կուսակցութիւնը կապ էր պահպանում հասարակութեան հետ տիկ. Ռոլանի քաղաքական սալոնի միջոցով։ Տիկ. Ռոլանը մի գեղեցիկ ու խելօք կին էր, ոգեորուած ազատութեան բարձր գաղափարով. նա կազմում էր ժիրոնդականների կուսակցութեան ոգին. յաճախ նա հանդիսանում էր նաև նրան ղեկավարը։ Նրա անսահման սէրը դէպի Ֆրանսիան, նրա քաղաքական բարձր իդէալները մղեցին նրան դէպի վտանգաւոր յեղափոխական ճանապարհը, և նա վերջացրեց իր կեանքը կախաղանով։

Օրէնսդիր ժողովի ձախ կողմում նստած էին հանրապետականները, որոնց անւանում էին նաև եակոբիններ, որովհետև սրանց գլխաւոր ոյժը կազմում էր եակոբինների ակումբը։ Ժողովում սրանք չունէին անւանի հռետորներ ու գործիչներ, մինչդեռ ակումբում սրանց շարքերում կային այնպիսի առաջնակարգ ոյժեր, ինչպէս Ռոբէսպիեր, Դանտոն, Դէմուլէն, Մարատ։

Ժողովը արդէն իր առաջին օրէնսդրական քայլերին հանդիպեց խոշոր արգելքների կառավարութեան կողմից։ Լիւդովիկոս XVI-ը սկսեց շատ լայն կերպով օգտուել իր veto-ի իրաւունքով, ուստի և ընդհարումները օրէնսդրական ժողովի հետ անպակաս էին։

Օրէնսդիր ժողովն ամենից առաջ զբաղուեց էմիգրանտների (գաղթական ազնուականների) հարցով։ Սրանք սահմանագլխում կենտրոնացրել էին արդէն մօտ 60,000 զօրք, և իրանց բռնած սպառնալից դիրքով սաստիկ գրգռում էին ֆրանսիացիներին։ 1791 թ. սեպտեմբերի 10-ին էմիգրանտները հրատարակեցին նամակի ձևով մի մանիֆէստ, ուղղած Լիւդովիկոս XVI-ին։ Մանիֆէստում նրանք յայտարարում էին, որ այն ամենը, ինչ տեղի է ունեցել Ֆրանսիայում 1789 թ. սկսած, նրանք համարում են ապօրինի։

Այս գրութիւնը բուռն զայրոյթ առաջ բերից ժողովում։ Իսկապէս մի փայլուն ճառի մէջ պահանջեց ժողովից խիստ միջոցներ ձեռք առնել էմիգրանտների դէմ։ «Նրանք, ասաց ի միջի այլոց Խնարը, կը դադարեն մեզ վնասելուց այն դէպքում, երբ այլևս հնարաւորութիւն չեն ունենայ։ Որպէս զի նրանք մեզ չը յաղթեն, մենք պէտք է նրանց յաղթենք»։ Եւ ժողովը նոյեմբերի 9-ին հետևեալ որոշումը կայացրեց.

«Ով էմիգրանտներից չի վերադառնայ Ֆրանսիա մինչև 1792 թ. յունուարի մէկը, նա, իբրև դաւաճիր, կը դատապարտուի մահուան, իսկ նրա գոյքը կը գրաւուի յարքունիս»։

Լիւդովիկոս XVI-ը չը հաստատեց այս որոշումը, և դրանով տեղիք տուեց ժողովրդին պարզ կասկածներ տածելու, որ ինքը

հաժակրում է էմիգրանտներին և որ նոյն իսկ կապեր ունի նրանց հետ։

Օրէնսդիր ժողովի մի ուրիշ որոշումը առաջ բերեց նոր ընդհարում թագաւորի հետ։

Գաւառներում շարունակ տեղի էին ունենում խոշոր անկարգութիւններ, որոնք սահմանադրութեանը քաղաքացիական երդում չը տուող քահանաների ինտրիգների արդիւնք էին։ Անհրաժեշտ էր օր առաջ միջոցներ ձեռք առնել վերջ դնելու այդ յուզումներին։ Այդ առթիւ Իսնարը հետևեալ գեղեցիկ ճառն արտասանեց ժողովում.

«Կրօնը, ասաց նա, այն տեսակ միջոցներից է, որոնցով կարելի է չափազանց մեծ վնասներ բերել, հետևաբար և անհրաժեշտ է կրկնակի խստութեամբ վարուել նրանց հետ, որոնք ի չարն են գործ դնում այն. ինչպէս, օրինակ հրդեհաձիգներին աւելի խիստ են պատժում, քան գողերին։ Ես պնդում եմ, որ կայ միայն մի միջոց, որ կը հասցնէ նպատակին, այն է՝ աքսորել դրանց Ֆրանսիայից։ Մի թէ՞ դուք չէք տեսնում, որ դրանով միայն կարելի է վերջ դնել հոգևորականների նենգութիւններին։ Մի թէ՞ դուք չէք տեսնում, որ հարկաւոր է ժողովրդից հիռացնել այն քահանային, որը նրան գայթակղեցնում է։ Մի թէ՞ դուք չը գիտէք, որ մի քահանայ կարող է աւելի շատ վնասներ պատճառել, քան թշնամիների մի ամբողջ բանակը։ Եւ այդ այդպէս էլ պիտի լինի, որովհետև քահանան երբէք չի լինում կիսով չափ չարագործ. հէնց որ նա դադարում է առաքինի լինելուց, նա իսկոյն դառնում է ամենասոսկալի թշնամին աշխարհիս երեսին։ Չը պէտք է մոռանալ, որ պատժական մեծ բոպէներին, երբ պահանջւում է մեծ վճռողականութիւն, զգուշութիւնը ոչ այլ ինչէ, եթէ ոչ՝ թուլութիւն։ Պէտք է կտրել վարակուած անդամը, որպէս զի առողջ մնայ ամբողջ մարմինը» *)։

Եւ օրէնսդիր ժողովը նոյեմբերի 29 ին որոշեց, որ իւրաքանչիւր դեպարտամենտի վարչութիւն իրաւասու է բանտարկելու կամ աքսորելու իրենց բնակավայրից այն բոլոր քահանաներին, որոնք կը շարունակեն խոյս տալ սահմանադրութեան քաղաքացիական երդում տալուց. ամեն տեղ, ուր հնարաւոր կը լինի,

*) Гейсеръ—Ист. фр. рев. եր. 224.

այդպիսիներին պէտք է պաշտօնից հեռացնել ու զրկել ռոճիկից։

Թագաւորը այս որոշման վրայ էլ դրեց իր veto-ն, որ շատ ծանր տպաւորութիւն թողեց թէ ժողովի և թէ ժողովրդի վրայ։

Այսպէս, Լիւդովիկոս XVI-ը, չնայած բոլոր դառն փորձերին, չէր ուզում ոչ մի կերպ հաշտուել նոր կարգերի հետ։ Յափշտակուած մեծ յոյսերով էմիգրանտների ու եւրոպական միապետների աջակցութեան վերաբերմամբ, նա անհամբեր սպասում էր պատերազմական գործողութիւնների սկսելուն։

Արդարև, այդ ժամէնտը շուտով վրայ հասաւ, բայց նա, հակառակ թագաւորի սպասածին, միայն արագացրեց միապետութեան վերջնական անկումը։

2.

1792 թ. փետրուարի 27-ին Պրուսսիան և Աւստրիան պաշտօնապէս դաշն կապեցին, նպատակ դնելով վերականգնել միապետական կարգերը Ֆրանսիայում։ Այդ դաշնադրութեան համաձայն Աւստրիան պարտաւոր էր պատերազմի դուրս բերել 180,000, իսկ Պրուսսիան՝ 60,000 զօրք։

Երբ Ֆրանսիայում լուր առան այդ մասին, ժիրոնդան սկսեց ագիտացիա անել, պահանջելով անմիջապէս պատերազմ յայտարարել։

«Պատերազմը, ասում էր Բրիսսոնը, մեզ հարկաւոր է, որպէսզի աւելի ամրապնդենք ազատութիւնը. պատերազմը մեզ հարկաւոր է, որպէսզի բուժենք ազատութիւնը բռնակալական ախտերից. պատերազմը մեզ հարկաւոր է, որպէսզի հեռացնենք այն մարդկանց, որոնք կարող են կործանել ազատութիւնը։ Օրհնեցէք երկինքը, որ նա ձեզ օգնում է ու առիթ է տալիս աւելի հաստատուն հիմքերի վրայ դնելու ձեր սահմանադրութիւնը» *)։

Արքունիքն էլ ուրախ էր պատերազմ յայտարարելուն Եւրոպային, թէև, ի հարկէ, դրդած բոլորովին տարբեր միտումներից։

Միայն հանճարեղ Ռոբէսպիերն էր դէմ պատերազմին իր ընկերակից եակոբինների հետ միասին։ Նա քաղաքական զարմանալի հեռատեսութեամբ զգում էր, թէ ինչ մեծ դժբախտու-

*) Гейсеръ—Ист. фр. рев. եր. 234.

թիւններ պիտի բերի պատերազմը, ուստի և ամեն կերպ ջանում էր կռուի առաջն առնելու։

Նա համոզված էր, ասում է Հէյսերը, որ «պատերազմը առաջ կը քաշի զինուորական ոյժերն ու կոչնչացնի ակուռները իրանց հերոսներով. նա կը ստեղծի դիկտատորներ և ոչ ժողովրդական տրիբուններ, ստրկութիւն և ոչ ազատութիւն»։

Բայց այն ժամանակ չը հասկացան Ռոբէսպիերին, և երբ 1792 թ. ապրիլի 20-ին Լիւդովիկոս XVI-ը ներկայացաւ ժողովին՝ և առաջարկեց յայտարարել պատերազմ Աւստրիային, ժողովը բուռն համակրութեամբ ընդունեց այդ առաջարկը, և այդպիսով սկսեցին երկարատև պատերազմական գործողութիւնները։

Թէ Պրուսսիան և թէ Աւստրիան համոզված էին, որ առանց դժւարութիւնների կը ջարդեն «ազուկատների զօրքը», ինչպէս արհամարհանքով նրանք անւանում էին Ֆրանսիայի նոր յեղափոխական զօրքը։

Սակայն մենք շուտով կը տեսնենք, որ Եւրոպան չարաչար սխալւեց։ Սկզբում, յիրաւի, ֆրանսիացիները յաջողութիւն չունէին պատերազմական դաշտում, բայց յետոյ նոր Ֆրանսիան ցոյց տւեց այնպիսի արիութիւն ու եռանդ, այնպիսի ոգևորութիւն ու անձնազոհութիւն, որ զոռոզ միապետական Եւրոպան զգաց ազատութեան ոգու հրաշագործ ազդեցութիւնը։

Ֆրանսիական զօրքի առաջին անյաջողութիւնները մեծ յուզմունք առաջ բերին ամբողջ Ֆրանսիայում և մանաւանդ Պարիզում։ Գրգռված հասարակական կարծիքը անյաջողութիւնները բացատրում էր դաւաճանութեամբ, որի բունը նա համարում էր ամենից առաջ արքունիքը։

Ժողովրդի ատելութիւնը դէպի կառավարութիւնը և դէպի թագաւորը օրէցօր աճում, սաստկանում էր։

Ինքը Լիւդովիկոս XVI-ը աւելի էր նպաստում դրան, ստեղծելով նոր-նոր առիթներ։ Այսպէս, օրէնսդիր ժողովը որոշեց քաղաքացիներից կազմել 20,000 հոգուց բաղկացած մի զինուորական բանակ մայրաքաղաքը պաշտպանելու համար, իսկ թագաւորը կրկին չը հաստատեց այդ վճիռը, դնելով իր veto-ն։ Այս հանգամանքը մեծ զայրոյթ առաջ բերեց Պարիզում. ազգարնակութիւնն այդ առթիւ յունիսի 20-ին ժողովրդական ցոյց արաւ թագաւորի ամրոցի առաջ։

Այդ ցոյցն անցաւ խաղաղ. Լիւդովիկոս XVI-ը այս անգամ էլ անվտանգ դուրս պրծաւ ժողովրդի վրէժխնդրութիւնից։

Սակայն շուտով մի այլ առթիւ տեղի ունեցաւ երկրորդ ժողովրդական ցոյցը, որ արդէն շատ վատ վերջացաւ դաւաճան թագաւորի համար. նոս զրկւեց իր թագից ու գահից և այդպիսով ստացաւ արժանի պատիժ իր անվերջ դաւադրութիւնների համար, որոնք ուղղված էին ժողովրդի ազատութեան դէմ։

Պրուսսիայի զօրքի հրամանատար Բրաունշվէյգի դուքսը 1792 թ. յուլիսի 25-ին յայտարարեց մի մանիֆէստ, հրաւիրելով ֆրանսիացիներին հնազանդւելու իրենց օրինաւոր թագաւոր Լիւդովիկոս XVI-ին. հակառակ դէպքում դուքսը սպառնում էր ամենախիստ պատիժների ենթարկել այն բոլորին, ով կը յանդգնէր դիմադրութիւն ցոյց տալ նրան։ Հայրենիքի դաւաճան էմիգրանտները ցրեցին այս անարգ մանիֆէստը ամբողջ Ֆրանսիայում, կամենալով երկիւղ տարածել ժողովրդի վրայ։

Սակայն երկիւղի փոխարէն, նրանք առաջ բերին միայն կատաղի վրէժխնդրութեան զգացմունք։ Ժողովուրդը, զգալով, որ լուրջ վտանգ է սպառնում նրա ազատութեան, որ հայրենիքը, շնորհիւ մի բուռն ստոր դաւաճանների, ենթարկւում է անարգանքների,—միահամուռ ոտի՝ անգնեց։ Ժողովրդական ծովը ալէկոծւեց. նա կատաղած առիւծի պէս մռնչում էր. ամեն կողմից լսւում էր մի ձայն, մի կոչ՝ «դէպի արքունիք», «վրէժ դաւաճաններին»...

Պարիզում անմիջապէս կազմակերպւեցին յեղափոխական կոմիտէներ, մի կենտրոնական կոմիտէի հսկողութեան տակ։ Մայրաքաղաքը մի անկարագրելի շարժման մէջ էր. ամեն տեղ եռում էր աշխատանքը. ամենքը պատրաստւում էին կռւի. դաւառներից և Պարիզի արւարձաններից տեղում էին ժողովրդական մարտիկները. շուտով քաղաքը դարձաւ զինուորական մի մեծ բանակ։ Գլխաւոր զեկավարն էր Դանտոնը։ «Թւում էր, ասում է Բլոսը, որ մի Դանտոն չէր, այլ մի քանի Դանտոններ կային. նրա որոտընդոստ ձայնը լսւում էր ամեն տեղ՝ թէ ակումբներում, թէ փողոցներում. նրա յաղթանդամ հասակը, նրա հրամայողական հայեացքը իշխում էր արւարձանների ամբոխի վրայ»...

Օգոստոսի 10-ին ժողովուրդը պարզեց ապստամբութեան դրօշը և յարձակւեց թագաւորի ամրոցի—Տիւլիերիի—վրայ։

Արքունիքն էլ, նախատեսնելով իրան սպառնացող դժբախ-

տութիւնը, մեծ պատրաստութիւններ էր տեսել։ Պալատում կենտրոնացրել էին մեծ քանակութեամբ զօրք, բացի այն, որ շատ ազնուականներ էլ եկել էին զինուած, իբրև կամաւորներ, պաշտպանելու թագաւորին։

Երբ Լիւդովիկոս XVI-ը տեսաւ, որ ամբոցը շրջապատուած է ապստամբ ժողովրդով, սարսափահար եղած ինքն իրան կորցրեց, չը գիտէր ինչ անէր... Մերձաւորները յորդորում էին թողնել ամբոցը ու անձնատուր լինել օրէնսդրական ժողովի պաշտպանութեան։ Թագուհին՝ Մարիա Անտուանէտան, որ բնաւորութեամբ աւելի վճռողական ու հետևողական էր և առհասարակ աւելի խելօք, քան իր ամուսինը, սկզբում դրականապէս մերժեց այդ առաջարկը, սակայն, երբ թագուհուն նկատեցին՝ «Հետևաբար դուք ձեզ վրայ էք վերցնում պատասխանատուութիւնը թագաւորի, ձեր սեպհական կեանքի, ձեր երեխաների ու ձեր պաշտպանողների կեանքի համար»,—նա այլևս չը դիմադրեց ու զիջեց։ Լիւդովիկոս XVI-ը, վերցնելով իր ամբողջ ընտանիքը, շրջապատուած զօրքով, գնաց օրէնսդիր ժողովը, թողնելով զօրքին պաշտպանելու ամբոցը։

Այդ ժամանակամիջոցում ժողովուրդը ներս է խուժում Տիւլիերիի սրահը. պալատական զօրքի մի մասը անցնում է ժողովրդի կողմը. մնում են միայն 750 հոգի շվեյցարացիներ ու 100 զինուոր ազգային գվարդիայից, որոնք և որոշում են պաշտպանել ամբոցը։ Սկսւում է կատաղի կռիւ։ Ամբոցի սրահը ծածկւում է դիակներով, արիւնը գետի պէս հոսում է... Ամբոխը հետզհետէ ստւարանում է. նա տւած զոհերից աւելի է կատաղում. նոր ուժով գրոհ է տալիս և շուտով տիրապետում է ամբոցին։ Վրէժխնդրութեան զգացմունքով լցւած ամբոխը անխնայ սպանում էր կենդանի մնացած շվեյցարացիներին ու ազնուականներին, բայց միևնոյն ժամանակ խնայում էր անմեղներին. այսպէս նա խնայեց պալատական կանանց. նա խնայեց թագաւորի բժշկին, որ այդ միջոցին հանգիստ նստած պարապում էր։ Ժողովուրդը կռւում էր բաց չէր արատաւորում իր ձեռքը կողոպուտի, գողութեան մէջ. նա ինքը տեղնուտեղը սպանեց մի քանի գողերի, որոնք յափշտակել էին ամբոցից թանկագին իրեր։

Այդ միջոցին Լիւդովիկոս XVI-ը հասաւ օրէնսդրական ժողով։ «Ես եկել եմ այստեղ, ասաց նա ժողովրդի ներկայացուցիչներին, որպէսզի մի մեծ ոճրագործութեան առաջն առած լինիմ. ինձ թւում է, որ ես ոչ մի տեղ չեմ կարող այնքան ապահով լինել, որքան այստեղ, ձեզ հետ»։

Մինչդեռ օրէնսդիր ժողովը այլայլուած չը գիտէր, ինչ անէր, և միայն յորդորներ էր կարդում ժողովրդին հանգստանալու,—քաղաքային վարչութիւնը (կոմմունան), որ արդէն յեղափոխական ժողովրդի ձեռքին էր, անընդհատ պատգամաւորներ էր ուղարկում ու պահանջում էր գահընկէց սնել թագաւորին։

Վերջապէս օրէնսդիր ժողովը, տեղի տալով ժողովրդի միահամուռ պահանջին, որոշեց զրկել Լիւդովիկոս XVI-ին թագաւորական գահից, դադարեցնել նրան ոճիկ տալը և հրաւիրել ազգային կօնվէնտ՝ վերջնականապէս հաստատելու ժողովրդի գերիշխանութիւնն ու ապահովելու քաղաքական նոր կարգերի ազատ զարգացումը։

Այդ որոշման համաձայն, ժողովը կարգադրեց բանտարկել Լիւդովիկոս XVI-ին իր ընտանիքի հետ Տամպլ կոչւած աշտարակում, դնելով նրան խիստ հսկողութեան տակ։

3.

Օգոստոսի 10-ին յաղթանակողը Պարիզի քաղաքային համայնքն էր (կոմմունան), որ և այդ օրւանից իշխանութիւնը իրապէս իր ձեռքն առաւ, թողնելով ստւերի տակ անվճռական օրէնսդիր ժողովը...

Կոմմունան իսկոյն ձեռնամուխ եղաւ մի շարք խիստ միջոցների ապահովելու հայրենիքն ու ազատութիւնը ներքին ու արտաքին թշնամիներից։

Նա հրամայեց ձերբակալել ու բանտարկել այն ազնուականներին ու հոգևորականներին, որոնք թշնամու հետ յարաբերութիւնների մէջ էին, նոյնպէս և կեղծ փող կտրողներին, որոնց շնորհիւ փողի գինը սաստիկ ընկել էր։ Նա տնդային փութկոտութեամբ սկսեց զինել ժողովուրդը ու, գնդեր կազմելով, ուղարկել նրանց սահմանը թշնամու դէմ։

«Հարենիքը վտանգի մէջ է»—ահա այն կոչը, որ կայծակի արագութեամբ տարածւեց Ֆրանսիայում ու բռնկեց ամբողջ ժո-

ղովուրդը, երբ թշնամու տարած յաղթութիւնների առաջին լուրը հասաւ։

Օգոստոսի 24-ին պրուսսացիները՝ ֆրանսիական սահմանն անցնելով, վերցրին Լոնգվի բերդը, իսկ 30-ին Վերդէնը, որ ճանապարհ էր բացում դէպի մայրաքաղաքը... Պարիզը ցնցւեց. յուզմունքը, յուսահատութիւնն ու երկիւղը համակեց բոլոր քաղաքացիներին... Կոմունան միւս օրն և եթ զօրք ուղարկեց սահմանը թշնամու առաջն առնելու, իսկ Դանտոնը, որ ընտրւած էր արդարադատութեան մինիստր, ներկայանալով օրէնսդրական ժողովին, առաջարկեց նրան մի շարք կարևոր միջոցներ ձեռք առնել։

«Թշնամին, ասաց նա ի միջի այլոց, սպառնում է պետութեանը, բայց առ այժմ նա գրաւել է միայն Լոնգվին ու Վերդէնը։ Դուք տեսնում էք, որ մեզ սպառնացող վտանգը մեծ է, թող, ուրեմն, ազգային ժողովը ցոյց տայ իրան արժանի ազգին։ Զրաձգական մի շարժումով մենք տապալեցինք բռնակալութիւնը, ազգի պաշտպանողական ոյժերի հզօր շարժումով մենք պիտի կործանենք բռնապետներին։

Ժամանակ է ազդարարելու ժողովրդին, որ նա իր ամբողջ մասսայով պիտի նետւի թշնամու վրայ։ Մենք պահանջում ենք, որ իւրաքանչիւր քաղաքացի մահւան պատժի ենթարկւի, եթէ նա կը հրաժարւի իր հայրենիքին ծառայելուց։ արիզում, անշուշտ, կը լինի 80,000 հրացան։ Թող ամեն ոք, որ զէնք ունի, շտապէ դէպի սահմանը։ Ի՞նչ կասէ Ֆրանսիան, եթէ Պարիզը ապուշ կարած սպասէ թշնամու յարձակման։ Ֆրանսիական ժողովուրդը կամեցաւ ազատ լինել, և նա կը լինի ազատ։ Շուտով քաղաքային խորհրդի տրամադրութեան տակ ենք դնւի այն ամենը, ինչ անհրաժեշտ է կռւի համար։ Ամեն ինչ պատկանում է հայրենիքին, երբ նա վտանգի մէջ է։

«Երբ դուք կը լսէք նարատի ձայնը, չը կարծէք, որ դա սովորական ահազանգի նշանն է։ Ո՛չ, դա կը լինի նշան յարձակւելու հայրենիքի թշնամիների վրայ։ Ինչէ՞ հարկաւոր, որպէսզի նրանց յաղթենք, ոչնչացնենք։ Անհրաժեշտ է, պարոնայք, համարձակութիւն, համարձակութիւն և էլի համարձակութիւն,—և Ֆրանսիան ազատւած է» *)։

*) Гейсеръ—Ист. фр. рев. стр. 284, 285, 287 и Минее—Ист. фр. рев. стр. 149.

Ազգային օրէնսդրական ժողովն ընդունեց Դանտոնի առաջարկները և տւեց նրանց օրէնքի ոյժ։

Արդէն վերը յիշւած էր, որ քաղաքի բանտերում հեծում էին շատ ազնւականներ ու հոգևորականներ։ Սրանց գլխին էլ թափեց ամբոխը իր զայրոյթը։ Ժողովրդի վրէժխնդրութեան զգացմունքը առաւել ևս բորբոքւեց, երբ նա լուր առաւ, որ պրուսսացիները յաղթական ընթացքով դիմում են դէպի մայրաքաղաքը։

Սեպտեմբերի 2-ին ամբոխը ներս խուժեց բանտերը ու սկսեց կոտորել բանտարկեալներին։ Սկզբում ամբոխը առանց դատի էր կոտորում, սակայն մի քանի ժամից յետոյ կազմւում է ժողովրդական ինքնուրոյն դատարան, որը քննում էր ամեն մէկի յանցանքը, լսում էր նրանց պաշտպանութիւնը և ապա վճիռ կայացնում։ Այդպիսով շատերը մահից ազատւեցին։

«Ամբոխը, ասում է Բէրվին *), ոտից մինչև գլուխ արիւնի մէջ թաթախւած, անցնում էր մի բանտից՝ միւսը, սարսափ տարածելով ամենքի վրայ, բայց միաժամանակ նրա բռնած ընթացքի մէջ զարմանալին այն էր, որ սպանութիւնները չէին կրում սանձարձակ եղեռնի բնոյթ, այլ արտայայտում էին մի ինչ որ մռայլ, սպառնալից գաղտիար. դրան ապացոյց է նախ այն, թէ ինչպէս ամբոխը յամառութեամբ հրաժարւում էր թշւառ զոհերի առաջարկած ամենաթանկագին կաշառքներից, և ապա այն, թէ ինչպէս նա ցնծութեամբ ողջունում էր դատարանի արդարացրածներին»։

Կոտորածը վերջացաւ միայն չորս օրից յետոյ, սեպտեմբերի 6-ին։ Սպանւած արքայականների թիւը հասնում էր երկու հազարի...

Օրէնսդիր ժողովը, օգոստոսի 10-ից յետոյ միանգամայն կորցնելով իր հեղինակութիւնը, հազիւ էր քարշ տալիս իր գոյութիւնը սարսափի այդ օրերին... Նա լուռ հանդիսատես էր իր շուրջը կատաղող արիւնոտ դէպքերին .. Վերջապէս, յայտարարելով կօնվէնտի ընտրութիւնների համար, նոր ընտրողական օրէնք, նա ցրւեց։

Այդ ընտրողական օրէնքի համաձայն վերացւում էր 1791 թ. սահմանադրութեամբ որոշած ընտրական ցենզը, որ զրկում էր

*) О. Берви—Борьба за свободу во Франціи, III ч., եր. 7.

բանուորների մեծ մասը ընտրողական իրաւունքից։ Այժմ իւրաքանչիւր 25 տարեկան ֆրանսիացի, որ ապրել էր մի որոշ տեղում մի տարի սեպհական աշխատանքով, ստանում էր ընտրողական ձայնի իրաւունք։ Այդպիսով ապահովւեց կոնվէնտի դեմոկրատական կազմը ու որոշւեց նրա առաջիկայ գործունէութեան ընթացքը։

Կոնվէնտի ընտրութիւնները շուտով վերջացան։

1792 թ. սեպտեմբերի 20-ին արդէն Ազգային Կոնվէնտը ժողովւած էր։ Այդ օրւանից նա իր ձեռն առաւ կառավարչական ղեկը, և այդպիսով յեղափոխութիւնը մտաւ իր զարգացման մի նոր շրջան, որտեղ հին ու նոր Ֆրանսիայի կռիւը աւելի կազմակերպւած և աւելի կատաղի կերպարանք ստացաւ։

VI.

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԷՆՏԸ.

(1792 թ. սեպ. 21—1795 թ. հոկտ. 25.)

1.

Ազգային կոնվէնտը բացեց իր նիստերը 1792 թ. սեպտեմբերի 21-ին։ Նրա կազմը համապատասխանում էր պատմական մոմենտին. նա հաւարեա ամբողջովին բաղկացած էր հանրապետականներից։ Նրա աջ կողմը բռնել էին ժիրոնդականները, կենտրոնը՝ չափաւոր տարրերը, որոնք, զուրկ լինելով որոշ հետևողական տակտիկայից, յարում էին կամ աջակողմեաններին կամ ձախակողմեաններին, և դրա համար էլ նրան անւանում էին հեգնօրէն «ճահիճ»։ Ձախակողմեան կուսակցութիւնը կազմում էին եակոբինները, որոնց անւանում էին մոնտանեարներ *), որովհետև սրանք նստած էին դահլիճի ամենարարձր տեղերում։

Երբ կոնվէնտը հաւաքւեց, Ֆրանսիայի դրութիւնը շատ ծանր էր. նա գտնւում էր չափազանց բարդ ու կնճռոտ պայմանների մէջ։

«Սահմանագլխում, ասում է Բլոսը, իրերի դրութիւնը կրիտիկական էր. յայտնի չէր, հնարաւոր կը լինի արդեօք յետ մղել

*) Ֆրանսիական montagne բառից է, որ նշանակում է լեռ։

պրուսսացիների և աւստրիացիների միացեալ ոյժերը։ Պարիզում ժողովրդական մասսաները մեծ պակասութիւն էին զգում կենսական մթերքների՝ հացի, մսի, ալիւրի և այլն. բանուորների կանայք սպասում էին մինչև ուշ գիշեր հացթուխի կամ մսավաճառի խանութների առաջ, որպէսզի ստանան մի կտոր հաց կամ միս... Ամենքը սպասում էին որ կոնվէնտը վերջ կը դնի այդ բոլոր թշուառութիւններին»...

Ահա այսպիսի դժւարին պայմաններում կոնվէնտը ձեռնամուխ եղաւ իր պատասխանատու գործունէութեան։

Առաջին նիստում արդէն հարց բարձրացաւ ոչնչացնել միապետական իշխանութիւնը ու յայտարարել հանրապետութիւն։ Այդ հարցի շուրջը պտտւող երկար վիճաբանութիւններին վերջ դրեց եպիսկոպոս Գրէգուարը.

«Ի՞նչ կարիք կայ, նկատեց նա, երկար խորհրդակցութիւնների. թագաւորները բարոյական աշխարհում նոյնն են. ինչ որ հրէշները բնութեան մէջ. թագաւորների պատմութիւնը՝ ժողովուրդների մարտիրոսութեան պատմութիւնն է»։

Այս խօսքերից յետոյ ամբողջ կոնվէնտում տիրում է խորհրդաւոր լռութիւն. ապա Գրէգուարը նորից ամբիոն է բարձրանում ու առաջարկում կոնվէնտի քէտարկութեան հետևեալ բանաձևը։

«Ազգային կոնվէնտը յայտարարում է, որ թագաւորական իշխանութիւնը ոչնչացրւած է Ֆրանսիայում»։

Բանաձևը ընդունւում է բուռն ծափահարութիւններով։

Միւս օրը կոնվէնտը որոշում է մտցնել նոր ժամանակագրութիւն, ընդունելով 1792 թ. սեպտեմբերի 22-ը հանրապետութեան առաջին տարւայ առաջին օրը. դրա հետ միասին յայտարարւում է, որ այսուհետև ազգային տօնը յուլիսի 14-ի փոխարէն պիտի տօնւի օգոստոսի 10-ին։

Այդ օրւանից սկսած Տաճպլի պահակը ու ծառաները հրաման ստացան «թագաւոր» կամ «Ձերդ Մեծութիւն» խօսքերը այլ ևս գործ չածել և Լիւդովիկոս XVI-ին անւանել սոսկ «Լիւդովիկոս Կապետ» *)։

Կոնվէնտի այս որոշումները ժողովուրդը թէ Պարիզում և թէ գաւառներում ընդունեց հրճւանքով. ամեն տեղ հանդէսներ

*) «Կապետ» թագաւորի տոհմի (դինաստիայի) անունն է։

էին տեղի ունենում. ի պատիւ հանրապետութեան՝ ոչնչացնում էին թագաւորների արձաններն ու պատկերները...

«Կեցցէ՛ հանրապետութիւնը»—ահա այն կոչը, որ այդ օրերին լսւում էր ամենուրեք Ֆրանսիայում:

Երբ սահմանում կուռող զօրքին հրամանատար գեն. Դիւմուրիէն յայտնեց հանրապետութեան հաստատման մասին, զինուորները միաձայն կանչեցին՝ «Կեցցէ՛ հանրապետութիւնը», իսկ սպաները, շարած, հարցնում էին՝ «Ապա այսուհետև մենք ո՞ւմ համար պիտի կուենք»: Գեն. Դիւմուրիէն պատասխանեց. «Այսուհետև դուք պիտի կուէք ձեր ընտանեկան օջախի, ձեր կանանց ու երեխաների, ազգի ու հանրապետութեան համար»:

Հանրապետութեան հաստատելուց յետոյ բնականաբար հարց էր ծագում, թէ ինչպէս վարուել թագաւորի հետ:

Զափազանց տարբեր էին վերաբերւում կոնվէնտում այդ խնդրին:

Մի՛ջդեռ ժիրոնդականները աշխատում էին այդ հարցը չը բարձրացնել անգամ կոնվէնտում ու թողնել թագաւորին բանտարկած Տամպլում, մինչ ամենաանարները, իբրև համոզած հանրապետականներ, պահանջում էին դատի ենթարկել Լիւդովիկոսին և ժամանակ դատավճիռ տալ: Քանի թագաւորը կենդանի է, ասում էին սրանք, չէ կարելի համարել հանրապետութեան գոյութիւնը ապահով, միշտ էլ անպակաս կը լինին արքայականների դաւադրութիւնները Ֆրանսիայի ազատութեան դէմ. պէտք է շուտով ամենակտրուկ միջոցների դիմել գալիք բարդութիւնների առաջն առնելու:

Այդպէս էլ որոշեց կոնվէնտը:

1792 թ. դեկտեմբերի 11-ին սկսւեց Լիւդովիկոս Կապետի դատը, որ տեւեց բաւական երկար ժամանակ:

«Պատմութեան տարեգրութիւնների մէջ, ասում է մի անյայտ հեղինակ, այդ պրոցէսը բռնում է ամենանշանաւոր էջերից մէկը: Ազատ ժողովրդի ներկայացուցիչները դատում էին այստեղ ճնշման ու բռնակալութեան ներկայացուցչին. կարելի է ասել, որ այդ պրոցէսը ուղղւած էր ոչ թէ թագաւորի դէմ, որպէս մի մասնաւոր անհատի, այլ միապետական իշխանութեան սկզբունքի դէմ» *):

*) Какъ французы. добыли себѣ свободу. Изд. „Д. Р.“

Թագաւորի դատը շուտով գրաւեց եւրոպական միապետների ուշադրութիւնը, որոնք նայում էին Լիւդովիկոս XVI-ի դատի վրայ, որպէս իրանց սեպհական դատի: Որպէս պատասխան դրան կոնվէնտը 1792 թ. նոյեմբերի 19-ին կայացրեց հետևեալ որոշումը:

«Ազգային կոնվէնտը յայտարարում է, որ պատրաստ է օգնելու ու եղբայրական ձեռք մեկնելու այն բոլոր ժողովուրդներին, որոնք ձգտում են ազատութիւն ձեռք բերելու. նա սրանով պատւիրում է գործադիր իշխանութեան (մինիստրութեան) յայտնելու Ֆրանսիական զօրքի բոլոր գեներալներին կոնվէնտի հրամանը՝ օգնութեան հասնել այն քաղաքացիներին, որոնք ներկայումս տառապում են կամ ապագայում ենթակայ կը լինեն տանջանքների ազատագրութեան գործի համար»:

Լիւդովիկոս XVI-ին մեղադրում էին նրանում, որ նա ձգտում էր խեղդել յեղափոխութիւնը, որ նա գրագրութեան մէջ էր մտել Ֆրանսիայի թշնամիների հետ, որ նա դեռ 1791 թ. նամակ էր գրել Կլերմոնի եպիսկոպոսին, որ եթէ նա նորից ձեռք բերէ իր նախկին իշխանութիւնը, կը վերականգնէ հին վարչական սիստեմը ու կը վերադարձնէ հոգեւորականութեանը նրա բոլոր արտօնութիւնները: Ասում էին, որ թագաւորն է յեղափոխութեան դէմ յարած ներքին ու արտաքին դաւադրութիւնների ներշնչողը և այլն:

Բայց այս մեղադրանքները աւելի ձևական նշանակութիւն ունէին: Դեկտեմբերի 3-ի նիստում՝ Ռոբէսպիերը ամենայն անկեղծութեամբ ու բացարձակօրէն արտայայտեց այն էական պատճառը, այն մոտիւները, որոնք դրդում էին պահանջելու Լիւդովիկոս XVI ին դատի ենթարկել ու ժամանակ դատապարտել: Ռոբէսպիերը միաժամանակ ջրում է իր ճառում և ժիրոնդականների այն առարկութիւնները, իբր կոնվէնտը իրաւասու չէ դատելու թագաւորին, որի անձնաւորութիւնը 1791 թ. սահմանադրութեան համաձայն համարւում էր անձեռնմխելի:

«Այստեղ—ասաց նա—դատաստանական գործ չկայ. Լիւդովիկոսը մեղադրեալ չէ, իսկ դուք դատաւորներ չէք: Դուք պետական գործիչներ էք, ազգի ներկայացուցիչներ, ձեր գործը չէ դատավճիռներ տալ այս կամ այն մասնաւոր մարդու վերաբերմամբ. դուք պէտք է ձեռք առնէք հասարակական ապահովութեան միջոցներ, կատարէք ազգային նախազգուշութեան մի գործ:

«Ահա թէ ինչու ես հրաւիրում եմ ձեզ ապահովելու հասարակական բարօրութեան բարձր շահերը։ Ի՞նչն է ստիպում մեզ, հարցնում եմ ձեզ, զրաղուել Լիւդովիկոսի անձնաւորութեամբ։ Վրէժխնդրութեան զգացմունքը չէ, որ միանգամայն անարժան է ազգին, այլ հասարակական ազատութիւնն ու խաղաղութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը»։

Այսպէս էին մտածում այն ամենքը, որոնք պահանջում էին թագաւորին դատի ենթարկել։ Նրանց առաջնորդող սկզբունքն էր՝ salus publica suprema lex esto *)։

Կոնվէնտը, այնուամենայնիւ, չը համաձայնուեց Ռոբէսպիէրի հետ և սկսեց երկար դատաքննութիւն։

Ժիրոնդականները ամեն կերպ աշխատում էին ազատել Լիւդովիկոս XVI-ին մահուան պատժից։ Նրանք սկզբում պնդում էին, որ կոնվէնտը իրաւունք չունի դատելու թագաւորին կամ պատժելու նրան, քանի որ նրա անձը, համաձայն սահմանադրութեան, անձեռնմխելի է, որ Լիւդովիկոս XVI-ի դահընկէց լինելը ինքնըստինքեան մեծ պատիժ է և, թերևս, աւելի ծանր, քան մահուան պատիժը։

Երբ կոնվէնտը, այնուամենայնիւ, որոշեց դատի ենթարկել թագաւորին, և հարցը եկաւ որոշելու՝ մեղաւոր է՞ նա թէ ոչ, ժիրոնդականները, չը համարձակուելով ուղղակի յայտնելու իրանց կարծիքը, դիմեցին կողմնակի միջոցների։ Նրանք ժողովրդական գերիշխանութեան ջերմ պաշտպանների դիմակի տակ պահանջեցին, որ կոնվէնտի դուրս բերած դատավճիռը դրւի ժողովրդի հաստատութեան։

Այս պահանջը մեծ զայրոյթ առաջ բերեց սանսանեարների շրջանում։ սրանց համար պարզ էր, որ ժիրոնդականները այդպիսով կամենում են ազատել թագաւորին մահվան պատժից, և սանսանեարները խիստ բողոքեցին այդ առաջարկի դէմ։

Վերջապէս, յունուարի 17-ին 1793 թ. Լիւդովիկոսի ճակատագիրը որոշուեց։

Քուէարկութիւնից յետոյ, կոնվէնտի նախագահը ազդարարեց.

*) «Հասարակութեան բարօրութիւնը պէտք է լինի ամենաբարձր օրէնք»։

«Ազգային կոնվէնտի անունից յայտնում եմ, որ Լիւդովիկոս Կապետը դատապարտուած է մահուան»։

Այս խօսքերից յետոյ կոնվէնտում տիրեց մեռելային լռութիւն...

Դատավճիռը գործադրուեց յունուարի 21-ին առաւօտեան ժամը 10-ին։

«Այսպէս զոհուեց Լիւդովիկոս XVI-ը, ասում է Բլոսը, որին շատերը չափազանց գովաբանում էին, իսկ շատերն էլ չափազանց պարսաւում։ Նրա գործած սխալները խոշոր էին, բայց աւելի մեծ էր պատմական յանցանքը, որ ընկնում էր նրա գինասիրայի վրայ շնորհիւ նրա նախորդների գործունէութեան։ Նա ստիպուած էր քաւելու իր սեպհական մեղքերը, իսկ առաւել ևս ուրիշների մեղքերը։ Եթէ նա ապրէր պատմական մի այլ ժամանակում, նա, անշուշտ, կը վերջացնէր իր կեանքը հանգիստ ու խաղաղ. նրան չէին յիշի ոչ բարի և ոչ էլ չար խօսքով։ Իսկ այժմ նա պիտի զոհուէր»։

2.

Լիւդովիկոս XVI-ի մահը սարսափահար արեց ամբողջ միապետական Եւրոպան ու զրգռեց նրան ֆրանսիական հանրապետութեան դէմ։ Անգլիան, Աւստրիան, Պրուսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Իսպանիան և այլ մանր իշխանութիւններ միացած ոյժերով սպառնում էին Ֆրանսիային չորս կողմից։

Գոռոզ միապետները համոզուած էին, որ հեշտութեամբ կը նուաճեն Ֆրանսիան ու, խեղդելով յեղափոխութիւնը, կը վերականգնեն Ֆրանսիայում հին միապետական կարգերը։

Սակայն իզուր. շուտով նրանք տեսան, որ խիստ յուսախաբուած են։

Յեղափոխութիւնը, որ արմատականապէս փոխել էր Ֆրանսիայի նախկին սոցիալ-քաղաքական կազմը, ներշնչել էր ժողովրդին ամուր հաւատ դէպի իր սեպհական ոյժերը։ Հանրապետութեան հաստատուելուց յետոյ նա դառաւ անպարտ ու անհաղթ։ Չէ՞ որ այժմ ինքը ժողովուրդն էր իր կառավարիչը, իր պետն ու իշխանը։ Չէ՞ որ նրա ոյժն ու եռանդը մաշող գործոնները վե-

բացել էին։ Այժմ նա, պաշտպանելով իր հայրենիքը, ժաքառում էր ի սեպհական ազատութիւնը ապահովելու համար...

Ժողովուրդը անընդհատ զօրագնդեր էր կազմում և սիրով գնում էր կռւի դաշտը նրա խանդավառութիւնը, ոգևորութիւնը, սէրը դէպի ազատութիւնը չափ չունէր։ Այդ անմոռանալի օրերին յօրինած յեղափոխական երգը՝ մարսելիոզան վառում բորբոքում էր նրա պատերազմական խանդը...

Allons, enfants de la patrie,
Le jour de gloire est arrivé;
Contre nous de la tyranie
Le couteau sanglant est levé... *)

Այս երգը բերանին ֆրանսիական զօրքը գրոհ էր տալիս թշնամու վրայ. ջարդում, խողխողում ու հալածում նրան հեռու ֆրանսիական սահմաններից...

Բայց միաժամանակ հանրապետութեանը սպառնում էին և ներքին թշնամիները։

Պարիզում կենսական պիտոյքների կարիքը օր ըստ օրէ աճում էր. սովը սպառնում էր աշխատաւոր մասսաներին. միաժամանակ գործազրկութիւնը լայն չափեր էր ստանում. դժգոհների թիւը հետզհետէ աւելանում էր։ Այս հանգամանքներից աշխատում էին օգտուել արքայականները. նրանք դրդում էին ժողովրդին կօնվէնտի ու կոմմունայի դէմ։

Նոյն երևոյթն էր նկատւում և գաւառներում։ Ազնուականները ու հոգևորականները, ժանտանդ քաղաքացիական երդումից հրաժարուած քահանաները, թագաւորի մահից յետոյ կրկնակի եռանդով ինտրիգներ էին սարքում յեղափոխութեան դէմ։ Ներքին քաղաքացիական կռիւը անխուսափելի էր դառել, և նա շուտով բռնկուեց. հասարակութեան ըէակցիոն տարրերը ապստամբուեցին յեղափոխութեան դէմ։ Ֆրանսիայի 80 դեպարտամենտներից միայն 20-ը մնացին հաւատարիմ կօնվէնտին ու յեղափոխութեան, մնացեալները բացարձակապէս ըմբոստացան...

Սակայն ապստամբութեան գլխաւոր կենտրոնը կազմում էր

*) Յառաջ, հայրենիքի զաւակներ, հասել է փառքի օրը. մեր դէմ է բարձրացրել բռնապետութիւնը իր արիւնոտ դանակը...

Վանդէան։ Այստեղ կռիւը աւելի յամառ էր ու աւելի արիւնահեղ։ Վանդէան Ֆրանսիայի ամենայետամնաց նահանգն էր։ Այստեղ սիրում էին կատարեալ նահապետական կարգեր։ Ագգարնակութեան ստուար մասը կազմում էին գիւղացիները, որոնք, չունենալով սեփական հող, մշակում էին կալւածատէրերի հողերը, որոշ բաժին հանելով նրանց։ Ֆէօդալիզմի լուծը այստեղ համեմատաբար աւելի մեղմ էր և, չնորհիւ դրան, գիւղացու ու կալւածատիրոջ փոխադարձ յարաբերութիւնները ոչ միայն չէին կրում այն սուր բնաւորութիւնը, ինչպէս Ֆրանսիայի այլ տեղերում, այլ և բարեկամական էին։ Միաժամանակ վանդէացիները, թէ գիւղացի և թէ ազնուական, խիստ կրօնասէր էին և ամբողջովին նվիրուած էին կաթոլիկ եկեղեցուն ու իրանց հոգևորականներին։ Գիւղացիները խարխափում էին ծայրայեղ տգիտութեան մէջ, բոլորովին անտեղեակ, թէ ինչ է կատարւում լոյս աշխարհում։ 18-դ դարի հսկայական մտաւոր շարժումը հնարաւոր չէր դիպել վանդէացուն, նա ապրում էր իր խուլ անկիւնում գիւղական անդորր կեանքով ու անգիտակ աշխարհն յուզող նոր խնդիրներից...

Վանդէացիները չէին ըմբռնում յեղափոխութիւնը։ Պարիզի դէպքերը և բոլոր բարենորոգումները միայն գրգռում ու զայրոյթ էին պատճառում նրանց... 1789 թ. օգոստոսի 4-ի աշխարհահռչակ որոշումները, «յեղափոխութեան այդ հարուստ օժիտը», վանդէացիները ընդունեցին շատ սառն ու նոյն իսկ թշնամաբար... Իսկ հոգևորականութեան վերաբերեալ օրէնքները միայն ատելութիւն առաջ բերին նրանց ստուածավախ սրտերում... Նրանք չէին ուզում հրաժարուել իրենց նահապետական սովորութիւններից ու աւանդներից .. Նրանց համար սրբապղծութիւն էր այն ամենը, ինչ սպառնում էր խախտելու նրանց նահապետական ներդաշնակ կեանքը...

Պարզ է, որ այդպիսի պայմաններում Վանդէան ներկայանում էր մի պարարտ հող ամեն տեսակ ըէակցիոն շարժումների համար։ Եւ յեղափոխութեան ու հանրապետութեան թշնամիները չը զլացան լայն չափով օգտուել վանդէացիների այս հակայեղափոխական տրամադրութիւնից...

Վանդէացիների ապստամբութեան հետ միաժամանակ զէնք ձեռք առին հանրապետութեան դէմ և Լիոն, Մարսէյլ, Բօրդօ քաղաքները ու Բրետան նահանգը։

Ամեն տեղ ապստամբներին առաջնորդ էին հանդիսանում արքայականները, հոգևորականներն և ժիրոնդականները, որոնք դեմ էին ժողովրդի գործունեությանը։

Ամբողջ Ֆրանսիան դառել էր մի պատերազմական բանակ...

Կոնվենտի դրությունը շատ ծանր էր. նա մի կողմից պիտի կռիվ մղեր ներքին ապստամբությունների դեմ, միս կողմից՝ պիտի դիմադրեր ամբողջ միապետական Եվրոպային...

Չնայած դրան կոնվենտը տեղի չը տվեց այդքան դժվարին ու բարդ պայմանների առաջ. նա ոչ միայն չը լքացու ու չը վհատվեց, այլ, ընդհակառակը, մի չը տեսնված եռանդով ու անկուն կամքով առաջ տարաւ յեղափոխական գործը և ապահովեց ժողովրդի ազատությունը։

Ամենից առաջ կոնվենտը յայտարարեց համաժողովրդական ամնիստիա (ընդհանուր ներում)։

Այդ առթիւ «հասարակական ապահովության կոմիտեի» անունից Բարեռը առաջարկեց մի շարք ընդհանուր միջոցներ։

«Ազատությունը, ասաց նա, այժմ բոլոր քաղաքացիների պարտատերն է. ոմանք, պիտի նվիրեն նրան իրենց աշխատանքը, ոմանք էլ՝ իրենց հարստությունը. մեկը պիտի օգնի նրան իր խորհուրդներով, միւսը՝ իր ձեռքի աշխատանքով, իսկ ամենքը պիտի զոհեն նրան իրենց արիւնը։ Այսպէս, ուրեմն, հայրենիքը կանչում է բոլոր երկուսեռի և ամեն հասակի ֆրանսիացիներին պաշտպանելու ազատությունը. բոլոր ֆիզիքական ու մտաւոր ընդունակությունները, բոլոր պետական ու արդիւնաբերական միջոցները նրան են պատկանում։ Թող իւրաքանչիւր անհատ շտապէ իր տեղը բռնելու ազգային ու ռազմական այս շարժման մեջ։ Երիտասարդները պիտի կռուեն, ամուսնացած տղամարդիկ պիտի զենք կռեն կոփեն, թնդանոթներ փոխադրեն ու պաշարեղեն պատրաստեն. կանայք պիտի շորեր կարեն զինուորների համար, վրաններ խփեն ու վիրաւորներին խնամեն հիւանդանոցներում. երեխաները պիտի պրոն գզգզեն, իսկ ծերունիներն, հաւատարիմ մնալով իրանց աւանդական կոչման, կը պահանջեն իրենց հրապարակ դուրս բերել, որպէսզի քաջալերեն երիտասարդ զինուորներին, քարոզեն ատելություն դէպի թագաւորներն ու ներշնչեն սէր և միություն դէպի հանրապետությունը։ Ազգային շինությունները կը վերածուեն զօրանոցների, իսկ հրապարակները՝ արհեստանոցների։

Հանրապետությունը՝ պաշարված քաղաք է, հետևաբար և ամբողջ Ֆրանսիան պիտի դառնայ մի ընդարձակ բանակ»։

Եւ յիրաւի, կոնվենտը կարճ ժամանակամիջոցում ոտի կանգնեցրեց ամբողջ Ֆրանսիան. նա հաւաքեց մի միլիոն զօրք...

Այդ հսկայական ջանքերի շնորհիւ կոնվենտը կարողացաւ դուրս քշել Ֆրանսիայի սահմաններից օտար զօրքերն ու վերջ դնել ներքին ապստամբություններին։ Բօրդո, Մարսէյլ, Տուլօն քաղաքներն անձնատուր եղան, իսկ Վանդէան ու Լիոնն ենթարկուեցին սոսկալի աւերման (1793 թ. հոկտեմբերին)։

Ամեն տեղ կոնվենտը յաղթող հանդիսացաւ։

Դժբախտաբար հենց այդ ժամանակ ներքին կուսակցական կռիւները կրծում, ջլատում էին կոնվենտի յեղափոխական ոյժը։

Ֆրանսիայի այդ տագնապալից օրերին երկու գօրեղ կուսակցությունները՝ ժիրոնդականներն ու մոնտանեարները չէին բողանում ոչ մի կերպ հաշտ ու համերաշխ գործել։ Զափազանց խիստ էր տարբերվում իւրաքանչիւրի գործունեության եղանակն ու ամբողջ աշխարհայեցողությունը։

«Ժիրոնդականները, ասում է Բէրվին, հանրապետության ոգևորված պաշտպաններ էին. նրանց իդէալն էր հին յունական ու հռովմէական հանրապետությունները. այդպիսին էլ նրանք ձգտում էին ստեղծել Ֆրանսիայում։ Նրանց անուանում էին «Դաշնակցականներ» (ֆեդէրալիստներ), որովհետև պաշտպանում էին դեպարտամենտների ինքնավարության (աւտոնոմիայի) սկզբունքը։ Նրանք ջերմ կերպով պաշտպանում էին անհատական ազատությունը, բողոքում էին բռնությունների դէմ, կողմնակից էին չափաւոր միջոցների գործադրության։ Նրանք մեծ իդէալիստներ էին և, ընդհանուր առմամբ, չը գիտէին գործելու եղանակը. նրանք չէին կարողանում զեկավարել ամբոխը, իսկ դրա հետ միասին շատ քիչ կապեր ունէին ժողովրդի հետ։ Ժիրոնդականները, պաշտպանելով գաւառների, դեպարտամենտների շահերը, մաքառում էին Պարիզի բացառիկ ազդեցության դէմ։

«Իսկ մոնտանեարները, ընդհակառակը, կողմնակից էին տերորի և անհնարին էին համարում առանց դրան պահպանել հանրապետությունը։ Նրանք պահանջում էին ժողովրդի լիակատար դիկտատուրան, պաշտպանում էին «մի անբաժան հանրապետության» գաղափարը։

Մոնտանեարներն աւելի զօրեղ էին, քան ժիրոնդականները. նրանք յենւում էին եակոբինների վրայ, որոնք գեղեցիկ կերպով կազմակերպւած էին. բացի այդ նրանց կողմն էին Պարիզի սանկիւլոտները (անդրվարտիկ չունեցողներ),—մայրաքաղաքի ազգաբնակութեան ամենաչքաւոր մասը: Մոնտանեարները մեծ ազդեցութիւն ունէին Պարիզում և ձգտում էին Ֆրանսիան նրա ազդեցութեանը ենթարկել, որովհետև համոզւած էին, որ Պարիզը, անցնելով յեղափոխական շարժման գլուխը, առաջ կը մղէ և դեպարտամենտները, մինչդեռ եթէ գաւառները բոլոր գործերում հաւասար վճռողական ձայնի իրաւունք վայելէին, յեղափոխական շարժումը դիւրութեամբ կանգն կառնէր, և այդ ժամանակ արքայականները կրկին գլուխները կը բարձրացնէին: Մոնտանեարները կանգնած էին աւելի մօտիկ Պարիզի կոմմունային, քան կոնվէնտին, որովհետև առաջինը աւելի վճռողական էր գործում, քան երկրորդը»*):

Կոնվէնտում իւրաքանչիւր հարցի քննութեան ժամանակ այս հակադրութիւնները բացորոշ կերպով արտայայտւում էին: Թագաւորի դատը եղաւ առաջին խոշոր հարցը, որի առթիւ երկու կուսակցութիւններն խիստ ընդհարւեցին: Այնուհետև որքան իրերի դրութիւնը ծանրանում էր Ֆրանսիայում, այնքան ընդհարումները յաճախ էին տեղի ունենում. երկու բանակների կըրքերը հետզհետէ այնքան գրգռւեցին, բանակուիը այնչափ սուր կերպարանք առաւ, որ երկու կուսակցութիւններից մէկի անկումը անխուսափելի դառաւ...

Մոնտանեարների առաջարկած բոլոր ռեպրեսիւ միջոցները հանրապետութեան ներքին թշնամիների դէմ միշտ հանդիպում էին կոնվէնտում ժիրոնդականների կողմից ուժեղ դիմադրութեան:

Ամեն անգամ բռնկւում էր մի սոսկալի պայքար, որ ոչ սակաւ հասնում էր բռունցքների գործածութեան ..

«Այդ մրրկալից ժամանակին կոնվէնտում, թւում էր, թէ տեղի էր ունենում հսկաների կռիւ,—ասում է Բլոսը: Մարդիկ կսրդում էին իրար մահւան սպառնալիքներ: Դանտոնը սպառնում էր ժիրոնդականներին կեանքի ու մահւան կռիւ սկսել. Ռոբէսպիերը յայտարարում էր նրանց յեղափոխութեան թշնամիներ, իսկ Մարատը իր լրագրի մէջ պահանջում էր նրանց իսպառ ոչնչացնել:

*) Ο. Берви—Борьба за свободу во Франціи, ч. III. стр. 17—18.

Միևնոյն ժամանակ Պարիզի փողոցներում ժիրոնդականների կողմնակիցները պահանջում էին մահւան դատապարտել Դանտոնին, Մարատին, Ռոբէսպիերին»:

Այնուամենայնիւ մոնտանեարներին յաջողւեց կոնվէնտում ընդունցնել մի քանի առաջարկներ, որոնց նպատակն էր դիւրին միջոցներ ստեղծել շուտափոյթ հարւածներ տալու ներքին թշնամիներին:

Այսպէս կոնվէնտը հաստատեց «արտակարգ դատաստանական ատեան»—(տրիբունալ) — իրաւասութիւն տալով նրան քննել այն բոլոր գործերը, որոնք վերաբերում էին հակայեղափոխական փորձերին, ուղղւած ազատութեան, հաւասարութեան ու անբաժան հանրապետութեան դէմ, բոլոր դաւադրական գործերը, որոնց նպատակն է եղել վերականգնել միապետական իշխանութիւնն և այլն: Ատեանը, որ բաղկացած էր 10 հոգուց, կարող էր կամ մահւան դատապարտել կամ արդարացնել. արդար ճանաչւածները ստանում էին որոշ վարձատրութիւն: Նրա դատավճիռները պէտք է գործադրւէին 24 ժամւայ ընթացքում. դատապարտւածի գոյքը յարքունիս էր գրաւում: Ժիրոնդականները մեծ անհեռատեսութիւն ունեցան պահանջելու, որ այդ բարձրագոյն յեղափոխական ատեանը իրաւասու լինի դատելու նաև կոնվէնտի անդամներին...

Այս ատեանի հաստատումից յետոյ գիլիոտինը սկսեց իր առատ հունձը... Սարսափն ու մահը տիրեցին ամէնուրեք...

Չը բաւականանալով դրանով, մոնտանեարները պահանջեցին ստեղծել մի ուրիշ ատեան՝ «հասարակական ապահովութեան կոմիտէ», որ կանգնած էր աւելի բարձր քան մինիստրներն և իրաւասու էր անելու ամեն ինչ, որ իր կարծիքով անհրաժեշտ էր սպառնացող վտանգից երկիրն ապահովելու համար...

Սա արդէն կատարեալ դիկտատուրա էր, որին ձգտում էր Մարատը:

Սակայն ժիրոնդականները, չնայած բոլոր այդ խիստ միջոցներին, շարունակում էին իրանց օպոզիցիան, թուլացնելով յեղափոխութեան ոյժը: Նրանք նոյն իսկ հակառակ էին ծայրայեղ միջոցներ գործ դնելուն ապստամբ վանդէացիների դէմ: Իսկ ինչ վերաբերում է Լիոն, Մարսէյլ, Բորդո ապստամբ քաղաքներին, սրանք ամենքը կողմակից էին ժիրոնդականներին, և սաստիկ ատում էին մոնտանեարներին: Վերջապէս մոնտանեարները՝ Դան-

ոնը, Մարատը, Ռոբէսպիերը որոշեցին միանալ մայրաքաղաքի կոմմունայի հետ և միացած ոյժերով արտաքսել ժիրոնդականներին կոնվէնտից։

Պարիզի ազգաբնակութիւնը, որ վաղուց արդէն թշնամաբար էր տրամադրուած դէպի ժիրոնդականները, սպասում էր մի ազդանշանի, որպէսզի ոտի կանգնէր։

Այդ ազդանշանը ուին հէնց իրանք ժիրոնդականները։

Սրանց նախաձեռնութեամբ կոնվէնտը ընտրեց 12 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որ պիտի քննէր սեպտեմբերեան սպանութիւնների գործը ու հեղինակներին դատի ենթարկէր։

Այս յանձնաժողովը, որ ամբողջովին բաղկացած էր ժիրոնդականներից, ձերբակալեց մի քանի յայտնի յեղափոխականների և կոմմունայի քարտուղար Հէբերին, որ վայելում էր մեծ ժողովրդականութիւն Պարիզի ազգաբնակութեան մէջ։

Այս հանգամանքը մոնտանեարների ու նրանց համախոհ Պարիզի ազգաբնակութեան համբերութեան բաժակը լցրեց...

Մայիսի 31-ին Պարիզի ազգաբնակութիւնը զինուած դիմեց դէպի կոնվէնտ, պահանջելով ազատել ձերբակալուածներին և լուծել 12-ի յանձնաժողովը։

Կոնվէնտը, շրջապատուած ապստամբ ժողովրդով, ստիպուած եղաւ այդ օրը բաւարարութիւն տալ նրա պահանջին՝ ազատել ձերբակալուածներին և լուծել 12-ի յանձնաժողովը։

Սակայն միւս օրը կոնվէնտը նորից վերականգնեց այդ յանձնաժողովի լիազօրութիւնը, թէև չը վստահացաւ ազատուածներին նորից ձերբակալել։ Այս հանգամանքը սաստիկ զրգռեց կոմմունային, և նա նորից ապստամբութեան դրօշը պարզեց, նպատակ դնելով իսպառ ոչնչացնել իր հակառակորդ ժիրոնդականներին։

Յունիսի 2-ին վաղ առաւօտեան նարատի ահեղ ձայնը կոչեցին ժողովեց Պարիզի ազգաբնակութիւնը...

Ազգային գւարդիայի առաջնորդութեամբ ժողովուրդը դիմեց դէպի կոնվէնտը, պահանջ դնելով ժիրոնդականներից 22 հոգու հեռացնել կոնվէնտից ու ենթարկել բանտարկութեան։

Ժիրոնդականները սկզբում փորձեցին դիմադրել ապստամբների այդ պահանջին, սակայն, շուտով համոզուելով, որ իրանց ճակատագրի ժամը խփել է, որ դիմադրութիւնը միայն պատճառ կը դառնայ արիւնահեղ ընդհարումների, տեղի տուին։ Մարատը,

որ ապստամբութեան գլխաւոր ղեկավարն էր ու օրուայ հերոսը, ամբիոն բարձրանալով, կարդաց 22 պատգամաւորների անուանացուցակը, պահանջելով ժողովրդի անունից դրանց տնային բանտարկութեան ենթարկել։

Կոնվէնտը ընդունեց այդ առաջարկը, և այդպիսով ժիրոնդականների կուսակցութիւնը վերջնականապէս ընկաւ...

«Չէ կարելի հերոսութիւն համարել, ասում է Բլոսը, երկու դիւժին պատգամաւորների արտաքսումը կոնվէնտից թնդանօթների ու սուիների միջոցով, բայց հազիւ թէ ձեռքի տակ կար մի ուրիշ միջոց։ Պարիզի ժողովուրդը տապալեց այդ ժարդկանց, որոնք ձգտում էին հանրապետութեան մէջ խաղալ բուրժուական արիստոկրատիայի դեր. դրանց մէջ կային մարդիկ, որոնց ազատութեան գործին մատուցած ծառայութիւնները շատ մեծ էին, սակայն նրանք պահանջում էին յեղափոխութիւնից, որ նա կանգն առնի այն տեղ, ինչ տեղ իրանք էին ցանկանում. բայց յեղափոխութեան յորձանքը նրանց կլանեց իրանց այդ ապարդիւն ու անմիտ ձգտումների մէջ»։

3.

Ժիրոնդականների անկումից յետոյ սկսում է մոնտանեարների գերիշխանութիւնը կոնվէնտում, իսկ դրա հետ միասին տերրօրի ու ահաբեկումների շրջանը ամբողջ Ֆրանսիայում։

Մոնտանեարները համոզուած էին, որ հանրապետութեան բազմաթիւ թշնամիներին կարելի է յաղթահարել միայն սարսափի միջոցով և մինչև որ բոլոր թշնամիները ոչնչացրուած, ջախջախուած չեն լինի, անհնարին կը լինի սկսել օրինական խաղաղ կեանքը։ Հին միապետական կարգերի կողմնակիցները դեռ չափազանց շատ էին. նրանք միապետական Եւրոպայի հետ միասին կազմում էին մի հեղինակաւոր ոյժ, որը իւրաքանչիւր րոպէ սպառնում էր հանրապետութեան գոյութեանը։ Մոնտանեարներն այդ շատ լաւ էին տեսնում. նրանք լաւ գիտէին, որ եթէ ժողովրդի յեղափոխական տրամադրութիւնը փոքր ինչ թուլանայ,—այդ արդէն բաւական է, որպէսզի բոլոր նոր կարգերին հակառակորդ տարրերը կրկին գլուխ բարձրացնեն... Իրերի այս մշտական սպառնալից դրութիւնն էր, որ հարկադրում էր մոնտանեարներին դիմել ամեն ծայրա-

յեղ միջոցների, որպէսզի կենդանի պահեն յեղափոխութիւնը ու նրա միջոցով հաստատ հիմունքների վրայ դնեն նոր կարգերի հոյակապ կառուցուածքը... Ռոբէսպիերը իր ճառերից մէկում գեղեցիկ կերպով նկարագրում և պատճառաբանում է մոնտանեարների այդ կառավարչական ամբողջ սիստէմը։

«Արտաքուստ մեզ շրջապատում են բռնակալները,—ասում է Ռոբէսպիերը. երկրի ներսում բռնակալութեան պաշտպանները չարիք են նիւթում նոր կարգերի դէմ և դեռ պիտի նիւթեն ամեն տեսակ դաւեր, մինչև որ իսպառ չը չքանայ նրանց յոյսը, որ կարող են յանցանքներ գործել ու մնալ անպատիժ։ Անհրաժեշտ է ճնշել հանրապետութեան ներքին ու արտաքին թշնամիներին, կամ թէ մեռնել նրանց հետ միասին։ Իրերի այսպիսի դրութեան ժամանակ քաղաքականութեան առաջին սկզբունքը պիտի լինի կառավարել ժողովուրդը բանականութեան (разумъ) պահանջների համաձայն, իսկ ժողովրդների թշնամիներին՝ սարսափի միջոցով։ Եթէ խաղաղ ժամանակներում ժողովրդական կառավարութեան ղեկավարող սկզբունքը լինում է առաքինութիւնը,—յեղափոխական դարաշրջանում իրրև ղեկավարող սկզբունք պիտի ծառայեն միաժամանակ և առաքինութիւնը և երկիւղը. առաքինութիւնը նրա համար, որ առանց նրան կորստաբեր է երկիւղը, իսկ երկիւղը նրա համար, որ առանց նրան անզօր է առաքինութիւնը։ Սանձահարեցէք ազատութեան թշնամիներին երկիւղ ազդելով,— և դուք, որպէս հանրապետութեան հիմնադիրներ, կը լինէք արդարացի։ Յեղափոխական կառավարութիւնը՝ ազատութեան բռնապետութիւն է, ուղղած բռնակալութեան դէմ *)։

Ռոբէսպիերի քարոզած այս սկզբունքները համարեա ամբողջովին իրագործուեցին յեղափոխութեան յետագայ ընթացքում։

Ութ ամիս էր, ինչ կոնվէնտը հաւաքուել էր, նպատակ դնելով տալ Ֆրանսիային նոր սահմանադրութիւն, սակայն ներքին խռովութիւնների պատճառով նա չէր կարողացել ձեռնամուխ լինել այդ աշխատանքներին։ Մոնտանեարները շտապեցին օգտուել կոնվէնտում տիրող համերաշխութիւնից, մշակել նոր սահմանադրութիւն ու այդպիսով իրանց կողմը գրաւել բոլոր հանրապետականներին։

Կոնվէնտը դեռ սկզբում ընտրել էր մի առանձին յանձ-

*) Минье—Ист. фр. рев. երես 225։

նաժողով մշակելու նոր սահմանադրութիւն, իսկ յետոյ նրան դիտական կոնդորսէն արդէն ծրագրել էր սահմանադրութեան հիմնական սկզբունքները. սակայն կոնվէնտը չընդունեց այդ օրինագիծը, որ ամբողջով արտայայտում էր ժիրոնդականների հայեացքները, և ընտրեց նոր յանձնաժողով, բաղկացած բացառապէս մոնտանեարներից։ Յանձնաժողովը, համաձայն կոնվէնտի տուած հրահանգին, երեք օրուայ մէջ պատրաստեց սահմանադրութեան նոր օրինագիծը ու ներկայացրեց կոնվէնտի հաստատութեան։

Նոր սահմանադրութիւնը ստեղծում էր կատարեալ ժողովրդապետութիւն, պետական իշխանութիւնը անցնում էր ժողովրդական մասսաների ձեռքը։ Իւրաքանչիւր 21 տարեկան ֆրանսիացի համարւում էր պետութեան քաղաքացի և օգտւում էր բոլոր քաղաքական իրաւունքներով առանց կարողութեան ցէնզի (имущественный цензъ) կամ ուրիշ որևէ սահմանափակումների։ Ամբողջ երկիրը բաժանուած էր շրջանների, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած էր 50,000 քաղաքացիներից. ամեն մի այդպիսի շրջան կազմում էր «սկզբնական ընտրողական ժողով», որ պիտի հաւաքուէր իւրաքանչիւր տարի մայիսի մէկին և ընտրէր անմիջապէս «ազգային ժողովի» պատգամաւորներին. ազգային ժողովը կազմում էր պետութեան բարձրագոյն օրէնսդրական հաստատութիւնը. գործադիր իշխանութիւնը տրուած էր 24 հոգուց բաղկացած «գործադիր խորհուրդի» ձեռքը. սրա անդամներին ընտրում էին կրկին սկզբնական ժողովները միայն անուղղակի կերպով. սրանք կազմում էին թեկնածուների ցանկը, իսկ ազգային ժողովը ամսիաանաբար ցանկից ջնջում էր այնքան անուններ, մինչև որ ցանկում մնում էր միայն 24 անուն։

Կոնվէնտը այդ օրինագիծը ընդունեց 1793 թ. յունիսի 24-ին և յանձնեց սկզբնական ժողովների հաստատութեան, նշանակելով միայն երեք օր ժամանակամիջոց։

Սակայն նոր սահմանադրութիւնը չը կիրառուեց. կոնվէնտը, ի նկատի առնելով իրերի սպառնալից դրութիւնը, արտաքին թշնամիների ունեցած յաջողութիւններն ու ներքին ապստամբութիւնները, և համոզուած լինելով, որ այդպիսի սի յեղափոխական ժամանակում պահանջւում է իշխանութեան կենտրոնացումը, անմիջապէս ժամանակաւորապէս վերացրեց սահմանադրութիւնը։

Այդպիսով հաստատուեց մոնտանեարների դիկտատուրան։

Եակոբինների իշխանութիւնը հետզհետէ զօրեղանում ու ընդլայնւում էր. նրանց ցոյց տուած եռանդուն ու անխոնջ գործունէութիւնը շուտով գրաւեց ժողովրդական լայն խաւերի համակրանքը: Բայց հէնց այդ միջոցին նրանց ղեկավարներից մէկը՝ Մարատը, զոհ գնաց յեղափոխութեան թշնամիներին:

Մարատը, որ հանդիսանում էր պրոլետար դասակարգի ամենաականաւոր պաշտպանը, վայելում էր բուրժուական դասակարգի խոր ատելութիւնը: Ժիրոնդականներն ամենից շատ ատում էին Մարատին, համարելով նրան իրանց անկման գլխաւոր պատճառը. նրան էին մեղադրում նաև մայիսի 31-ի և յունիսի 2-ի դէպքերի մէջ: Մարատին նրանք նկարագրում էին իբրև մի հրէշային բնաւորութեան տէր մարդու, որ միշտ ձգտում է տերրօրներով յագուրդ տալ իր արիւնռուշտ հակումներին... Մի խօսքով Մարատին էին համարում յեղափոխութեան բոլոր սարսափների հեղինակը, և նոյն իսկ յեղափոխական շարժման գլխաւոր պատճառը...

Եւ ահա մի ազնուականի 20-տարեկան աղջիկ՝ Շարլոտտա Կորդէ անունով, տոգորուած ամբողջովին այդ հայեացքներով ու լցուած ատելութեամբ դէպի Մարատը, միտք է յղանում սպանել նրան, որպէսզի, ինչպէս յետոյ ինքն էր ասում դատավարութեան ժամանակ, ազատէ Ֆրանսիան անծայր դժբախտութիւններից...

Շարլոտտա Կորդէին յաջողուեց իրագործել իր մտադրութիւնը յուլիսի 13-ին:

Մարատի մահից յետոյ ժողովրդական մասսաները առաւել ևս մեծարեցին նրան. «ժողովրդի բարեկամի» կիսարձանները դրուած էին ժողովրդական բոլոր ընկերութիւններում. նրան մեծ շքով թաղեցին Պանթէոնում, իսկ Շարլոտտա Կորդէն դատապարտուեց մահուան:

Ինչ ասել կուզի, որ Շարլոտտա Կորդէն իր յոյսերի մէջ խիստ սխալուեց. նա կարծում էր, որ Մարատի մահը վերջ կը դնի յեղափոխական շարժման ու խաղաղութիւն կը բերի Ֆրանսիային. բայց իզուր. յեղափոխութիւնը անհատի ձեռքի գործ չէր. նրա արմատները թաղուած էին չափազանց խոր ժողովրդական բոլոր խաւերի ընդհանուր տնտեսական և սոցիալ-քաղաքական

պայմանների մէջ, որպէսզի մի մարդու մահը ընդունակ լինէր կանգնեցնելու յեղափոխական շարժման յաղթական ընթացքը...

4.

Մարատի մահից յետոյ մոնտանեարների «սարսափի» քաղաքականութիւնը աւելի սաստկացաւ: Հոկտեմբերի 10-ին կոնվէնտը յայտարարեց, որ կազմուած է նոր յեղափոխական կառավարութիւն: Վերջինս բաղկացած էր երեք օրգաններից. «յեղափոխական տրիբունալից», «հասարակական ապահովութեան կոմիտէից» և «հասարակական բարօրութեան կոմիտէից»:

Այս երեք մարմինների մէջ, որոնց մասնակցում էին բացառապէս մոնտանեարները, ամենից մեծ հեղինակութիւն վայելում էր «բարօրութեան կոմիտէն»: Այստեղ էր կենտրոնացած ամբողջ յեղափոխական ոյժը: Կոմիտէի գլխաւոր ղեկավարներն էին՝ Ռոբէսպիերը, նրա երկու ընկերները՝ երիտասարդ Սէն-Ժիւստն ու Կուտոնը և ապա գեներալ Կարնոն, որ անցաւ ֆրանսիական զօրքի գլուխը: Սրա պատերազմական հանճարի շնորհիւ էր, որ յաջողուեց կոմիտէին կարճ ժամանակամիջոցում յետ մղել արտաքին թշնամիներին Ֆրանսիայի սահմաններից:

Յեղափոխական այդ նոր կառավարութիւնը մեծ տոկունութեամբ ու անդուլ եռանդով տարաւ իր գործունէութիւնը պատմական այդ ծանր մոմէնտին:

Յեղափոխական տրիբունալը շարունակ կախաղան էր բարձրացնում հանրապետութեան թշնամիներին. տերրօրը տերրօրի էր հետևում, անընդհատ ու անխնայ: Մահուան հրեշտակը ազատ սաւառնում էր Պարիզի Մարսեան դաշտում... Միայն Պարիզում 7 շաբաթուայ ընթացքում գիլիոտինին զոհ գնացին 1500 հոգի... Նոյնը տեղի էր ունենում գաւառներում:

Այդ ժամանակամիջոցում Պարիզում մահուան դատապարտեցին՝ թագուհի Մարիա Անտուանէտտան (հոկտեմբերի 16-ին), ձերբակալուած 22 ժիրոնդական պատգամաւորները (հոկտեմբերի 31), տիկին Ռոլանը (նոյեմբերի 8-ին), իսկ գիտնական Կոնդորսէն վերջ դրեց իր կեանքին բանտում թոյն ընդունելով...

Այս միջոցին, երբ մահուան սարսափը պատել էր ամենքին, երբ մարդկանց կրքերը սաստիկ վառուել էին, երբ վրէժխնդրու-

թեան զգացմունքը այլանդակութեան էր հասնում իր ծայրայեղութիւնների մէջ, կոնվէնտը, այնուամենայնիւ, ժամանակ էր գտնում զբաղուելու մի շարք կարևոր օրէնսդրական աշխատանքներով։ Այսպէս. կոնվէնտը մշակեց հասարակական դաստիարակութեան ու կրթութեան մի ընդարձակ օրինագիծ, որ հիմնուած էր Դանտոնի հետևեալ նշանակալից խօսքերի վրայ. «երբ դուք մեռնամուխ կը լինէք ցանելու կրթութեան սերմերը ձեր հայրենիքի անդաստանում, դուք հաշուի չառնէք սերմի վրայ դրած ծախսը. հացից յետոյ կրթութիւնն է կազմում ժողովրդի առաջին պահանջը»։ Ռոբէսպիերը ևս հանդէս եկաւ իբրև ջերմ պաշտպան ընդհանուր, պարտադիր եւ ձրի կրթութեան։ Մտքերի փոխանակութիւնից յետոյ կոնվէնտը դուրս բերեց հետևեալ որոշումը՝ «Հասարակութիւնը պարտաւոր է տալ իր իւրաքանչիւր անդամին հաց եւ կրթութիւն»։

Միաժամանակ կոնվէնտը մեծ ջանք գործ դրեց հիմնելու մի շարք դպրոցներ թէ տարրական, թէ միջնակարգ և թէ բարձրագոյն։ Նա հրատարակեց բազմաթիւ գրքեր ու բրոշիւրներ ժողովրդական ընթերցանութեան համար, իսկ որպէսզի աւելի մեծ զարկ տուած լինի գիտութեան զարգացման, նա նշանակեց մի շարք մրցանակներ լաւագոյն աշխատանքների համար։ «Երբէք, ասում է Լուի Բլանը, այդչափ ջանք գործ չէր դրուած ցրելու ժողովրդական տգիտութեան խաւարը»։

Միապետութեան անկումից յետոյ Լուվրի և Տիւլիերիի դատարկուած պալատներում կոնվէնտը բաց արեց թանգարաններ։ 1793 թ. նա հրատարակեց «քաղաքացիական օրէնսգիրքը», որի քննութիւնը խլեց 60 նիստ։ Բայի այդ խոշոր օրէնքներից՝ կոնվէնտը հրատարակեց մի շարք մանր կանոններ, ինչպէս են՝ «հրահանգներ հովիւներին», «հրահանգներ հողագործ քաղաքացիներին», «հրահանգ մեղուաբուծութիւնը տարածելու մասին» և այլն։ Կոնվէնտի օրէնսդրական աշխատանքների ծաւալի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար բաւական է յիշել, որ նա մշակել ու հրատարակել էր 11,200 դեկրետներ (կարգադրութիւններ)։ Կոնվէնտը բարեփոխեց նաև քրիստոնէական օրացոյցը։ Այդ մասին ներկայացրած զեկուցումը սկսւում է հետևեալ նշանաւոր խօսքերով. «Ֆրանսիայի վերածնութիւնը բաց է անում իրանով մի նոր պատմական դարաշրջան. անհրաժեշտ է այդ նոր էրան սկսել նոր ժամանակագրութեամբ»։ Որոշուեց նոր օրացոյցի ա-

ռաջին օրն ընդունել 1792 թ. սեպտեմբերի 22-ը, որովհետև այդ ժամանակ էր հաստատուել հանրապետութիւնը, իսկ տարին բաժանել 365 օրի ու, 12 ամիսների։ Իւրաքանչիւր ամիս ունէր 30 օր. մնացեալ 5 օրն անուանեցին «սանկիւլոտային օրեր» և համարեցին տօն օրեր. առաջին օրը նուիրուած էր՝ հանճարին, երկրորդը՝ աշխատանքին, երրորդը՝ բարի գործերի, չորրորդը՝ վարձատրութեան, հինգերորդը՝ հասարակական կարծիքին։ Իւրաքանչիւր ամիս ունէր իր առանձին անունը հատաձայն տարբեր եղանակներին։ Այսպէս՝ աշնանային ամիսներն էին՝ Վանդէմիեր (խաղողաքաղի ամիս), Բրիւմէր (մառախուղի ամիս), Ֆրիմէր (սառնամանիքի ամիս). ձմեռնային ամիսներն էին՝ Նիվոզ (ձիւնի ամիս), Պլիւվիոզ (անձրևային ամիս), Վանտոզ (քամիների ամիս), գարնանային ամիսներն էին՝ Ժէրմինալ (աճման ամիս) Ֆլորէալ (ծաղիկների ամիս), Պրէրիալ (մարգերի ամիս). ամառնային ամիսներն էին՝ Մէսսիդոր (հունձի ամիս), Տէրմիդոր (տաք ամիս), Ֆրիւկտիդոր (պտուղների ամիս)։ Իւրաքանչիւր ամիս բաժանուած էր երեք տասնեակի, (համապատասխան մեր շաբաթի). տասներորդ օրը կոչւում էր Դեկադի (համապատասխանում է մեր կիւրակի օրուան)։

Համադրելով քրիստոնէականի հետ այս յեղափոխական-հանրապետական օրացոյցը, կըստանանք հետևեալ աղիւսակը.

1. Վանդէմիերի	1—30	համապատասխանում է	Սեպտեմ. 22—Հոկտեմ.	21
2. Բրրումէրի	1—30	»	Հոկտեմ. 22—Նոյեմ.	20
3. Ֆրիմէրի	1—30	»	Նոյեմ. 21—Դեկտ.	20
4. Նիվոզի	1—30	»	Դեկտեմ. 21—Յուն.	19
5. Պլիւվիոզի	1—30	»	Յուն. 20—Փետր.	18
6. Վանտոզի	1—30	»	Փետր. 19—Մարտի	20
7. Ժէրմինալի	1—30	»	Մարտի 21—Ապրիլի	19
8. Ֆլորէալի	1—30	»	Ապրիլի 20 Մայիսի	19
9. Պրէրիալի	1—30	»	Մայիսի 20—Յունիսի	18
10. Մէսսիդորի	1—30	»	Յունիսի 19—Յուլիսի	18
11. Տէրմիդորի	1—30	»	Յուլիսի 19—Օգոս.	17
12. Ֆրիւկտիդորի	1—30	»	Օգոս. 18—Սեպտեմ.	16
Սանկիւլոտային	1—5	»	Սեպտեմ. 17—Սեպտեմ.	21

Այսպէս յեղափոխութիւնը, ձգտելով խզել բոլոր կապերը հին կարգերի, սովորութիւնների ու բարքերի հետ, իր ամեն ինչ յեղաշրջող գործունէութեան մէջ չը կանգնեց կէս ճանապարհին։

Հասարակական կեանքի մէջ նա չը թողեց և ոչ մի ասպարէզ, որտեղ նա չը մացնէր իր բարենորոգիչ ոգին։

Դժբաղտաբար ներքին կուսակցական կռիւները, որ հետզհետէ աւելի սուր կերպարանք էին ստանում, շուտով կործանեցին կօնվէնտի ստեղծագործող աշխատանքները...

Մօնտանեարների մէջ վաղուց արդէն նկատւում էին տարբեր հոսանքներ։ Մինչդեռ նրանք կռւում էին ընդհանուր հակառակորդի՝ ժիրօնդականների դէմ, այդ տարբերութիւնները չէին արտայայտւում. նրանք ծածկւած էին, ինչպէս կայծերը մոխրի տակ։ Սակայն ժիրօնդականների անկումից յետոյ, հակառակ հոսանքները սկսեցին հետզհետէ, յեղափոխութեան զարգացման հետ զուգընթացաբար աճել, դունաւորւել, կազմակերպւել... Վերջապէս պարզ որոշւեց երեք հոսանք։

Առաջին հոսանքի ներկայացուցիչներն էին Մարատը, Հէբերը, Շոմմեռը։ Սրանց համախոհները կողմնակից էին ծայրայեղ դեմոկրատական սկզբունքների և ֆանատիկոս պաշտպաններ պրոլետարիատի շահերի։ Իրանց նպատակներին հասնելու համար, նրանք քարոզում ու պահանջում էին մշտական տերրօրներ։ Այս խմբակի յենակէտը կազմում էր Պարիզի արուարձանների աշխատաւոր մասսան, որ մշտական դեգերում էր անծայր չքաւորութեան մէջ։ Այդ մասսան էր, որ լցնում էր Պարիզի բոլոր ապստամբութիւնների ժամանակ բողոքողների շարքերը։ Մարատի մահից յետոյ, այս խմբակի գլուխը անցաւ Հէբերը, «Père Duchérne» ժողովրդական լրագրի հրատարակիչը։ Երկրորդ հոսանքի ներկայացուցիչներն էին Դանտօնը և նրա բարեկամ երիտասարդ հրապարակախօս Կամիլլ Դեմուլէնը։ Սրանց համախոհները՝ «դանտոնականները», կազմում էին մօնտանեարների չափաւոր մասը։ Լինելով անկեղծ յեղափոխականներ ու հանրապետականներ, սրանք, այնուամենայնիւ, չէին հաւանում ծայրայեղ սարսափի քաղաքականութեանը ու յաճախ բողոքում էին տերրօրների դէմ։ Շնորհիւ դրան ծայրայեղ յեղափոխականները սկսեցին կասկածանքով վերաբերւել սրանց։ Յայտնի է, որ, առհասարակ, փոթորկալից ժամանակներում անվճռողականութիւնը, չափաւորութիւնը չափազանց վտանգաւոր են լինում։ Ինքը Դանտօնը վերջին ժամանակներում, արդէն ակտիւ կերպով չէր գործում. նա տում էր չափն ու սահմանն անցած տերրօրները, և անհամբեր սպասում

էր նրանց վերջանալուն։ Ճախ թեւում էր, որ հակայ յեղափոխականը արդէն յոգնել է յեղափոխութիւնից...

Երրորդ հոսանքի ներկայացուցիչներն էին՝ Ռօբէսպիերը, և նրա երիւ բարեկամները՝ Սէն-Ժիւստն ու Կուտօնը։ Սրանց ձեռքին էր կենտրօնացած կառավարչական դեկը, ընդհանուր յեղափոխական ոյժը։ Ռօբէսպիերը, որին անւանում էին «անկաշառ», վայելում էր վստահութիւն ու յարգանք թէ կօնվէնտում և թէ ժողովրդական լայն մասսաների մէջ։ Նա սրդէն de facto դիկտատօր էր։ Տարւած լինելով ամբողջովին Ժան Ժակ Ռուսսօի իդեալիստական վարդապետութեամբ, Ռօբէսպիերը ձգտում էր վերաստեղծել բոլոր հասարակական կարգերը համաձայն վերացական սկզբունքների։ «Ռօբէսպիերը,—պատմում է Բլոսը,—ասում էր, որ ուզում է նոր պետութեան մէջ եսականութիւնը փոխարինել բարոյագիտութեամբ, պատիւը՝ ազնուութեամբ, սովորութիւնները՝ սկզբունքներով, ցանկութիւնը՝ պարտաճանաչութեամբ, դժբախտութեան արհամարանքը՝ արատի արհամարանքով, յանդգնութիւնը՝ պարծանքով, սնափառութիւնը՝ մեծահոգութեամբ, ոսկու սէրը՝ փառքի սիրով»... «Դեմոկրատական կառավարութեան հիմքը, ասում էր նա, կազմում է առաքինութիւնը, իսկ առաքինութիւնը կեանքի մէջ իրագործելու համար միակ միջոցն է՝ սարսափը» *)։

Յեղափոխութեան յետագայ անցքերը պարզ ցոյց տւին, թէ որչափ խիստ կերպով սխալւեց Ռօբէսպիերը, կարծելով, որ սարսափի միջոցով կարելի է բարեփոխել սոցիալական կարգերը. հէնց սարսափի ծայրայեղ կիրառութիւնն էր, որ բերեց իրեն, Ռօբէսպիերին, դէպի կատարեալ անկումն... Ինչպէս առասպելական Սատուրնն էր ուտում իր երեխաներին, այնպէս էլ ազատութեան տերրօրները կլանեցին իրանց հեղինակներին ու հիմք դրին յետագայ բռնակալութեան...

Այս երեք հոսանքների մշտական շփումներն առաջ բերին և մօնտանեարների կուսակցութեան մէջ կատարեալ պառակտումն։

Բացարձակ պառակտման առիթ տւեց տերրօրի խնդիրը։ 1793 թ. սեպտեմբերի 17-ի օրէնքի շնորհիւ **) տերրօրները դա-

*) Блосъ — Ист. фр. рев. եր, 220.

**) Այդ օրէնքը ուղղւած էր քաղաքականապէս անբարեյոյս տարրերի դէմ. դրանով «կասկածաւոր» էին յայտարարւում՝

ռել էին սովորական երևոյթ։ Համարեա օր չէր լինում, որ մարդիկ մահուան չը դատապարտէին. բանտերը լցուած էին բանտարկեալներով, բայց էլի չէր կարում նոր եկող զոհերի շարանը...

Դանտոնականներն այլևս չը հանդուրժեցին, և տաքարիւն Կամիլլ Դէմուլէնը հանդէս եկաւ մի շարք ծանր մեղադրանքներով յեղափոխական կառավարութեան դէմ։

Համեմատելով իրերի ժամանակակից դրութիւնը հռովմայեցի կայսեր Ներոնի իշխանութեան օրերում տիրող կարգերի հետ, Դէմուլէնը ասում է հետևեալը.

«Եթէ մարդիկ չէին ուզում մահուան պատժի ենթարկուել (Ներոնի իշխանութեան ժամանակ), պիտի բարձրաձայն յայտնէին իրանց ուրախութիւնն ընկերների ու բարեկամների մահուան առթիւ. շատերը նոյնիսկ մաղթանքներ էին կատարում աստուածների առաջ։ Անհրաժեշտ էր գոնէ պահպանել դէմքի ուրախ, բաւական ու խաղաղ արտայայտութիւն. մարդիկ երկիւղ էին կրում, որ չըլինի թէ հէնց այդ երկիւղը կասկածելի երևայ։ Ամէն ինչ զարթեցնում էր բռնակալի կասկածանքը։ Եթէ մի որևէ քաղաքացի ձեռք էր բերում ժողովրդականութիւն, նա համարւում էր կայսեր ախոյեան, և նա կասկածելի էր։ Եթէ մարդ խուսափում էր ժողովրդականութիւնից և ապրում էր մեկուսացած, հեռու հասարակական կեանքից, նա կրկին գրաւում էր իր վրայ ուշադրութիւն, և դա կասկածելի էր։ Եթէ մարդ աղքատ էր, հարկաւոր էր համարւում մի առան-

1) Նրանք, որոնք կողմնակից են բռնութեան ու թշնամի ազատութեան իրենց վարքով, խօսքով ու հեղինակութիւններով.

2) Նրանք, որոնք զրկւում են իրենց հասարակական պաշտօններից կօնվէնտի կամ նրա կոմմիսսարների կարգադրութեամբ.

3) Այն բոլոր հին ազնուականները, որոնք մշտական չեն արտայայտել իրենց համակրանքը յեղափոխութեան և այլն։

Այս օրէնքի միտքը աւելի պարզ լուսաբանում է Բարէրը. «Կասկածաւոր են, ասում էր նա, ազնուականները, կասկածաւոր են պալատականներն ու օրէնսդիրները։ Կասկածաւոր են քահանաները. կասկածաւոր են՝ բանկիրներն ու օտարները, Կասկածաւոր է նա, ով գանգատւում է այն ամենից, ինչ կատարւում է յեղափոխութեան մէջ. կասկածաւոր է նա, ում տխրութիւն են պատճառում մեր յաջողութիւնները։ Գեյսերդ – Исторія фр. рев. եր. 368.

ձին ուշադրութեամբ հետևել նրան։ Չէ՞ որ ոչ ոք այնքան գործունեայ չէ, որքան չունևորը,—և դա կասկածելի էր։ Եթէ մէկը փիլիսոփա էր կամ հռետոր կամ բանաստեղծ, վայ նրան. նա կարող էր աւելի մեծ հռչակ ստանալ, քան նրանք, որոնք կառավարում էին պետութիւնը,—և դա կասկածելի էր։ Մի խօսքով, այդ ժամանակ անուանի մարդիկ և առհասարակ մարդիկ, որոնք վարում էին որևէ պաշտօն, այնքան սակաւ էին մեռնում բնական մահով, որ եթէ մի մարդ չէր մեռնում դահճի ձեռքից, այդ մասին հաղորդում էին մամուլում, և այդ անցքը յիշատակում էին պատմութեան մէջ։ Ներոնի իշխանութեան օրով միայն մի քուրմ մեռաւ բնական մահով իր անկողնու մէջ, և այդ դէպքի վրայ մարդիկ նայում էին, ինչպէս հրաշքի» *)։

Տաղանդաւոր հրապարակախօսի այս սրամիտ անալոգիաները, աներկդիմի ու համարձակ մեղադրանքները, նրա արձակած թունաւոր սլաքները հասան իրանց նպատակին. նրանք մեծ խլրտում առաջ բերին հակառակորդների բանակում... Ռոբէսպիերի և նրա համախոհների զարոյթը չափ չունէր... Բայց երբ Կամիլլ Դէմուլէնը առաջարկեց հիմնել «ողորմածութեան կօմիտէ» և ամենքի համար պարզուեց, որ դա յեղափոխութեան ու տերրորների վերջաւորութեան սկիզբն է, Ռոբէսպիերի խմբակը այլևս չը համբերեց... «Առաքինութիւն» քարոզողները որոշեցին մի հարուածով վերջ դնել իրանց հակառակորդների դիմադրութեանը։ Ներկայանալով կօնվէնտին, նրանք հազար ու մի մեղադրանք թափեցին թէ դանտոնականների և թէ հէրերականների դէմ, և ապա պահանջեցին նոր լիազօրութիւններ «ազատելու հանրապետութիւնն ու յեղափոխութիւնը բոլոր չարագործներից»...

«Քաղաքացիներ, ասաց այդ առթիւ Սէն Ժիւստը, դուք կամեցաք հիմնել հանրապետութիւն, իսկ եթէ դուք միևնոյն ժամանակ չէք ընդունի հանրապետութեան բոլոր պահանջները, այդ դէպքում հանրապետութիւնը անխուսափելիօրէն կը կործանուի և ժողովուրդը կը կորչի նրա աւերակների տակ. Ո՞վ խղճում է ձերբակալուածներին, նա մեղաւոր է հանրապետութեան առաջ, նա արժանի է պատժի։ Արժանի է պատժի նա, ով դէմ է առաքինութեան. արժանի է պատժի և նա, ով հակառակ է տերրորներին»...

*) Блосъ—Ист. фр. рев. եր. 222.

Կոնվէնտը տուեց Ռոբէսպիերի պահանջած լիազօրութիւնները, և այդ վայրկեանից խփեց երկու հակառակ կուսակցութիւնների մահուան ժամը...

1794 թ. մարտի 24-ին հէբերտականների գլխաւոր ղեկավարներին բարձրացրին կախաղան, իսկ ապրիլի 5-ին՝ Դանտոնին, Կամիլլ Դէմուլէնին և նրանց մի քանի ուրիշ համախոհներին:

Երբ Դանտոնի բարեկամներից մէկը, նախազգուշացնելով նրան սպառնացող վտանգի մասին, խորհուրդ տուեց հեռանալ Ֆրանսիայից, Դանտոնը, զայրացած պատասխանեց, իսկական յեղափոխականին վայել խօսքերով. «Հեռանալ, իսկ մի՞թէ կարելի է կշկի հետ տանել և հայրենիքը»... Իսկ երբ յեղափոխական տրիբունալը Դանտոնին յայտնեց նրա մահուան դատավճռի մասին, նա ասաց. «բայց նրանք երկար ժամանակ չեն վայելի իրենց յաղթանակի պտուղները. ես կը քաշեմ իմ յետևից Ռոբէսպիերին.. Ռոբէսպիերը կը յետևի ինձ»...

Եւ նրա գուշակութիւնը շուտով իրագործուեց...

5.

Դանտոնականների ու հէբերտականների մահից յետոյ Ռոբէսպիերը մնաց միակ իշխողը, միակ ազդեցիկ մարդը հանրապետութեան մէջ: Ամենքը նրան էին նայում, նրան հետևում, նրան լսում: Նա էր հանդիսանում կառավարչական իշխանութեան միակ ներկայացուցիչը. նրա ձեռքին էին կենտրոնացած յեղափոխութեան բոլոր թելերը. նա էր իշխում թէ «բարօրութեան կոմիտէում» և թէ կոնվէնտում: Նրան մեծարում, շողոքորթում էին, նրանից երկիւղ էին կրում... Նա՝ կատարեալ դիկտատոր էր...

Ռոբէսպիերի կողքին կանգնած էր նրա երիտասարդ ընկեր Սէն-Ժիւստը: Սա ամբողջովին բաժանում էր Ռոբէսպիերի հայեացքները, երկրպագում նրան, խոնարհւում նրա առաջ... Ռոբէսպիերի նման տարուած լինելով Ռուսսոյի վարդապետութեամբ, նա ձգտում էր իր հոգու ամբողջ թափով ստեղծելու նոր հասարակական կարգեր համաձայն իր վերացական իդէալներին ու գաւառած սկզբունքներին: Սրա համար ևս իւրաքանչիւր արդար հասարակական կազմի հիմնական պայմաններն էին առաքինութիւնն ու սարսափը:

Եւ Սէն Ժիւստը ֆանատիկոսին յատուկ վճռականութեամբ ու հետևողականութեամբ կեանքի մէջ էր անցկացնում իր այդ քաղաքական համոզմունքները: Նրա սիրտն ու զգացմունքներն ամբողջովին ենթակայ էին մի անգամ արդէն ընդունած տեսական սկզբունքներին. նա չը գիտէր ոչ խղճալ, ոչ տատանուել... Եւ Ռոբէսպիերը ու Սէն Ժիւստն իրանց ոգու ամբողջ թափով աշխատում էին իրօք ստեղծելու ժողովրդապետութիւն, օրինակ ունենալով իրանց համար հին յունական ու հռովմէական հանրապետութիւնները...

Նրանք ամեն տեղ՝ թէ կոնվէնտում, թէ «բարօրութեան կոմիտէում», թէ եակոբինների ակումբում անընդհատ խօսում ու քարոզում էին իրանց «առաքինութեան թէօրիան»: Հաւատացած լինելով, որ օրէնսդրական ճանապարհով կարելի է մարդկանց դարձնել առաքինի ու ազնիւ, հասցնել հասարակութիւնը բարոյական կատարելութեան՝ նրանք չէին դադարում կոնվէնտի միջոցով հրատարակել մի շարք հրամանագրեր, որոնք պիտի ներշնչէին ժողովրդական մասսաներին բարոյագիտութեան զգացմունքներ...

Իսկ որպէսզի իրանց իշխանութիւնը, իրանց գերիշխող գիրքը դրած լինեն հաստատուն հիմունքների վրայ, նրանք նոր ոյժ տուին տերրօրներին, մշտական սարսափի մէջ պահելու համար թէ կոնվէնտը և թէ հասարակութիւնը...

Տերրօրները թէ Պարիզում և թէ գաւառներում այնքան սաստկացան, որ հասարեա կորցրին իրանց նշանակութիւնը...

Այժմ կախաղան էին բարձրացնում ոչ միայն միապետականներին, ազնուականներին, հոգևորականներին, ամեն կարգի բուրժուաներին, այլ և ազքատ ժարդկանց, և այնէլ ոչ միայն հանրապետութեան դէմ գործած ծանր յանցանքների համար, այլ և այնպիսի չնչին ու աննշան առիթներից դրդուած, որոնց մասին չարժէր իսկ խօսել, ոչ թէ ամբողջ մի յեղափոխական դատ բաց անել.. Կախաղան էին բարձրացնում առանց զանազանելու սեռն ու հասակը, դիրքն ու յանցանքը... Այսպէս, 1793 թ. դեկտեմբերի 9-ին մահուան են դատապարտուում չորս դերձակներ, 12-ին՝ մի 60 տարեկան կին, իր աղախնու հետ, 1904 յունուարի 8-ին՝ երկու կին, որոնցից մէկը միապետական թերթի բաժանորդագրութիւն ընդունելու համար. փետրուար ամսում՝ ինն կին, որոնցից մէկը դեղ-

ջկուտի էր. մարտի 2-ին՝ մի քահանայ, մի քաղաքագլուխ, երկու գիւղացի. ապրիլի 24-ին՝ 12 կին, որոնցից մէկը 70 տարեկան պառաւ էր, իսկ մի քանիսը 18—22 տարեկան դիւռատի օրիորդներ. մայիսի 8-ին՝ հռչակաւոր քիմիկոս Լավուազիէն. երբ, ի միջի այլոց. վերջինս խնդրեց յեղափոխական ատեանից չորս շաբաթով յետաձգել իր մահուան դատավճռի իրագործումը, որպէսզի հնարաւորութիւն ունենայ մի կարևոր գիւտի համար անհրաժեշտ փորձերն աւարտելու, յեղափոխական ատեանը (տրիբունալը) ցինիկաբար պատասխանեց՝ «մեզ գիտնականներ հարկաւոր չեն»..

Եւ այսպէս տերրօրները Դանտօնի մահից յետոյ ամբողջ չորս ամիս շարունակւում էին անընդհատ ու անխնայ... Օրեր էին լինում, որ զոհերի թիւը հասնում էր 50 և նոյն իսկ 80 հոգու...

Պարիզում գիլիոտինին զոհ գնացին 2750 հոգի, որոնցից միայն 650-ը ունևոր դասակարգից էր, իսկ մնացեալ 2100 հոգին պատկանում էին ժողովրդական չքաւոր խաւերին...

Այս անզուսպ ու անմիտ հալածանքը, որ մղում էր «յեղափոխական» կառավարութիւնը հանրապետութեան երևակայական թշնամիների դէմ, շուտով առաջ բերեց հասարակութեան անխտիր բոլոր խաւերի մէջ անսահման զայրոյթ ու ատելութիւն։ Բանւորական մասսաները չէին կարողանում ըմբռնել, թէ ինչո՞ւ հանրապետութեան թշնամիներին ոչնչացնելու համար անհրաժեշտ է կոտորել աշխատաւորներին՝ գիւղացիներին, կօշկակարներին, դերձակներին, հացթուխներին, սափրիչներին, խոհարարներին...

Եւ Պարիզի արուարձանների աշխատաւոր մասսան, որ մինչև այդ ժամանակ հաւատով ու վստահութեամբ էր վերաբերւում դէպի յեղափոխութիւնը ու նրա առաջնորդին՝ իր «սնկաշառ» Ռօբէսպիերին, սարսափի սիստեմի տակ հետզհետէ սառեց ու յետ քաշուեց թէ յեղափոխութիւնից և թէ Ռօբէսպիերից...

Ժողովուրդը հեծում էր ծայրայեղ աղքատութեան մէջ. նա պահանջում էր հաց ու աշխատանք, իսկ յեղափոխական կառավարութիւնը կերակրում էր նրան միայն տերրօրներով ու սարսափի նոր խոստումներով... Ռօբէսպիերի ճառերը համարեա միշտ վերջանում էին միևնոյն խօսքերով. «վաղը մենք կը սկսենք նորից կռուել մոլութիւնների ու բռնակալների դէմ»..

Եւ դժգոհութիւնը տիրող սիստեմից սկսեց կամաց-կամաց համակել ամենքին...

«Մտածել, որ այդպիսի մի սիստեմ, ասում է պատմաբան Հէյսերը, կարող է երկար տևել, որ նա չի ոչնչացնի ինքն իրեն, կուլ չի տայ իր հեղինակներին, ասել է թէ՝ յուսահատւել մարդկային ընութեան մէջ...

Եւ արդարև. սարսափի ոյժով ստեղծւած կառավարչական սիստեմը անկարող եղաւ դիմանալ առաջին իսկ թշնամական յարձակումներին և, իբրև մի խարխուլ շէնք, նա փուլ եկաւ, իր աւերակների տակ թողնելով կառուցանողներին...

Սարսափի այդ սոսկալի օրերին Ռօբէսպիերը միտք յղացաւ «առաքինութեան» վրայ հիմնւած հանրապետական կարգերի մէջ մտցնել նոր բարեփոխումներ, և նա սկսեց այդ կրօնական ասպարիզից։

Մայիսի 7-ին ներկայանալով կօնվէնտին, նա առաջարկեց ստեղծել նոր կրօնական կուլտ՝ այն է «Բարձրագոյն Էակի» պաշտամունք։

Նա մի երկար ճառի մէջ ապացուցանում էր, որ պետութեան անհրաժեշտ է այդ կուլտը, և հրաշ հնազանդ կօնվէնտը կայացրեց հետևեալ որոշումը, թէև շատերը հոգիս էին ծածկում իրանց արհամարանքն ու հեգնանքը...

«Ֆրանսիական ժողովուրդն ընդունում էր Բարձրագոյն Էակի գոյութիւնը և հոգու անմահութիւնը։

«Նա ընդունում է, որ մարդիկ այն ժամանակ միայն արտայայտած կը լինեն իրենց պատկառանքը դէպի Բարձրագոյն Էակը, երբ նրանք կը կատարեն իրանց մարդկային պարտականութիւնները։

«Պէտք է կատարել յատուկ տօներ, որպէս զի մարդիկ չը մոռանան Բարձրագոյն Էակին»։

Կօնվէնտը յայտարարեց, որ յունիսի 8-ին ամբողջ Ֆրանսիայում պիտի կատարւի Բարձրագոյն Էակի տօնը...

Այդ տօնը Պարիզում տօնւեց չափազանց հանդիսաւոր ու շքեղ կերպով։

Կօնվէնտը այդ օր ընտրեց Ռօբէսպիերին նախագահ. նա իրան պահում էր ինչպէս մի քուրմ...Հանդէսը տեղի ունեցաւ Մարսեան ընդարձակ դաշտում։ Ժողովւած էր մեծ բազմութիւն։ Ներկայ էր

ամբողջ կոնվէնտը։ Գաւառներից եկած պատուիրակները ձեռներին բռնած ունէին մի մի ծաղկի փունջ, իսկ կանայք ու օրիորդներ տանում էին ծաղիկներով լի կողովներ։ Ռոբէսպիերը գնում էր կոնվէնտից մի քանի քայլ առաջ. Նա մի քանի անգամ ճառեր արտասանեց, որոնց մէջ խօսում էր Բարձրագոյն Էակի մասին, մարդկանց հաւասարութեան, ազատութեան մասին, բռնակալների դէմ մաքառելու անհրաժեշտութեան մասին։ Իր վերջին ճառը նա վերջացրեց նոյն անմխիթար խօսքերով.

«Այսօր, ասաց նա, մենք նուիրենք մեզ անկեղծ ուրախութեան հրճւանքին, իսկ վաղը նորից սկսենք մարտել ոճրագործների ու բռնակալների դէմ»։

Շատերը սպասում էին, որ այդ օր տեղի կունենայ քաղաքական coup d'état (պետական յեղաշրջում), որ Ռոբէսպիերը կը յայտարարի իրեն դիկտատոր, և որ այդ օրուանից կը դադարեն տերրորներն ու կրսկսի խաղաղ կեանք։

Սակայն այդ յոյսերը չարդարացան. ընդհակառակը, Ռոբէսպիերը, նկատելով, որ այդ օրուանից նրա հակառակորդները աւելի խիստ թշնամական դիրք են բռնել, որ ընդհանուր դժգոհութիւնն առաւել ևս սաստկանում է, որոշեց աւելի ևս ուժեղացնել սարսափը, ապացուցանելու համար, որ նա մնում է նոյն կրակոտ յեղափոխականը... Եւ յիրաւի. վերակազմած յեղափոխական տեսանը 45 օրուայ ընթացքում կախաղան բարձրացրեց 1285 մարդ...

Սակայն իզուր. այդ ամենը միայն օրհասական ջղաձգութիւններ էին. նրա գերիշխանութեան ժամն արդէն խփել էր... Տերրորները, ընդհակառակը, աւելի արագացրին նրա անկումը...

Հասարակութեան խուլ դայրոյթը արդէն պատրաստ էր դուրս պոռթկալու։ Թէ կոնվէնտում և թէ կոմիտէներում արդէն կազմակերպւած էր ուժեղ օպոզիցիա (դիմադրական ոյժ) Ռոբէսպիերի դէմ։ Վերջինս էլ իր կողմից որոշել էր պատժելու իր գլխաւոր հակառակորդներին, և չը քաշուեց նոյն իսկ այդ մասին պարզ ակնարկներ անելու եակոբինների ակումբում, ուր նա դեռ վայելում էր որոշ չափով ազդեցութիւն։

Ռոբէսպիերի այդ ակնարկները ստիպեցին նրա թշնամիներին մեծ փութկոտութեամբ կազմակերպել և միահամուռ ուժերով գրոհ տալ տեսլի դիկտատորի դէմ...

Այդ նշանաւոր ընդհարումը տեղի ունեցաւ յեղափոխութեան երկրորդ տարուայ տերմիդորի 9-ին (1794 թ. յուլիսի 27-ին). կոնվէնտը այդ օր բացարձակապէս ապստամբուեց Ռոբէսպիերի ու նրա ստեղծած կարգերի դէմ...

Կոնվէնտի նիստը բացուեց Սէն-Ժիւստի մեղադրական ճառով, որի նպատակն էր ձերբակալել տալ իրանց գլխաւոր հակառակորդներին։

Բայց հաղիւ Սէն-Ժիւստն արտասանում է մի քանի խօսք, երբ նրան ընդհատում է Տալիանը հետևեալ խօսքերով.

«Ոչ մի ազնիւ քաղաքացի չէ կարող առանց արտասուքի տեսնել այն բոլոր դժբախտութիւնները, որոնք հասել են մեր հայրենիքին։ Երկպառակութիւնները տիրում են ամէնուրեք։ Այսօր նորից կամենում են յարձակում գործել, որպէսզի հայրենիքը գլորեն արհաւիրքների անդունդը։ Ես պահանջում եմ. որ քողը ամբողջովին պատուի»։

«Անհրաժեշտ է, անհրաժեշտ է,»—թնդում է ամբողջ կոնվէնտը։

Մինչդեռ Սէն-Ժիւստը շանթահար եղածի պէս մնում է տեղում քարացած, ամբիոն է բարձրանում մի ուրիշ հրեատոր՝ Բիլիո-Վարէնը.

«Երէկ եակոբինների ակումբում մտադրութիւն էին յատնում ոչնչացնելու ազգային կոնվէնտը. երէկ ես այնտեղ տեսայ մարդկանց, որոնք սոսկալի լուտանքներ էին թափում նրանց գլխին, որոնք երբէք չեն դաւաճանել յեղափոխութեան։ Ես տեսնում եմ այստեղ բարձունքներում նստած դրանցից մէկին, որը սպառնում էր ժողովրդի ներկայացուցիչներին. ահա նա»...

«Ձերբակալել դրան, ձերբակալել»—որոտաց միաձայն կոնվէնտը...

Ռոբէսպիերը ջանք էր անում ամբիոն բարձրանալ խօսելու, արդարացնելու իրան, սակայն իզուր. նրան չէին թողնում... «Թող կորչի բռնակալը»—աղաղակների տակ յուզած ու այլայլուած Ռոբէսպիերը ընկնում է իր աթոռի վրայ...

Անմիջապէս ձերբակալում են նրան և դուրս տանում... Ռոբէսպիերի վերջին խօսքն է լինում «Հանրապետութիւնը կորած է, աւազակները յաղթեցին»...

Հէնց որ կոմմունան լուր է առնում Ռոբէսպիերին հասած

ժբախտութեան մասին, իսկոյն փորձ է անում ապստամբեցնել ազգային գւարդիան և ազգաբնակութիւնը կոնվէնտի դէմ։—Սակայն կոմմունայի բոլոր ջանքերն անցնում են ապարդիւն։ Ամեն բան վերջնականապէս տանուլ էր տրուած։

«Պարիզի բոլոր 48 սեկցիաներից, ասում է Բլոսը, 18-ը հանդէս եկան պաշտպանելու կոնվէնտը, իսկ 13-ը՝ Ռոբէսպիերին. մնացեալ սեկցիաներն անվճռողական դրութեան մէջ էին, իսկ Սէնտ-Անտուանի արուարձանը չէր ուզում ոչ մէկի կողմն էլ անցնել. նա ուզում էր կուել բացառապէս հանրապետութեան համար։ Բանւորները հանրապետութիւնը «անկաշառ» Ռոբէսպիերից բարձր էին դասում»։

Կոնվէնտի կարգադրութեամբ Ռոբէսպիերին և նրա մի քանի ապստամբ ընկերներին տարան բանտ։

Յաջորդ օր, տերմիդորի 10-ին (յուլիսի 28-ին) Ռոբէսպիերը, Սէն Ժիւստը, Կուտոնը, ազգային գւարդիայի հրամանատար Անրիոնն և էլի 17 հոգի նրա համախոհներից զոհ գնացին իրանց փառաբանած գիլիոտինին...

Երբ Ռոբէսպիերի գլուխը ընկաւ, լսեցին ծափահարութիւններ, որ տևեցին մի քանի րոպէ...

«Այսպէս ընկաւ Մակսիմիլեան Ռոբէսպիերը, ասում է Բլոսը,—որ մօտ չորս ամիս Ֆրանսիայի դիկտատորն էր։ Նրա պետական գաղափարը նոյնքան սահմանափակ էր, որքան նրա կառավարչական սիստեմը դաժան։ Նա իրան զոհեց առաքինութեան վրայ հիմնուած պետութեան գաղափարի համար, բայց իր հակառակորդների դէմ մղած կուի մէջ անողորմ էր ու նենգ։ Նա մոռացել էր, որ փիլիսոփայութեան վերացական հասկացողութիւններն իրագործւում են միայն այն դէպքում, երբ գոյութիւն ունին նրանց համապատասխան նիւթական պայմաններ» *)։

6.

Ռոբէսպիերի մահից յետոյ սկսւեց հակա-յեղափոխութիւնը իր աւելի սոսկալի սարսափներով... Միւս օր արդէն կոնվէնտը մահւան դատապարտեց կոմմունայի 70 անդամներին, որոնք մասնակցել էին ապստամբութեան, և 12 հոգի էլ Ռոբէսպիերի համախոհներից...

*) В. Блосъ—«Ист. фр. рев.», եր. 248.

Տերմիդորեան կուսակցութիւնը,—այսպէս էին անուանում տերմիդորի 9-ին կատարուած յեղաշրջման հեղինակները, կարճ ժամանակամիջոցում ոչնչացրին Ռոբէսպիերի կուսակցութիւնը։ Սակայն, իրանք չը կարողացան իրանց տարած յաղթութեան պտուղները վայելել... Կոնվէնտի աջակողմեան բէակցիոն տարրերը, աջակցութիւն ստանալով գաղթական արքայականներից, որոնք ահագին խմբերով վերադառնում էին հայրենիք, իրանց ձեռքն առան կառավարչական դեկը, և այդ օրւանից սկսւեց մի կատաղի ու անզուսպ բէակցիա, որի աւերիչ հողմը կործանեց ամեն ինչ։ Միապետականները, տարւած իրանց տենչանքներով՝ վերականգնել հին Ֆրանսիան, լցւած վրէժխնդրութեան զգացմունքով, սկսեցին անխնայ ու վայրենի հալածանք յեղափոխութեան ու հանրապետութեան դէմ... Կարմիր տերրօրներին փոխարինեցին սպիտակ տերրօրները, որոնք աւելի անմիտ ու աւելի անգութ էին... Ամբողջ Ֆրանսիան լողում էր արեան գետերի մէջ... Արիստոկրատիայի այլասերւած սերունդը՝ «ոսկի երիտասարդութիւնը», զինւած հաստ մահակներով, որսում էին հանրապետականներին ու անասելի տանջանքների ենթարկում... Մեռածներին անգամ հանգիստ չէին թողնում։ Այսպէս «ոսկի երիտասարդութիւնը», Պանթէոնից հանելով Մարատի աճիւնը, գցեց կոյուղու մէջ... Կոնվէնտը ամբողջովին կլանւած էր կուսակցական կռիւներով և յեղափոխութեան ու հանրապետութեան հալածանքով։ Նա փոխեց նախկին որոշումներն ու օրէնքները, վերակազմեց յեղափոխական տաճանը, ազատեց մի շարք հակա-հանրապետական բանտարկեալներին, վերադարձրեց հալածւած ժիրոնդականներին կոնվէնտ և այլն, և այլն։

Մինչ այդ՝ ժողովրդի դրութիւնը շարունակում էր մնալ նոյն անմխիթար պայմանների մէջ։ Կենսական մթերքների մշտական պակասութեան մէջ դեգերող ժողովուրդը չը կարողացաւ տանել տիրող անարխիան, և նորից պարզեց ապստամբութեան դրօշը...

1795 թ. մայիսի 20-ին բանւորական մասսաները ներս խուժեցին կոնվէնտ «Հաց եւ 1793 թ. սահմանադրութիւն» աղաղակներով... Կոնվէնտը զինւորական ոյժով ցրեց ապստամբներին և սաստկացրեց հալածանքը... Այդ միջոցին մոնտանեարների կուսակցութեան մնացորդներն էլ ամբողջովին զոհ գնացին գիլիոտինին...

Երբ Կոնվէնտը այդպիսով ճնշեց իր բոլոր հակառակորդներին, նա ձեռնամուխ եղաւ նոր սահմանադրութեան մշակման։

1795 թ. օգոստոսի 22-ին նա յայտարարեց այդ սահմանադրութիւնը, որ թէև անուանւում էր հանրապետական, սակայն զուրկ էր դեմոկրատական բոլոր հիմունքներից։ Նոր սահմանադրութեամբ ընտրողական իրաւունքը պատկանում էր սեփականատէրերին. ընդունուած էին երկաստիճան ընտրութիւններ։ Պարլամենտը բաղկացած էր այժմ երկու պալատներից՝ «հինգ հարիւրի խորհրդից» և «ծերակոյտից» (Coseil des anciens)։ Բացի այդ կար և մի ուրիշ մարմին, որ բաղկացած էր հինգ անդամներից. դա կոչւում էր դիրեկտորիա. դիրեկտորիայի ձեռքին էր կենտրոնացած կառավարչական իշխանութիւնը, որ պատասխանատու էր ժողովրդի ներկայացուցիչների առաջ։ Պահպանուած էին և առանձին մինիստրութիւնները։

Այսպիսով ժողովրդական մասսաները նորից զրկուեցին քաղաքական իրաւունքներից, և պետական իշխանութեան դեկը անցաւ ունևոր դասակարգերին...

Սակայն, եթէ այս սահմանադրութիւնն իր հակաժողովրդական սկզբունքներով բաւարարութիւն չը տուեց բանւորութեանը, նա միևնոյն ժամանակ մեծ դժգոհութիւն առաջ բերեց նաև արքայականների շրջաններում։ Մինչև այդ ժամանակ սրանք յոյսեր էին տածում, որ նոր սահմանադրութեան միջոցով կարելի կը լինի վերականգնել միապետական կարգերը, բայց այժմ տեսնելով, որ սահմանադրութիւնը չէ արդարացնում իրանց յոյսերը, դիմեցին զինուած ապստամբութեան...

1795 թ. վանդէմիերի 13-ին (հոկտ. 4-ին) ապստամբ արքայականները, մօտ 40,000 հոգի, յարձակուեցին կոնվէնտի վրայ։ Վերջինս իր պաշտպանութիւնը յանձնեց երիտասարդ զինուորական, Նապոլէօն Բոնապարտին. սա թէև իր ձեռքի տակ ունէր միայն 7000 զինուոր, բայց յաջողութեամբ ցրեց արքայականներին ու ազատեց կոնվէնտը...

Այսպէս կոնվէնտը յաղթանակող հանդիսացաւ թէ բանւորների և թէ միապետականների դէմ. երկու ծայրայեղ կուսակցութիւնները, պարտութիւն կրելով, հեռացան՝ քաղաքական ասպարիզից, թողնելով պետական իշխանութիւնը միջին դասակարգին՝ բուրժուազիային։

1795 թ. դեկտեմբերի 4-ին (հոկտ. 25-ին) կոնվէնտը, կատարելով նոր սահմանադրութեան համաձայն պարլամենտական ընտրութիւնները, ցրուեց։

Այսպէս վերջացաւ դեմոկրատական հանրապետութեան շրջանը և սկսուեց բուրժուազական հանրապետութեան շրջանը, որ նոյնպէս երկար չը շարունակուեց, տևեց միայն 3 տարի՝ մինչև 1799 թ։

Այս ժամանակամիջոցում տեղի ունեցաւ երկրին մի փորձ խլել բուրժուազիայի ձեռքից իշխանութիւնը ու հաստատել ժողովրդական հանրապետական կարգեր, սակայն դա էլ անյաջող անցաւ։

Այդ փորձը արեց կոմմունիստ Բաբեոֆը։

Բաբեոֆը «Le tribun du peuple» թերթի խմբագիրն էր։ Նա միշտ իր օրգանում յարձակւում էր բուրժուազիայի վրա, աշխատելով պաշտպանել ժողովրդական չքաւոր խաւերը։ Նա ասում էր, որ անհրաժեշտ է ոչնչացնել ժողովրդի չքաւորութիւնն ու տգիտութիւնը, հարկաւոր է իրականացնել իսկական հաւասարութիւն։ Մասնաւոր սեփականութիւնը, քարոզում էր նա, կազմում է բոլոր հասարակական չարիքների աղբիւրը։ Գոյքը՝ աւազակների ձեռքին է, իսկ օրէնքը՝ զօրեղների։

Արեգակը լոյս է տալիս ամենքին, իսկ երկիրը չէ կազմում ոչ ոքի սեփականութիւն։ Հողը և առհասարակ բոլոր անշարժ կալուածները պիտի անցնեն հասարակութեան ձեռքը։ Իւրաքանչիւր քաղաքացի պիտի աշխատի, նրա աշխատանքի արդիւնքը պէտք է յանձնել ընդհանուր պետական պահեստներին, որտեղից քաղաքացիները կարող են ստանալ իրանց անհրաժեշտ պիտոյքները։ Երեխաները պիտի դաստիարակուեն ազգային կրթական հիմնարկութիւններում։ Պէտք է, վերջապէս, վերականգնել 1794 թ. սահմանադրութիւնը։

Բաբեոֆի այս քարոզած մտքերը տարածելով ստեղծեցին համախոհների մի սուաբ բազմութիւն, որոնց միջոցով և նա կազմակերպեց դաւադրութիւն, նպատակ ունենալով ապստամբեցնել ժողովուրդը, պարզել յեղափոխութեան դրօշը և խլել բուրժուազիայից քաղաքական իշխանութիւնը։

Դաւադրութիւնն արդէն կազմակերպուած էր, ապստամբութիւնը պիտի պայթէր, երբ նախընթաց օրը՝ 1796 թ. մայիսի 10-ին պրովոկացիայի շնորհիւ ձերբակալուեց ինքը Բաբեոֆը։

Այնուամենայնիւ նրա համախոհները սեպտեմբերի 9-ին արեցին վերջին յուսահատական փորձը՝ բարձրացնել ապստամ-

բութիւնը, բայց անյաջող... Դաւադիրներին ձերբակալեցին ու յանձնեցին զինուորական դատի։ 86 հոգի դատապարտուածներից 31 հոգի ենթարկուեցին գնդակահարութեան... Ինքը Բաբեոֆը ևս դատապարտուեց մահուան։

Բաբեոֆի մահից յետոյ նրա թղթերի մէջ գտան մի կոչ, որի մէջ ամփոփուածն են նրա քարոզած մտքերի էական կէտերը

«1. Բնութիւնը իւրաքանչիւր անհատի տուել է հաւասար իրաւունք օգտուելու ամեն տեսակ գոյքով ու կայքով։

«2. Հասարակութեան նպատակն է՝ պաշտպանել այդ հաւասարութիւնն ու ընդհանուր աշխատանքով բաւականացնել հասարակական բարիքները։

«3. Բնութիւնը պարտք է դրել իւրաքանչիւր մարդու վրայ աշխատելու. ով խուսափում է աշխատանքից, նա յանցանք է գործում։

«4. Աշխատանքն ու աշխատանքի արդիւնքը պատկանում են ընդհանուրին։

«5. Կեղեքումը նրանումն է, որ մէկը աշխատում է մինչև իր ոյժերի սպառելը և միևնոյն ժամանակ զուրկ է ամեն ինչից, մինչդեռ միւսը, կեանքից կշտացած, ապրում է անգործութեան մէջ։

«6. Յանցանք է հողի կամ արդիւնաբերութեան արդիւնքի բացառապէս իրան իւրացնելը։

«7. Արդար հիմունքների վրայ դրուած հասարակական կազմի մէջ չը պէտք է լինեն ոչ հարուստներ, ոչ էլ աղքատներ։

«8. Այն հարուստները, որոնք չեն ցանկանում հրաժարուել իրանց կարողութեան մի որոշ մասից կարօտեալների օգտին, նրանք ժողովրդի թշնամիներ են։

«9. Ուսումը պիտի լինի ընդհանուր»...և այլն։

Բաբեոֆի դաւադրութիւնը վերջին փորձն էր, որ արուեց յանուն ժողովրդական իրաւունքների, յանուն աշխատաւորական մասսայի բարօրութեան։ Դրանից յետոյ ամբողջ քաղաքական իշխանութիւնը կենտրոնացաւ բուրժուազիայի ձեռքում։ Սակայն վերջինիս իշխանութիւնն էլ երկար չը տեւեց. նա ստիպուած եղաւ զիջելու կառավարչական դեկը մի նոր ոյժի. այդ ոյժն էր Ֆրանսիայի աշխարհակալ զօրքը և նրա հանճարեղ հրամանատար Նապոլէօն Բոնապարտը...

1799 թ. նոյեմբերի 10-ին Նապոլէօնը զօրքի ոյժով ցրեց ժողովրդական ներկայացուցչութեան վերջին մնացորդները, իսկ 1804 թ. յայտարարեց իրան Ֆրանսիայի միահեծան կայսր...

Ժողովուրդը, որ քաղաքականապէս յոգնած էր, որ պահանջում էր միայն խաղաղութիւն ու հանգստութիւն, մնաց բոլոր այս պետական յեղաշրջումների միջոցին լոկ հանդիսատես, լուռ վկայ...

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենք համառօտ ու ընդհանուր գծերով պատմեցինք, թէ ինչպէս յառաջ եկաւ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, որոնք էին նրա պատճառները, ինչպէս նա ընթացաւ, ինչպէս նա կործանեց հին աւատական կարգերն ու նրանց տեղ դրեց նոր հիմնարկութիւններ ռաժկտիւար սկզբունքներով։

Մենք տեսանք նաև, թէ ինչպէս յեղափոխութիւնը վերջացաւ ու նրա հետ միասին հանրապետական սկզբունքները նորից տեղի տուին միապետական կարգերին. ինչպէս ժողովուրդը, որ մեծ զոհաբերութեամբ ազատուել էր աւատական ճորտութիւնից, նորից ընկաւ Նապոլէօնի լծի տակ... Թուում է, որ յեղափոխութիւնն անցաւ ապարդիւն, որ Ֆրանսիական ժողովրդի ամբողջ տասը տարուայ ընթացքում կատարած հերոսութիւնները մնացին անհետևանք, —իսկ քարոզած ազատութեան, հաւասարութեան վսեմ գաղափարներն օդը ցնդեցին առանց մի շօշափելի օգուտ բերելու հասարակութեան։

Բայց ոչ։

Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը վաղանցուկ երևոյթներից չէր. նա ունեցաւ համաշխարհային նշանակութիւն։ Այդ մեծ յեղափոխութիւնով սկսուեց պատմական մի նոր դարաշրջան։ Նրա ազդեցութիւնն ոչ միայն Ֆրանսիայի, այլև ամբողջ Եւրոպայի սոցիալ-քաղաքական կեանքի վրայ հսկայական էր։ Չընայած որ քաղաքական իշխանութիւնն անցաւ բուրժուազիայի ձեռքը, այնուամենայնիւ աշխատաւոր ժողովուրդը ևս օգտուեց ստեղծուած նոր կարգերից։

Ֆրանսիական յեղափոխութիւնն ոչնչացրեց բոլոր աւատական հիմնարկութիւնները, որոնք հիմնուած էին դասային մենարտօնութեան սկզբունքի վրայ, և նրանց տեղ ստեղծեց նոր քաղա-

քական ու հասարակական կազմ, որ գրած էր դասակարգերի հաւասարութեան վրայ։

Իւրաքանչիւր անհատ օրէնքի առաջ վայելում էր կատարեալ հաւասարութիւն. նրա առաջ բաց էին հասարակական կեանքի բոլոր ասպարէզները։ «Իւրաքանչիւր զինուոր, ասում էր Նապոլէոնը, կրում է իր պայուսակի մէջ մարշալական գաւազան»... Ժողովուրդը իրաւունք էր ձեռք բերել մասնակցելու պետական օրէնսդրութեանը, հնարաւորութիւն ստացել ազդելու քաղաքական գործերի ընթացքի վրայ։

Տնտեսական ասպարիզում ֆրանսիական յեղափոխութիւնը, ազատելով արդիւնաբերութիւնն ու առևտուրը միջնադարեան աւատական խեղդող կապանքներից, մեծ դարկ տուեց նրանց զարգացմանը։ Ժամանակակից կապիտալիստական տնտեսութեան հսկայական նուաճումներն անհնարին կը լինէին առանց ֆրանսիական յեղափոխութեան։

Աշխատաւոր մասսան, որ իր ուսերի վրայ տարաւ յեղափոխութիւնը, զգաց իր ոյժը, գիտակցեց իր դասակարգային շահերը և ներշնչեց լաւագոյն ապագայի յոյսերով։

Ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան բարձր սկզբունքները Ֆրանսիայից տարածուեցին ամբողջ աշխարհը և դարձան մարդկութեան վսեմ ձգտումների իդէալը։

Այդ իդէալին են ձգտում այսօր ևս բոլոր ժողովրդի հալածած, կեղեքած ու տանջած աշխատաւոր մասսաները, որոնց և մեծ խրախուսանք է բերում ֆրանսիական մեծ յեղափոխութեան վեհ յիշատակը։

Գ. Գ. Հայոց
Հոլիսիմեան Դպրոց
Եկեղ.-ժիսակ. (Օրիորդաց)

Հայաստանի Ազգային գրադարան
NL0431374